


Չ ա վ ա ի ս ք ռ
Հովհաննես Մկրտչյանի
հուշերում



ԵՐԵՎԱՆ 2010

9(97.325)

9-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Զավախքը

Հովհաննես Մկրտչյանի հուշերում

4327

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԺԵԱՆ
ՄԱՏԵՆՈՒՄ

58



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

58

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱՄ պատմության ինստիտուտ
2010



ՀՏԴ 941(479.25):94/99
ԳՄԴ 63.3(23)+63.3
Ջ - 360

Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհուրդը

Առաջաբանը և ծանոթագրությունը՝ Աշոտ Մելքոնյանի
Կազմող և խմբագիր՝ Լուիզա Հովհաննեսի Մկրտչյան

Ջ – 360 «Ջավախքը Հովհաննես Մկրտչյանի հուշերում».- Եր: ՀՀ ԳԱԱ
պատմ. ինստ., 2010- 157 էջ:

Ժողովածուում զետեղված են ախալքալաքցի մտավորական,
իրավաբան Հովհաննես Բարսամի Մկրտչյանի թողած հուշագրու-
թյունները, հոդվածները, նամակները և փաստաթղթերը, որոնք շոշա-
փում են Վրացական ԽՍՀ Ախալքալաքի և Բոգղանովկայի շրջաննե-
րում 30-ականների շինծու դատական գործընթացների, գյուղի կոլեկ-
տիվացման, ազգային հարցի «լուծման» լեմինյան քաղաքականու-
թյան և բազմաթիվ այլ խնդիրներ:

ISBN 978-99941-73-44-0

ՀՏԴ 941(479.25):94/99
ԳՄԴ 63.3(23)+63.3

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ



Հովհաննես Մկրտչյան
(1899 – 1984)

**Նվիրում եմ հայրիկիս՝
Հովհաննես Մկրտչյանի պայծառ հիշատակին**

Լուիզա Մկրտչյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդային իշխանության վերջին տարիներին և հատկապես 1990-ական թվականներից սկսած զգալի աշխատանք կատարվեց Ջավախքի պատմության հետազոտության ուղղությամբ: Ազատվելով քաղաքական կապանքներից՝ զանազան հետազոտողներ հնարավորություն ստացան ներկայացնելու մոռացված հայկական այդ գողտրիկ երկրամասի պատմության մանրամասները: Նման աշխատանքի, հատկապես նախախորհրդային ժամանակաշրջանի համար որպես սկզբնաղբյուր ծառայեցին հայ և օտար մատենագիրների երկերը, արխիվային վավերագրերը, ժամանակի մամուլը, տպագիր և այլ բնույթի նյութերը: Սակայն նույնը Ջավախքի խորհրդային տարիների պատմության սկզբնաղբյուրների մասին ասել հնարավոր չէ, թեև այդ դարաշրջանից մեզ բաժանում է ավելի քիչ ժամանակ: Բանն այն է, որ խորհրդային վարչակարգի պայմաններում գրեթե անհնարին էր դառնում սուր ու վիճահարույց խնդիրների, այդ թվում ԽՍՀՄ-ում ազգային հարցի վերաբերյալ պետական համապատասխան ատյաններից ստանալ անաչառ լրատվություն: Այսօր էլ, երբ պետանվտանգության մարմինների արխիվային շատ ֆոնդեր մնում են չգաղտնագերծված, մեծամասնական թեմաների հետազոտությունը բաց-պաշտոնական աղբյուրներով չի կարող բավարար համարվել: Բարեբախտաբար, վերջին տասնամյակներում ի հայտ եկան ստալինյան բռնությունների վերաբերյալ ոչ միայն գիտական ուսումնասիրություններ, այլև տվյալ ժամանակաշրջանի բազմաթիվ բռնադատվածների հուշագրություններ, որոնք նոր լույս սփռեցին ինչպես ողջ խորհրդային երկրի, այնպես էլ Հայաստանի 20-30-ական և հետպատերազմյան 1946-53 թվականների պատմության մութ էջերի վրա:

Այդուհանդերձ, Ջավախքի վերոհիշյալ պատմափուլի բազմաթիվ հիմնահարցերի հետազոտության խնդիրը մնաց բաց. նախ Ախալքալաքի և նրանից 1930 թ. անջատված Բոզդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) վարչական շրջաններին վերաբերող համապատասխան նյութերն այդպես էլ չգաղտնագերծվեցին, իսկ 1990-ական թվական-

ների սկզբին Վրաստանում սկսված քաղաքացիական պատերազմի օրերին, պաշտոնական աղբյուրների հավաստմամբ՝ Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայում գտնվող պետանվտանգության մարմինների արխիվի նյութերը, հրկիզվեցին: Թերևս նաև այս հանգամանքներով էլ կարելի է բացատրել Ջավախքի նախապատերազմյան և հետպատերազմյան տարիների բռնաճնշումների վերաբերյալ գիտաճանաչողական գրականության ներկա աղքատիկ վիճակը: Բավական է նշել, որ ցայսօր հրապարակի վրա կարելի է գտնել միայն առանձին ուսումնասիրողների հատուկենտ գրքույկներ ու հոդվածներ, որոնցում իրենց ծննդավայրերի ակնարկային պատմության ընդհանուր հենքի վրա հեղինակները համեստ անդրադարձ են կատարել այդ հարցին՝ գերազանցապես հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի ականատեսների վկայությունների վրա:

Այսօր այդ խնդրի ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական ու ճանաչողական նշանակություն: Հիմնահարցի հետազոտությունը բերում է այն համոզման, որ ազգային հողի վրա քաղաքական բռնաճնշումները Խորհրդային Միությունում ավելի սուր բնույթ են ստացել էթնիկապես միատարր այն տարածաշրջաններում, որոնք գտնվել են իրենց ազգային-միութենական հանրապետության սահմաններից դուրս: Այդ իմաստով հայկական մի շարք տարածքներ՝ Ղարաբաղը, Նախիջևանը, Ջավախքը ևս բացառություն չեն կազմել: Այդպիսի շրջանների հայությունը մշտապես ենթարկվել է ազգային խտրականության ոչ միայն ստալինյան բռնությունների, այլև դրանից հետո ընկած ժամանակաշրջանում:

Ջավախքի խորհրդային տարիների պատմության սպիտակ էջերի լուսաբանման համար հույժ կարևոր են ախալքալաքցի մտավորական, իրավաբան Հովհաննես Բարսամի Սկրտչյանի թողած հուշագրությունները¹, հողվածները, նամակները և փաստաթղթերը, որոնք տարիներ շարունակ պահվել են նրա ընտանիքի անդամների մոտ:

¹ 1937 թ. Հովհաննես Սկրտչյանը, չեկիստների ձեռքը չընկնելու մտավախությամբ՝ իր օրագիրն այրել է: Բայց կարողացել է շատ մանրամասներ հիշողությամբ վերականգնել և կրկին հանձնել թղթին:

դրանց մի մասը, որոշակի խմբագրական աշխատանքից հետո, ժողովածուի տեսքով մեզ սիրահոժար տրամադրել է իրավաբանի դուստրը՝ պատմաբան Լուիզա Մկրտչյանը:

Ժողովածուում զետեղված նյութերը բազմաժանր են. դրանք խորհրդային երկրի պատմության ընդհանուր հետնախորքի վրա շոշափում են բազմապիսի հարցեր՝ Վրացական ԽՍՀ Ախալքալաքի և Բոգղանովկայի շրջաններում 30-ականների շինծու դատական գործընթացներ, գյուղի «սոցիալիստական» վերակառուցում, այն է՝ բռնի կոլեկտիվացում, կոմունիստական կուսակցության հաստատած ամբողջատիրական համակարգի դրսևորումներ, ազգային հարցի «լուծման» լենինյան քաղաքականության սուր քննադատություն և այլն:

Գիտական արժանահավատության տեսակետից կարևորվում են հատկապես կեղծ դատական գործընթացներին վերաբերող նյութերը: Լինելով իրավաբան և 1931-1939 թթ. զբաղեցնելով Ախալքալաքի և Բոգղանովկայի շրջանների ժողդատավորի պաշտոնը, Հովհ. Մկրտչյանն ականատեսի հավաստիությամբ նկարագրում է շրջանում ստեղծված բարոյահոգեբանական ծանր իրավիճակը, տարբեր գյուղերում անմեղ մարդկանց նկատմամբ շինծու դատական գործընթացները, այն է՝ քաղաքական դատավարությունները: Այդ նյութերը հեղինակը ներկայացնում է առանձին հոդվածների տեսքով:

Ոչ առանց ցավի ու վրդովմունքի են ընթերցվում հեղինակի գրառումները Գորելովկա և Խանչալի գյուղերի բնակիչների, Ուժնա-նայից (փաստաթղթում՝ Ուչնանա) Ամիրխանյանների, Փոքր Գոնդու-րայից Վահագն Վարդապետյանի² դատավարության, Հովհ. Մկրտչյանի հարազատ եղբոր՝ «դաշնակցական» Հակոբի ձերբակալության, ինչպես և Մկրտչյանների ընտանիքի մյուս անդամների նկատմամբ զանազան հալածանքների մասին:

Քաղաքական մեծ համարձակություն դրսևորելով, Մկրտչյանը կարողացել է պետանվտանգության մարմինների հետապնդումների պայմաններում իսկ գաղտնի պահպանել քաղաքական մի քանի դա-

² Վահագն Վարդապետյանը Երևանի նախկին փոխքաղաքապետ Վարդան Վարդապետյանի պապի եղբայրն է:

տավարությունների մեղադրական եզրակացությունները և դրանք այսօր թողնել սերունդների դատին: Այդ տեսանկյունից հատկապես արժեքավոր է Բոգդանովկայում 1939 թ. մայիսի 10-ին խանչալեցի յոթ անձանց (Արուֆիկ Սերոբյան, Բագրատ Վաղանյան, Նազար Բոդյան, Անտոն Մահտեսյան³, Գրիգոր Բոդյան, Վարդան Վարդանյան և Սպիրիդոն Վարդանյան) նկատմամբ հնչեցրած մեղադրական եզրակացության ամբողջական տեքստը:

Այս բացառիկ փաստաթղթի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ մեղադրանքը յուրաքանչյուր «մեղադրյալի» հասցեին սարքված է միևնույն սցենարով և շինծու ապացույցներով: Բոլոր անձինք մեղադրվում են գրեթե նույն 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության բանակում ծառայելու, Փոքր խանչալիում հոգևորական Սահակ Վարդապետյանի ստեղծած դաշնակցական կազմակերպությանն անդամակցելու, կուլակների դասին պատկանելու, վնասարարական ու ահաբեկչական գործողություններ նախապատրաստելու համար՝ անօրինական զենք ձեռք բերելու և նմանատիպ այլ «մեղքերի» մեջ:

«Մեղադրականի» բովանդակությունից դժվար չէ կռահել, որ այդ գործով դատապարտյալներին ծեծի ենթարկելով ստիպել են խոստովանել իրենց «հանցանքը»: Չավեշտական է, որ միաժամանակ նույն եզրակացության վերջում նշված է, որ «սույն գործի կապակցությամբ ոչ մի իրեղեն ապացույց չկա»:

Ընթերցողը փաստաթղթի տակ հանդիպում է նաև Վրացական ԽՍՀ Ներքին գործերի նախարարության Բոգդանովկայի շրջանային բաժանմունքի պետ ոմն Սաբոյի ստորագրությամբ: Շնորհիվ Սկրտչյանի վկայակոչած բազմաթիվ փայտերի՝ բացահայտվում են ստալինյան ու բերիայական մարդակեր մեքենայի մի օղակը կազմող այս օտարազգի չեկիստի սահմուկեցուցիչ գործունեության որոշակի դրվագներ:

³ Անտոն Մահտեսյանը ՀՀ Ներքին գործերի նախկին փոխնախարար Արարատ Մահտեսյանի պապն է:

Չարմանալի է, որ իրավաբան Սկրտչյանը, օգտագործելով իր պաշտոնական դիրքը և գործի դնելով իր մասնագիտական ունակությունները, դաժան 30-ականներին կարողացել է իր ուժերի ներածին չափով պաշտպանել նաև անմեղ մարդկանց շահերը, առանձին դեպքերում հասնել նրանց արդարացմանը: Այդ և նմանօրինակ գործելակերպի համար Սկրտչյանը, զգալով մոտալուտ հաշվեհարդարի հավանականությունը, հարկադրված է եղել լքել հայրենի եզերքը և տարիներով մնալ ընդհատակում:

Այդ օրերի մասին նա գրում է. «1937 թ. գարնանը ամբողջ երկրում սկսվեցին ձերբակալությունները: Սև ավտոմեքենաները գիշեր ու ցերեկ շրջում էին ամենուրեք և հավաքում «կասկածելի» մարդկանց: Ձերբակալությունների թիվը հարյուրներով կամ հազարներով չէր հաշվվում, այլ միլիոններով: Ահը մարդկանց մեջ այն աստիճանի էր հասել, որ գիշերները շատ շատերը անկողին չէին մտնում, այլ նստում էին շորերով: ...Այս ձերբակալություններից անմասն չմնացին Ախալքալաքի և Բոգդանովկայի հայկական շրջանները: Բանտարկյալների նկատմամբ անմարդավայել վերաբերմունքը ի՞նչ լեզու կամ ի՞նչ գրիչ կարող է պատմել: Բավական է հիշել, որ ձերբակալվածին ստիպում են հանձն առնել ներկայացրած մեղադրանքը, եթե չի ուզում բոքիկ ոտքով ման գալ մեխերով ծածկված տախտակների վրա, ժամերով մերկ կանգնել սառցարանում, մտրակի հարյուր հարված ընդունել...»:

Ժամանակաշրջանի բարոյահոգեբանական ծանր իրավիճակը պատկերացնելու համար ավելորդ չենք համարում մեջբերել Սկրտչյանի գրառումներից մի քաղվածք ևս. «Բոլոր կոմունիստներին ստիպում էին, որ իրենց գյուղերում մերկացնեն մարդկանց: Մերկացնել ասելով պետք է հասկանալ՝ մատնել անմեղ գյուղացիներին և բանվորներին: Նրանք, ովքեր շատ էին մատնում և մատնությունը դարձրել էին իրենց համար արհեստ, զովաբանվում էին կուսակցության և ներքին գործերի ժողկոմատի աշխատողների կողմից: Այն կոմունիստները, որոնք հեռու էին պահում իրենց զրպարտություն և մատնություն անելուց, այդպիսիների հանդեպ հալածանք էր տարվում, և շատ շատերին էլ ձերբակալեցին ու աքսոր ուղարկեցին: Եթե մի գյուղից մի քանի գյուղացիների բանտարկում էին, ապա հարևան

գյուղի կոմունիստներին կանչում և ահ ու սարսափ էին տալիս. «Այդ ինչպե՞ս է ձեր հարևան գյուղից շատ հակահեղափոխականներ են ձերբակալվել, իսկ ձեր գյուղում դուք քարշ եք գալիս դաշնակցականների պոչից: Դուք ի՞նչ կոմունիստներ եք, որ չեք կարող մերկացնել գյուղի հակահեղափոխականներին: Ո՞վ կարող էր առարկել կամ ասել, թե հարևան գյուղից ձերբակալվել են անմեղ ու ազնիվ աշխատավոր գյուղացիներ: Բերանդ բաց անելն ու ձերբակալվելը մեկ կլինեն: Այստեղից սկսվում էր զրպարտությունը անմեղ գյուղացիների վրա: Ճար չկար, հարկավոր էր մատնել ուրիշներին՝ սեփական կյանքը փրկելու համար»:

Հովհ. Մկրտչյանի մոտ պահպանվել է նաև հանիրավի բռնադատված և հետստալինյան շրջանում ԽՍՀՄ Գերագույն դատարանի որոշմամբ արդարացված բազմահազար անմեղ մարդկանց մեկի՝ 1902 թ. ծնված ջավախեցի Ռուբեն Խաչատրյանի անմեղության մասին Ախալքալաքի պետնոտարի տված տեղեկանքը (տե՛ս ժողովածուում):

Առանձին խումբ են կազմում Հովհ. Մկրտչյանի ակնարկ-հոդվածները Ախալքալաքի և Բոգոտնովկայի շրջաններում համատարած կոլեկտիվացման հետևանքով գյուղում ստեղծված ծանր դրության, գյուղացու անօգնական ու հոսահատական վիճակի մասին: Ընդ որում, հեղինակը ոչ միայն արձանագրում է տեղի ունեցած դեպքերը, այլև Ջավախքի օրինակով կատարում խորքային վերլուծություններ ամբողջ ԽՍՀՄ-ի տնտեսության վերաբերյալ, մատնանշում երկրի տնտեսական ու քաղաքական հետընթացի պատճառները:

Բռնի կոլեկտիվացման հետևանքով ջավախքյան գյուղի ծանր վիճակի մասին դեպքերի ականատես Մկրտչյանի հուշերում կարդում ենք. «Անչափ դժվար էր գյուղացիների համար այդքան ծանր զրկանքներով 1-2 կով կամ մի 10-15 ոչխար ունենալուց հետո հանձնել համայնական տնտեսությանը և իր գոմը դարձյալ դատարկ տեսնել: Կով էր, որ մորթվում էր: Գոմերը դատարկվեցին ոչխարներից: Գյուղը օր օրի աղքատանում էր: Այս իրարանցումի, ժխորի մեջ պետությունը ծանր հարկերով ծանրաբեռնել էր գյուղացիներին: Ամեն մի տնտեսության վրա հացահատիկի այնքան ծանր հարկ էր դրվում, որ առան-

ծին տնտեսություններ, եթե իրենց բերքը 100%-ով հանձնեին պետությանը, ընտանիքների համար ոչ մի փութ հացահատիկ չվերցնեին, դարձյալ պետական պարտքը չէր կարող ծածկվել»:

Երրորդ խումբ նյութերը վերաբերում են Խորհրդային Միությունում ստեղծված քաղաքական համակարգի վերլուծությանը: Հովհ. Մկրտչյանը համոզված գրում է, որ ստալինյան բռնություններից հետո անհատի պաշտամունքի քննադատությունն արմատապես չփոխեց խորհրդային միակուսակցական, ամբողջատիրական համակարգը: Խրուշչովյան «ծնհալքի» և Ղրբանից հետո ընկած ժամանակաշրջանում կոմունիստական ամենատիրության, համատարած կաշառակերության, կեղծ սոցիալիզմի պայմաններում ԽՍՀՄ քաղաքական ու տնտեսական զարգացումը նկատելիորեն դանդաղեց: «Երկրի ներսում իշխանության գլուխ մնացին ստալինյան հրոսակները, - ցավով գրում է Մկրտչյանը,- որոնց պաշտոններ տալու ժամանակ Ստալինը հայտարարեց՝ «Համարձակ առաջ քաշել երիտասարդությանը»: Այսօր, որ կաշառակերությունը, շորթումը և գողությունն իժի նման փաթարվել են դժբախտ ժողովրդի վիզը, մեղավորները «համարձակ կերպով առաջ քաշած» ստալինյան բազեներն են:

Կաշառակերությունը և շորթումը, անազնիվ ճանապարհով կոմունիստ իշխանավորների հարստանալը, նրանց շատերի միլիոնատեր դառնալը ամեն հավատ դեպի կոմունիստական կուսակցությունը կործանեց: Բանն այն է, որ երկրում գոյություն ունի միայն մի կուսակցություն, նրանից ազատվել անհնար է: Ապրելու համար հարկավոր է լարված աշխատել և օրը մթնեցնել լռելով, իսկ լավ ապրելու համար հարկավոր է գովել և ծափահարել կոմունիստ կաշառակերներին: Հի-նը, ազնիվն այլևս չկա»:

Մկրտչյանը համոզված գրում էր. «Ժամանակն ապացուցեց, որ եթե մի մեծ պետության գործերը կառավարում է միայն մի կուսակցություն, երկրորդ կուսակցություն գոյություն չունի, չկա նույնիսկ ընդդիմություն, այդ երկրի ժողովուրդների կյանքը պետք է կործանված համարել: Երկրում գործող սահմանադրությունը կոչվում էր «Ստալինյան սահմանադրություն»: Եթե երկրի հիմնական օրենքը մի

ճանաչված արյունոտ չարագործի անունն է կրում, այդ անունն ինքնին խոսում է օրենքի բացակայության մասին»:

Իր հողվածներից մեկուն Յովի. Մկրտչյանը տալիս է բռնի կոլեկտիվացման շրջանում ի հայտ եկած «Ավագակային (բանդիտական) շարժման» ճիշտ գնահատականը. «Երեսնական թվականներին հաճախ էին հայտարարում, որ գավառի մի վայրում գինված «ավագակներ» են երևացել: Ովքե՞ր էին այդ «ավագակ» կոչեցյալները: «Կոլխոզ» շարժումից փախած, իրենց ընտանիքները թողած, սար ու ձոր ընկած հողի մշակներ: ...Ոչ մի տեղ ոչ մի ավագակախումբ չի հայտնաբերվել: Ի՞նչ իմանաս, թե իշխանությունից փախած այդ դժբախտ մարդիկ ո՞ր երկրամասում են մշակություն անում: Ինչքան հազարներ կորան՝ զոհ դառնալով սովետական կարգերի անմարդկային ռեժիմին, ստալինյան բռնությանը»:

Ընթացողի ուշադրությունից չի վրիպում այն հանգամանքը, որ հուշագրության հեղինակը քաջածանոթ է Ջավախքի պատմությանը՝ հատկապես 1918 և 1921 թթ. թուրքական ներխուժումների ու բռնազավթումների հետևանքով գավառի բնակչությանը պատուհասած աղետների մանրամասներին, երբ տարածաշրջանը ենթարկվեց եղեռնագործության՝ կորցնելով իր բնակչության շուրջ կեսը՝ 80 հազարից 35-40 հազարը:

Ազգասեր մտավորականը ոչ մի կերպ չի հաշտվում այն մտքի հետ, որ այդ արհավիրքներից հետո՝ խորհրդային կարգերի հաստատման հետ իր հույսը կապած գավառի բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմող հայությունը, 1921 թ. իր կամքից անկախ, հայտնվում է Վրացական ԽՍՀ կազմում: Ավելին, դրանով ոչ միայն արդարացի լուծում չի գտնում ազգային հարցը, այլև խորհրդային Վրաստանում ջավախահայությունը հայտնվում է ազգային բիրտ ճնշումների ճիրաններում: Ամեն կերպ ոտնահարվում են հայ ժողովրդի իրավունքները. պետական մակարդակով ոտնձգություններ են կատարվում տեղի կաթուղի հայերի ազգային ինքնության նկատմամբ՝ փորձելով նրանց վրացացնել, ազատել աշխատատեղերից, հայկական դպրոցներում կամ արգելել կամ խիստ սահմանափակել ազգա-

յին նկարագիր դաստիարակող առարկաների հայոց պատմության, հայոց լեզվի ու գրականության դասավանդումը:

Ուղղակի զարմանք է հարուցում Յովի. Մկրտչյանի քաղաքական համարձակ ու անհաշտ կեցվածքը բազմաթիվ հարցերում. կոմկուսի անդամ թոշակառու, հավատալով արդարության հաղթանակին, տասնամյակներ շարունակ նամակներ⁴ է հասցեագրել կենտրոնական ու հանրապետական կուսակցական ու պետական մարմիններին, երկրի ղեկավարներ Ն. Խրուշչովին ու Լ. Բրեժնեֆին, ԽՍՀՄ արտգործնախարար Ա. Գրոմիկոյին և այլոց՝ պահանջելով դադարեցնել վրացական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացվող ազգային խտրականությունը, վերանայել Ախալքալաքի ու Բոզդանովկայի վարչական շրջանների պատկանելության հարցը՝ դրա համար անհրաժեշտ համարելով նաև վերանայել խորհրդային սահմանադրության այն հոդվածը, որն արգելում է մի միութենական հանրապետության սահմանների փոփոխությունը՝ առանց նրա օրենսդիր մարմնի համաձայնության: Այդ հողվածի առկայությունն աշխատանքի ու կյանքի փորձով իմաստնացած իրավաբանը համարում էր Ղայաստանից հանիրավի անջատած հայկական տարածքների՝ Ղարաբաղի, Նախիջևանի և Ջավախքի հայության ինքնորոշման իրավունքի դրսևորման ճանապարհին գլխավոր խոչընդոտը:

Յովի. Մկրտչյանի քաղաքական այլախոհությունն իր բոլոր դրական կողմերով դրսևորվել է նաև հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հայկական հարցի արծարծման ժամանակ, որի լուծմանը՝ պատմական արդարության վերականգնմանը, տենչանքով սպասել է հայրենասեր ջավախեցի մտավորականը:

Աշոտ Մելքոնյան, պրոֆեսոր

⁴ Յովի. Մկրտչյանի անձնական արխիվում պահպանվել են խորհրդային վերահաս մարմիններին ուղարկած նրա նամակների զգալի մասի անդորրագրերը, որոնցից առանձին պատճեններ գետեղված են սույն ժողովածուում:

ՀՈՎԻԱՆՆԵՍ ԲԱՐՍԱՍԻ ՄԿՐՏՉՅԱԼ

Կենսագրական ակնարկ

Ծնվել է 1899 թ. Ախալքալաքի շրջանի Սուլդա գյուղում:

Պապը՝ Մկրտիչը, և իր երկու եղբայրները՝ Հովհաննեսն ու Հակոբը, 1860-ական թթ. Կարինի նահանգից փախել-անցել էին ռուսական սահմանը և հաստատվել Սուլդա գյուղում: Գյուղում նրանց տոհմը անվանում էին «Էրզրմցունց»։ Հայրը՝ Բարսամը, բյուրեղյա ազնվությամբ մի մարդ, արհեստավոր էր: Նրա ահռելի ուժի մասին հրաշքներ էին պատմում: Մայրը՝ Մարթան, էությանը ազնվական, սիրող մոր ու տատի լավագույն կերպար էր:

Եղբայներից Հակոբն ավարտել էր Մոսկվայի Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիան, Բաքվի կուսակցական դպրոցը: Շրջանում, ապա նաև Վրաստանի տարբեր քաղաքներում վարել էր բազմաթիվ պաշտոններ: Եղել է Թբիլիսի քաղաքի շրջաններից մեկի ներքին գործերի բաժանմունքի պետ: Նույն պաշտոնն է վարել Խաշուրում և Բորժոմում: Փոխգնդապետ էր: Զոհ գնաց 1937 թ. բռնությունների: Կրտսեր եղբայր Վահագնը շրջանում ճանաչված մտավորական էր: 1933 թ. ավարտել էր ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: Երկար տարիներ Ախալքալաքի մանկավարժական ուսումնարանում, շրջանի, ապա նաև Խորհրդային Հայաստանի դպրոցներում աշխատել է որպես դպրոցի տնօրեն: Քույրերը՝ Փրաքայան և Արաքայան, թեկուզ չէին ծնվել Կարինում, բայց իրենց մեջ ամբարել էին արևմտահայ կնոջ նվիրումն ընտանիքին ու երեխաներին: Ընտանիքը շատ ծանր ու դժվար օրեր հաղթահարեց: 1918 թ. մայիսին օսմանյան զորքերի և 1921 թ. փետրվարին Սուստաֆա Քեմալի հրոսակախմբերի մուտքն Ախալքալաքի գավառ ստիպեց բնակչությանը գաղթել դեպի Բակուրիան: Կենդանի մնացածների հետ «Էրզրմցունց» ընտանիքը վերադարձավ թալանված ու ավերված գյուղ ու նորից, հայի ճակատագրին հատուկ, սկսեց վերաշինել իր բույնը:

1913-1920 թթ. Հովհաննես Մկրտչյանն աշխատել է բատրակ, սևագործ բանվոր: Աշխատանքին զուգընթաց ավարտել է գյուղի դպրոցի քառամյա դասընթացը, 1924-1925 թթ. սովորել կուսակցական

դպրոցում, 1925-1927 թթ.՝ աշխատել որպես գրադարանի վարիչ: 1927-1928 թթ. նա Կարգախ գյուղի գործադիր կոմիտեի նախագահն էր:

1928 թ. հայրը՝ Բարսամը, Սուլդայից երկու կիլոմետր հեռավորության վրա տուն է շինում: Գյուղացիներից շատերը հետևում են նրա օրինակին, և գյուղը կոչում են Բոզալ (երկնագույն):

1928 թ. Բարսամի երեք որդիները՝ Հովհաննեսը, Հակոբը և Վահագնը, տեղափոխվում են Ախալքալաք: Հովհաննեսը և Վահագնը փոխում են իրենց ազգանունը՝ պատճառաբանելով, որ «Էլբակ» բառը բուրբական ծագում ունի, և Մկրտիչ պապի անունով գրվում են Մկրտչյան: Իսկ Հակոբը չի փոխում իր պապենական ազգանունը՝ մնալով Էլբակյան:

1928-1931 թթ. Հովհ. Մկրտչյանն Ախալքալաքի շրջանային ապահովագրական գանձարկղի նախագահն էր:

1931-39 թթ. նա աշխատել է Ախալքալաքի և Բոզդանովկայի շրջանների ժող. դատավոր, 1940-43 թթ. որպես իրավաբանական խորհրդատվության վարիչ, 1945-46 թթ.՝ Ախալքալաքի կապի բաժանմունքի նախագահի տեղակալ: Մինչև 1950 թ. թաքնվել է հետապնդումներից:

1957 թ. Ախալքալաքի դատարանում վեց ամիս ավագ քարտուղար աշխատելուց հետո Վրաստանի արդարադատության նախարարության հրամանով ազատվում է աշխատանքից, որից հետո, տարիներ շարունակ չի աշխատել:

Հետագա տարիներին շարունակել է պայքարել Ջավախքում տիրող անօրինականությունների, հայկական դպրոցների փակման, հայ մշակույթի և հայկական եկեղեցիները, հայ կաթոլիկներին վրացականացնելու, ՀՀ և Ջավախքի միջև ստեղծված ստուգման կետի դեմ: Համարձակորեն դուրս է եկել Վրաստանի ղեկավար Մախարաձեի պլանների դեմ, որով նախատեսվում էր Ջավախքը հայաթափ անել և անասնապահության շեշտակի զարգացման պլանի ջողի տակ տարածքը դարձնել բուլշերի բիմաներ (ամառանոցներ):

Մկրտչյանը տիրող իրավիճակը և փաստերը բազմիցս ներկայացրել է ԽՍՀՄ ԿԿ-ին՝ հիմնավորելով շրջանը Հայաստանին միացնելու անհրաժեշտությունը:

Կյանքի վերջին երկու տարիներին ապրել է Երևանում: Մահացել է 1984 թ.:

ՀԱՅՐՍ

Դժվար է գրել հայրիկիս մասին: Նա նախևառաջ իր ժողովրդի, իր ծննդավայրի նվիրյալն էր: Նրա միակ պաշտամունքը հայրենիքն էր:

Հայրս ապրել է 85 տարի: Նրա ապրած բոլոր տարիները հոգեկան խռովքի, պայքարի ծանր տարիներ էին:

1920-ական թթ. երիտասարդական ավյունով և հավատարմությամբ ծառայում է կոմունիստական կուսակցությանը:

1930-ական թթ. սկզբներից արդեն, հասկանալով կոմկուսի քաղաքական գծի վտանգավորությունը, պայքար է սկսում դրա դեմ, որը շարունակվում է մինչև իր կյանքի վերջը: Հատկապես բեղմնավոր էր նրա գործունեությունը 30-ական թթ., երբ ինքը ժող. դատավոր էր Ախալքալաքի, ապա Բոզդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջաններում: Այդ դժնդակ ու վտանգավոր տարիներին, հարվածն իր վրա վերցնելով, նա հնարավորն ու անհնարինն անում էր անմեղ մարդկանց օգնելու, ազատելու վերադասից սահմանված պատիժներից և, իրավամբ, ժողովրդի կողմից ստացավ «սուղյա Յովհաննես» անունը ու այն կրեց մինչև իր մահը:

1937 թ. զոհերից էր նրա եղբայրը՝ Հակոբը: Հետագայում հայրս զարմանքով ասում էր, թե միայն հրաշքով է ինքը կարողացել խույս տալ մահապատժից:

Նրան ճանաչողները գիտեն, որ նրա խոսակցության նյութը հայն ու հայրենիքն էր: Նույնն էր նաև ընտանիքում: Նրան չընկճեց անգամ 30-ականների վերջին երեխաների և կնոջ հիվանդությունները, հետագայում փախուստը և թաքնվելը հետապնդումներից: Նա մնաց հավատարիմ իր սկզբունքին ու հավատամքին:

Փախուստի տարիներին գաղտնի կապ էր պահպանում հարազատների հետ: Առանց հուզմունքի չես կարող կարդալ թաքստատեղից ուղարկած նամակները:

«..... Մայիսի մեկին վրացիները կերուխումով նշում էին մայիսյան տոնը, իսկ իմ ընտանիքը սոված էր: Սոված էր նաև հաջորդ օրերին: Մայիսի չորսի վաղ առավոտյան տնից դուրս եկա, գնացի ան-

տատ և վերադարձա երեկոյան: Երեխաները լուռ էին, ոչ մեկը չէր բողբոմ ստեղծված իրավիճակից: Այնքան տխուր հայացքով էին նայում ինձ և իրենց հայացքներով այնքան խորն էին խոցում սիրտս, որ ես ալեկոծվում էի: Հուզմունքս խեղդում էր ինձ: Սիրտս տակնուվրա էր լինում երբ նայում էի Սուսանիս, Հռիփսիմեիս ու Հայկիս տխուր հայացքներին: Այս դրություներն իմ ընտանիքում նորություն չէր, նրանք շատ անգամ են սոված մնացել: Հույսն իմ մեջ ամուր է ու հաստատ: Դրա համար էլ ես արհամարհում եմ ամեն մի չարչարանք, ամեն մի նեղություն»:

Նամակներից մեկում մայրը միամտաբար խնդրել էր, որ որդին դիմի Ստալինին, ներեղություն խնդրի, որ նա ներում շնորհի: Հայրս պատասխանել էր. «Քո խորհուրդը, մայր, ես չեմ կարող կատարել: Ներում խնդրելու համար նախ պետք է պատճառ ունենալ: Ո՞ր հանցանքիս համար ներում խնդրեմ: Չէ որ ես հանցագործ չեմ: Կոմունիստական կուսակցության և իշխանության հետ ես պայքարի մեջ մտա նրա համար, որ դեմ էի ստալինյան օրենքներին և որպես դատավոր չէի կիրառում կյանքում: Մայր իմ, խորհուրդ ես տալիս դիմել մեծ ավագակալին առաջնորդին, որ մարդկային արյունով չհազեցող այդ բորենին ինձ բռնի ու հոշոտի: Քո վիճակը, մայր իմ ես հասկանում եմ: Քո որդիքը կորած են. մեկը տասներեք տարի աքսորում է, որից ոչ մի լուր չունես, իսկ մյուսը՝ իշխանությունից փախած, թաքնված է օտար վայրերում: Ինչքան քեզ նման մայրեր կան, որոնք զոհ են տվել իրենց զավակներին ստալինյան բարբարոսությանը: Դու մենակ չես, սիրելի մայրիկ, քեզ նման միլիոններ կան: Հավատացած եղիր, մայր իմ, որ դու և քեզ նման բյուրավոր մայրեր, կարժանանաք Ձեր կորած որդոց տեսությանը»:

Հայրս շատ էր կարդում: Ավարտել էր իրավաբանության դասընթացը, բայց իրավագիտության, պատմության, քաղաքագիտության նրա իմացությունը պայմանավորված էր ինքնակրթությամբ:

1950-ականներին սովորում էի ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետում: Արձակուրդներին գնում էի Ախալքալաք: Մեկ-երկու նախադասությամբ հարցուփորձ անելուց հետո անցնում էր իր հիմնական թեմային: Պատմում էր ԽՍՀՄ Կենտկոմին գրած իր նամակների ու բո-

դոքսների մասին, որոնք վերաբերում էին շրջանի սոցիալ-տնտեսական վիճակին, շրջանը Հայաստանին միացնելու վերաբերյալ իր հիմնավորումներին, կաթոլիկ հայերին վերաբերող խնդիրներին...

Դառնացած էր լինում: Դիմումներից մեկին Մոսկվայից պատասխանել էին, թե շրջանը Հայաստանին միացնել չեն կարող, որովհետև իրենց վրացի ընկերները կնեղանան: Հայրս վիրավորված պատասխանել էր. «Մեր նեղացած լինելը ձեզ չի հուզում, բայց նախօրոք անհանգստանում եք, թե նրանք կարող է նեղանալ»: Ցանկացած պատմական հարցի շուրջ նրա հետ կարող էի խոսել, բանավիճել: Այն տարիներին ասպարեզում եղած գրականությունը հատկապես 20-րդ դարի իրադարձությունների մասին ստույգ տեղեկություն չէր տալիս: Այդ բացը ես լրացնում էի հայրիկիս հետ ունեցած գրույցներով: Հիմա շատ եմ ափսոսում, որ անհրաժեշտ չափի գրույցներ չենք վարել, և չեմ ժառանգել այն հարստությունը, ինչ որ հայրս կարող էր փոխանցել ինձ:

Հայրս շատ անվախ էր: Բազմիցս իր դեմ կազմակերպված մահափորձերից հետո անգամ չդադարեց պայքարել: Նա սիրում էր ասել. «Եթե նվիրվում ես հայրենիքիդ, սրտունդ վախ՝ քո անձի և հարազատներիդ ճակատագրի համար, չպետք է ունենաս: Հայրենասիրությունը լիակատար ու անձնագրի նվիրում է պահանջում»:

Որպես բողոքի նշան՝ հայրս (1925 թվականից՝ կուսակցական) իր կուսակցական տոմսը 1963 թ. ուղարկեց Մոսկվա՝ պատճառաբանելով, որ ինքը չի կարող անդամ լինել մի կուսակցության, որը համարվում է քաղաքական բանդա՝ «Политическая банда»»: Նախադեպը չունեցող այդ իրադարձությունն անհանգստացրել էր ԽՄԿԿ Կենտկոմին՝ հատկապես հետևորդներ ունենալու առումով: Այնտեղից կուսակցական տոմսը ուղարկել էին Վրաստանի կոմկուսի կենտկոմ և պահանջել ամեն գնով վերադարձնել տիրոջը: Վրաստանի կոմկուսի կենտկոմի ներկայացուցիչն Ախալքալաքում երկար գրուցել էր հայրիկիս հետ: Հայրս, բնականաբար, օգտվելով առիթից, դարձյալ ներկայացրել էր շրջանի՝ քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրները: Հետագա բարդություններից խուսափելու համար տոմսը հետ էր վերցրել:

Կյանքի վերջին տարիներին վատառողջ էր, ուստի տեղափոխվեց Երևան՝ տղայի մոտ: Իրեն մեղավոր էր համարում և վիշտը սրտում՝ ասում էր. «Իրավունք չունեի մենակ զալու, առանց իմ ծննդավայրի: Կյանքս նվիրեցի նրա ազատագրմանը, բայց բիրտ ուժին չկարողացա հաղթել»: Ափսոս, որ նա ականատեսն ու մասնակիցը չդարձավ արցախյան ազատագրական պայքարին:

Մահից առաջ թղթին հանձնեց իր մարգարեացած պատգամը. «Կա երկու սրբություն և երկու պաշտամունք. առաջինը այս լեռնաշխարհն է՝ իր գեղեցիկ Հայաստան անունով, իսկ երկրորդը իմ լեզվով խոսող ժողովուրդն է: Ծնողների սերը մի անջատեք հայրենիքի սիրուց»:

Վերջին նախադասությունը փորագրված է նրա տապանաքարին:

Լուիզա Հովհաննեսի Սկրտչյան

ՀԱՅՐԻԿԻՍ ՊԱՏՄԱԾ ՀՈՒՇԵՐԻՑ

Կարսի պաշտպանության մասին

1918 թ. Ախալքալաքում կամավորներ են հավաքագրում Կարսի պաշտպանությանը մասնակցելու համար: Կամավորներից մեկը եղել է հայրս: Նա սրտի ցավով էր պատմում Կարսի անկման մասին: Թուրք զինվորը սոված ու անզոր էր և ի վիճակի չէր Կարսը գրավել: Մինչդեռ, Կարսը պատրաստ էր պաշտպանվել և հաղթել: Ձինված էր ժամանակի ռազմական տեխնիկայով: Ուներ կրակելու պատրաստ 500 թնդանոթ, դեղորայք, հագուստ, սննդամթերք և, որ ամենակարևորն է՝ արթուն էր հայ զինվորի ոգին: Նա պատրաստակամ էր պայքարել Կարսը պաշտպանելու համար: Անդրկովկասյան կառավարության կողմից Կարսը հանձնելու և նահանջելու հրամանը ստանալուց հետո, զնդապետ Մազմանյանը շարունակ է գործը, բարձրանում բարձունքին և սրտառուչ ճառ է արտասանում: Հուզված էին և՛ հռետորը, և՛ զորքը: Վերջում հայտարարում է, որ Կարսի հանձնումը հայրենիքի կործանումն է և ինքը չի կարող տեսնել այն: Հանում է մաուզերը և բոլորի աչքի առաջ ինքնասպան լինում: Հայրս կսկիծով էր պատմում այդ դեպքերի և այդ արի մարդու մասին: Վերջում ավելացրեց. «Նա դաշնակցական էր»:

Պապիս տված դասը

Բարսամ պապս գալիս է տուն և զայրացած հարցնում Հակոբ հորեղբորս.

- Գյուղացիներից մեկին ձերբակալել են, գիտե՞ս, թե ովքեր են դրանք և որտե՞ղ են պահում:

- Մենք՝ կոմսոմոլներս, - պատասխանում է որդին, - փակել ենք մարագում:

- Ուրեմն՝ դուք կոմսոմոլ էք դարձել, որ ես գյուղում ազատ ման գալու իրավունքից զրկվե՞մ, գլխիկո՞ր ման գամ, - զայրանում է պապս և ապտակում որդուն:

Նա ահռելի ուժի տեր էր, և հարվածից որդին կտրված ծառի նման տապալվում է գետնին:

Նրան դժվարությամբ ուշքի են բերում: Հայրը կարգադրում է.

- Կզնաս, այդ մարդուն ազատ կարծակես, մարագի բանալին էլ կրերես, ինձ կտաս:

Հայրս պապիս այդ ապտակն ուսանելի դաս էր համարում երեք եղբայրների համար:

Մյասնիկյան գյուղի ծնունդը

Ներկայիս Կոմունա (Մյասնիկյան) գյուղի ստեղծման պատմությունը հետևյալն է: Տարածքը գետի ափին էր, ուներ լավ տեղանք: Վրացական կառավարությունը որոշում է այդ տարածքում գյուղ հիմնել բուշերի ոչխարների համար: Այդ քայլը հակասում էր շրջակա հայկական գյուղերի շահերին: Վրացական գյուղը սեպի նման խրվելու էր հայկական գյուղերի միջև, ինչը կարող էր վատ հետևանքներ ունենալ:

Վրացական կառավարության այդ նախաձեռնությունը չեզոքացնելու համար հայրս ժողովրդի անունից դիմում է Մյասնիկյանին, որպեսզի վերջինս միջամտի՝ այդտեղ Կոմունա անունով հայկական գյուղ կառուցելու համար: Միջնորդությունը չի մերժվում, և այդ տարածքի վրա ստեղծվում է Կոմունա (Մյասնիկյան) հայկական գյուղը:

Օղի թորող գյուղացին

Պատավոր աշխատելու ժամանակ հայրիկիս զեկուցում են, որ մի միլիցիոներ հանցագործ է բռնել: Նա կարգադրում է ներս բերել: Մտնում են միլիցիոները և մի հայ գյուղացի՝ օղի թորելու սարքը ձեռքին: Միլիցիոները զեկուցում է, որ գյուղացուն բռնել է օղի թորելու պահին (օղի թորելն արգելված էր) և իրեղեն ապացույցի հետ բերման է ենթարկել:

Հայրս հարցնում է միլիցիոներին, թե արդյոք հայկական կաթոլիկ գյուղերում օդի թորողներ չկա՞ն: Միլիցիոները պատասխանում է, որ իրենց կարգադրված է չմիջամտել հայ կաթոլիկների գործերին (դա այն ժամանակաշրջանն էր, երբ Վրաստանի կառավարությունն ամեն ջանք գործադրում էր հայ կաթոլիկներին վրացականացնելու համար, խոստանում բարեկեցիկ պայմաններ, միայն թե փոխեն ազգությունը և դառնան վրացիներ: Բարեբախտաբար, հայ կաթոլիկները հիմնականում ազգադավ չեղան): Այդժամ հայրս հարցնում է.

- Քեզ համար տարբերություն կա՞ հայ լուսավորչականների և հայ կաթոլիկների միջև:

Պատասխանը բացասական է լինում:

- Դե որ չկա, այս մարդուն հենց հիմա իր սարքի հետ միասին կտանես իրենց գյուղ, հետ կգաս, կզեկուցես և այլևս նման դատարկ գործ չես բերի ինձ մոտ,- ասում է հայրս:

Պետանվտանգությունն ու հայրս

Պատերազմից հետո պետական անվտանգության աշխատող իր ծանոթներից մեկը հայրիկիս զգուշացնում է, որ գիշերը նրան ձերբակալելու են: Մայրիկիս երկու դուստրերի հետ անմիջապես ուղարկում է Վրաստան, Գուրջաանի շրջանի Չունլակի գյուղ՝ իր ծննդավայրը, իսկ ինքն անհետաձգելի գործերի պատճառով մնում է տանը (առաջին հերթին պետք է մաքրեր իր գրադարանը):

Կեսգիշերին դուռը թակում են և ներկայանալով որպես պետանվտանգության աշխատակիցներ, պահանջում են դուռը բացել:

-Անվտանգության աշխատակիցները գիշերով գործ չունեն իմ տանը, եկեք առավոտյան,- ասում է հայրս:

Դրսից սկսում են ջարդել դուռը: Հայրս ներսից կրակում է կարաբինից: Սկսվում է փոխհրաձգություն: Աղմուկից խուսափելու համար նրանք հեռանում են: Դեռ լույսը չբացված՝ հայրս հեռանում է Ախալքալաքից և երեք տարի թաքնվում է Կախեթի անտառներում: Հիվանդանում, ընկնում է անկողին: Այդտեղ էլ մատնությամբ ձերբակալվում

է: Մի քանի ամիս թբիլիսիի բանտում պահելուց հետո, նրան բերում են Ախալքալաք:

Ջավախքում բողոքի ալիք է բարձրանում: Ստալինի կենդանության օրոք դա չսված բան էր: Ժամագործ Սարգսի նախածեռնությամբ ժողովուրդը շրջապատում է դատարանի շենքը, ցույց կազմակերպում և պահանջում է Սկրտչյան Հովհաննեսին չդատապարտել ազատագրվեման: Ժողովրդի ճնշման տակ նրան ազատ են արձակում: Դրան հաջորդում են տանջալից գիշերները: Մենք վարձով էինք ապրում և փողոցի կողմից լուսամուտներ չունեինք: Գիշերով հարձակվում էին տան վրա, ջարդում ապակիները և հեռանում: Հիշում եմ, թե ինչպես երեխաներով կուչ էինք գալիս և ահ ու սարսափով սպասում գիշերվա դեպքերին: Հայրս իրեն հատուկ հանդարտությամբ հանգըստացնում էր մեզ:

Այսպես, տարիներ շարունակ, մի կողմից վայելում էր ժողովրդի սերն ու հարգանքը, մյուս կողմից վրացական կառավարությունը ոչ միայն աշխատանք չէր տալիս, այլև շարունակ հետապնդում էր և պահանջում, որ նա դադարեցնի իշխանությունների դեմ բողոք ներկայացնել:

Բայց նա մինչև իր մահը կարողացավ հավատարիմ մնալ իրեն, իր դավանած սկզբունքերին:

Հայկ Հովհաննեսի Մկրտչյան

ՀՈՒՇԵՐ 1930-ԱՎԱՆՆԵՐԻՑ

Հացամթերումը և գյուղացու սոցիալական վիճակը

1931 թ. ես աշխատում էի Ախալքալաքում որպես գավառական ապահովագրական գանձարկղի նախագահ: 1930 թ. գյուղացիներին, առանց բացառության, հակառակ իրենց կամքի, ուժով համայնական տնտեսությունները լցնելուց հետո շարունակվում էր այդ տնտեսությունների իբր ամրացումը, որի համար դարձյալ ուժի դիրքերից ելնելով՝ համայնացնում էին կովերը և ոչխարները: 1921 թ. քեմալական հրոսակախմբերի արշավանքը մեր գավառն այնտեղ էր հասցրել, որ 500 տնից բաղկացած Սուլդայի նման մեծ գյուղում մնացել էր միայն մեկ կով, մեկ աքաղաղ: Բազմաչարչար հայ աշխատավոր գյուղացին քեմալական ավագակներից կողոպտվելուց հետո ծանր աշխատանքների, իրենց ընտանիքներն ամեն տեսակի գրկանքների մեջ պահելու «շնորհիվ» անասնապահական գյուղում իրենց տնտեսությունների համար մի քանի ոչխար և 1-2 կով ունեին: Անչափ դժվար էր գյուղացիների համար այդքան ծանր գրկանքներով 1-2 կով կամ մի 10-15 ոչխար ունենալուց հետո հանձնել համայնական տնտեսությանը և իր գոմը դարձյալ դատարկ տեսնել: Կով էր, որ մորթվում էր: Գոմերը դատարկվեցին ոչխարներից:

Գյուղը օր օրի աղքատանում էր: Այս իրարանցումի, ժխորի մեջ պետությունը ծանր հարկերով ծանրաբեռնել էր գյուղացիներին: Ամեն մի տնտեսության վրա հացահատիկի այնքան ծանր հարկ էր դրվում, որ առանձին տնտեսություններ, եթե իրենց բերքը 100%-ով հանձնեին պետությանը, իրենց ընտանիքների համար ոչ մի փութ հացահատիկ չվերցնեին, դարձյալ պետական պարտքը չէր կարող ծածկվել: Որպեսզի պետական առաջադրանքները կատարվեին, շրջանի կենտրոնից մի քանի կոմունիստների ուղարկեցին որպես գյուղական խորհուրդների նախագահներ: Ինձ բաժին ընկավ մեր գյուղը՝ Սուլդան:

Հացամթերման պլանը կատարված էր 31%-ով, ինձ ուղարկելով գյուղխորհուրդ՝ կուսակցությունը հույս ուներ, որ 31%-ը ես կհասցնեմ 100%-ի: Ուսումնասիրելով գյուղի դրությունը՝ ես եկա այն եզրակա-

ցության, որ հացահատիկի պետական առաջադրանքների 31%-ը կատարվել է վարչական կարգով: Պարզեցի, որ հացահատիկ հանձնող գյուղացիները ձմեռվա համար հացի պաշար չունեն:

Ինձ համար անելանելի վիճակ էր ստեղծվել: Հացամթերումը կանգ առավ: Կուս. կազմակերպության քարտուղար, թբիլիսցի Միշան, Կոմունայի նախագահ Հարությունյան Բարսամը, կոմունիստ Ավետիսյան Հայաստանը և ուրիշներ առանց իմ մասնակցության ցուցակներ են կազմում, որով հարկադրում են գյուղացիներին հացահատիկի չափազանցած հարկով, որը կատարելու դեպքում պլանը կկատարվի 100%-ով և ավելի:

Ցուցակները ներկայացրին ինձ՝ հաստատելու համար: Առաջին գյուղացու ազգանունը, որ կարդացի, այլայլվեցի: Գրված էր. «Վարդիկյան Արշակ՝ 100 փութ գարի»: Վարդիկյան Արշակը Մյասնիկյանի անվան կոմունայի անդամ էր եղել: Իր ունեցած ոչխարները, կովերը, եզները և մանր անասուններն ու գյուղատնտեսական գործիքները հանձնել էր Կոմունային, իսկ հետագայում իրեն դուր չէր եկել Բարսամի ղեկավարած Կոմունան և, ընդհանրապես, համայնական կյանքը. հրամանով նստել վեր կենալը, բրիգադիի հսկողության տակ աշխատելը, կանանց աշխատեցնելը, որտեղ իրենք ցանկանան: Իր ամբողջ ունեցածը, որը հանձնել էր Կոմունային, թողնում է և ընտանիքով հեռանում Կոմունայից: Արշակը ոչ անասուն ունի, ոչ ցանած արտ, ոչ էլ գարի: Ես հարցնում եմ Բարսամին և քարտուղար Միշային.

- Որտեղի՞ց է տալու Արշակը 100 փութ գարին:

- Ինչ տեղից և ինչ միջոցով ուզում է, թող ճարի, դա մեր գործը չէ, մեր գործը 100 փութ գարին նրանից ընդունելն է:

Իրենց կազմած ցուցակները վերադարձնում են իրենց՝ առանց հաստատելու: Շրջանային թերթում ինձ լուրջ քննադատում են, որպես ծաղրանք ինձ պարզևատրում են խսիրե դրոշակով, մեղադրում են, որ գյուղի կուլակներին ես իմ պաշտպանության տակ եմ վերցրել, նրանց ղեմ դատական գործ չեմ հարուցել, ոչ մի կուլակ չի բանտարկվել, դրա համար էլ հացամթերման գործը տապալման է ենթարկվել:

Մինչև իմ՝ գյուղխորհրդի նախագահ գնալը նախագահ Բարսամը, Վարդիկյան Խաչոն և ուրիշներ Մեյրոյան Հարությունին տանում

են Սեյրանենց տներից վերև, կապում են հեռախոսայունին և զենքով սպառնում՝ պետությանը հացահատիկ չտալու համար:

Սարսափելի բան է, երբ տգետ, տհաս մարդուն իրավունք ես տալիս իշխելու և ավելի վտանգավոր, երբ տգետի անմարդկային արարքները, դատապարտելու փոխարեն, գովաբանվում են իշխանավորների կողմից:

Պատահական չէր, որ երբ ես Բարսամին նկատողություն էի անում գրքեր կամ լրագրեր չկարդալու համար, ասում էր.

- Ես առանց կարդալու էլ գիտեմ:

Այո՛, Բարսամը և նմանները վստահ գիտեին, որ մարդկանց անհիմն կերպով «կուլակ», նույնիսկ «կուլակի պոչ», «դաշնակցական» անուններ տալը, նրանց վրա անտեղի ճնշումներ դնելը, նրանց գրպարտելը և ձերբակալել տալը օրենքով չէր պատժվում:

Հաց չկա, հացամթերումը լրիվ կանգ է առել: Շրջանից գյուղ եկավ Կոմ. կուսակցության շրջանային կոմիտեի քարտուղար Իշխանյան Սերգոն: Գյուղում իրարանցում է. տեղի երեսառածները հացամթերման տապալման պատճառը բարդում են ինձ վրա և առաջարկում են ինձ հեռացնել աշխատանքից: Հացամթերման տապալման գործը քննարկվում է կուս. ժողովում: Ես առաջարկություն եմ մտցնում Ավետիսյան Հայաստանին նշանակել գյուղտնտեսի նախագահ: Նա ձերբակալել կտա 15-20 մարդ և ահ ու սարսափի տակ գյուղացիներից կխլի նրանց ունեցած վերջին հացահատիկը:

Իմ բացատրությունից հետո քարտուղարը կիսով չափ համոզվում է, որ գյուղացիք հաց չունեն, բայց քանի որ շրջանում ընդհանրապես հացամթերման գործը տապալման առաջ էր կանգնած, վախենում է, որ ինձ նման իրեն էլ խսիրե դրոշակ կտան և դեռ մի բան էլ ավելի:

Երկար ու դատարկ վիճաբանությունից, տեղի՝ այսպես կոչված առաջավորների ճառերից հետո, քարտուղարի առաջարկությամբ հարցի քննարկումը տեղափոխվում է շրջանային կուսկոմիտեի նիստի քննարկմանը: Սեպտեմբեր ամսի սկզբներն է, իմ հարցը դրված է կոմկուսակցության շրջանային կոմիտեի նիստի քննարկմանը: Այդ օրերին լույս տեսավ Ստալինի հոդվածը՝ «Գլխապտույտ հաջողություն-

ներից» վերնագրով: Հացամթերման գործում տեղի ունեցած լուրջ խախտումները և ժողովրդի ծով դժգոհությունն առիթ էր ծառայել, որ լույս տեսնի «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածը: Քարտուղարն ինձ հաղորդում է, որ իմ հարցը բյուրոյի քննարկումից հանված է: Ո՞ր հաջողությունից էր առաջացել իշխանավորների գլխապտույտը, անհասկանալի էր, քանի որ ամբողջ երկիրն ահ ու սարսափի, մահ ու սարսափի մեջ էր, ամենուրեք դժգոհություն, աղքատություն, բանտ ու տարագրություն: Ի՞նչ հաջողության մասին կարող էր խոսք լինել: Քաղաքական գողն իր հոդվածի վերնագիրը լավ էր ընտրել: Այդ հոդվածից իմ օգուտն այն եղավ, որ իմ հարցը հանեցին բյուրոյի նիստի քննարկումից:

Ի վերջո, իմ գյուղխորհրդում հացամթերումը կատարվեց 31%-ով:

Մեր ընտանիքի մայրը՝ Մարթան, համարվում էր սրբություն, իսկ հայրը՝ Բարսամը՝ պաշտամունք: Իմ ծնողների խոսքից չէինք կարող դուրս գալ: Նրանց ցանկությունն էր, որ մենք՝ երեք եղբայրս էլ ժողովրդի հետ մնանք: «Հլինի թե դժգոհեցնեք մարդկանց և անտեղի նեղացներ», - սա էր նրանց խոսքը:

Գիտեի՞ն արդյոք իմ ծնողները, որ ժողովուրդը թույլ է, իսկ թույլի կողմը լինել, նշանակում է ուժեղի կողմից ծեծ ուտել, հալածանքի ենթարկվել և կործանվել: 1937 թ. իմ եղբոր ձերբակալվելը, նրա դեմ լուրջ մեղադրանքներ ներկայացնելը, թե նա ակտիվ անդամ է Դաշնակ [Դաշնակցության – խմբ.] կուսակցության, որ շրջանի մի քանի գյուղերում՝ Խանդո, Ազարվեթ և Օրջա, հիմնել է դաշնակցական կազմակերպություններ, նույնիսկ զինել է Խանդոյի կազմակերպությանը, արդյունք էր նրա, որ մենք մնացինք ժողովրդի հետ, այսինքն՝ թույլի կողմը և տուժեցինք: Իմ եղբոր գլուխը ուտելով չբավականացան, հալածանքն իմ դեմ բոլոր սահմաններն անցավ: Էլ անգործության 13 տարի, էլ աղքատություն և տարագրություն, հազար ու մի տեսակ հերյուրանքներ և նույնիսկ մեղադրանք, որ ես արտասահմանյան լրտես եմ և հակասովետական լուրեր եմ հաղորդում արտասահման ու նման գրպարտանքներ:

Այնուամենայնիվ, ես գտնում եմ, որ միակ ճիշտ և արդարացի ուղին իմ ծնողների խորհուրդն էր. «Մնացե՛ք ժողովրդի հետ»:

Հանգստություն նրանց տանջված ոսկորներին:

Շուն խուզողի դատը

1933 թ. ամռանն ինձ՝ որպես շրջանային դատարանի նախագահի, շտապ կանչում են շրջանային կուսակցության կոմիտե:

Շրջանային կոմիտեի քարտուղար Իշխանով Սերգոն ինձ առաջարկում է, որ գնամ Ալաստան գյուղ, մի գյուղացու հանդեպ ցուցադրական դատ կազմակերպեմ: Իմ հարցին, թե Ալաստան գյուղից ինձ մոտ ոչ մի քրեական գործ չկա, քարտուղարը պատասխանում է, որ գործը հիմա կստանամ դատախազից: Միևնույն ժամանակ ինձ զգուշացնում է, որ լուրջ գործ է, հարկավոր է խիստ պատժել:

Գործը ստանում են դատախազից, ծանոթանում են գործին: Մի գյուղացի, իր շունը խուզել է, մազը բրդի փոխարեն հանձնել է պահեստ, որ բրդի իր պլանը կատարի: Ալաստան գյուղում ցուցադրական դատ է: Ներկայանում է շանը խուզող գյուղացին՝ 70 տարի լրացած, լղար, հնամաշ շորերով: Հարցաքննության ժամանակ գյուղացին դատին [դատական նիստում – խմբ.] տալիս է բացատրական: (Գյուղացու ազգանունը օրագրումս գրառել էի, բայց 1937 թ. ձերբակալությունների ժամանակ, երբ ինձ վերցրին հսկողության տակ, օրագիրս գրադարանիս հետ այրեցի):

- Ես ունեմ 15 ոչխար և մեկ կով: Ինձ տվին պլան, որի հիման վրա իմ ոչխարների բուրդը պետք է հանձնեմ պետությանը: Անցած տարին չորային էր, ես չկարողացա անասնակերի պաշար հավաքել, իմ և շատերի ոչխարները լղար էին, իսկ վատ պահված ոչխարն առատ բուրդ տալ չի կարող: Իմ 15 ոչխարը ես չեմ խուզել, բուրդ մթերողներն իրենք են խուզել պահեստի դռան առաջ՝ առանց իմ ներկայության և բուրդը հանձնել են պահեստ: Որքա՞ն բուրդ են տվել իմ ոչխարները, ինձ հայտնի չէ, միայն թե ինձնից պահանջում են հինգ կիլոգրամ բուրդ, որ պլանս լրանա: Գյուղում չկարողացա բուրդ ճարել, գնացի Բակուրիանի լեռները՝ վրացի ոչխարապահների մոտ. նրանց մոտ ման եկա երկու օր, բուրդ չկարողացա ճարել, վերադարձա գյուղ: Մեր տան մոտ մեր շունը վազեց և փաթաթվեց ինձ, ես տեսա, որ շան վրա շատ մազ կա, խուզեցի, տարա պահեստ, որտեղ աշխատողները ճանաչեցին և իմ դեմ հարուցեցին քրեական գործ: Մինչ այդ

ես առաջարկեցի ինձանից ընդունել անկողնու բուրդ, ասին՝ չի կարելի: Մեր գյուղում շատ շատերը իրենց բրդի հարկերը չեն կատարել:

Գյուղսովետի նախագահ Մակարյան Խաչիկը գյուղացու ասածները այն, որ ոչխարները խուզել են իր բացակայությամբ, որ անցած տարին չորային է եղել և ոչխարները վատ են սնվել, որ գյուղացին երկու օր լեռներում ման է եկել բրդի համար, բոլորը հաստատում է: Միաժամանակ պահանջում է պատժել, որպեսզի ուրիշներին դաս լինի, քանի որ բրդի պլանը տապալման առաջ է կանգնած:

Դատախազ Ակոպովը՝ ավելի հեռու է գնում, օրվա զոհի արարքը համարում է քաղաքական հանցագործություն. Մեղադրյալը, շունը խուզելով և շան մազը պետությանը հանձնելով, ծաղրի է ենթարկել սովետական իշխանությանը, և պահանջում է հինգ տարի ազատազրկման ենթարկել: Պարզ երևում էր, որ բրդի պետական հարկը հավաքվելու է դատարանի միջոցով: Մի քանի մարդու, որ դատարանը խիստ պատժի, ահ ու սարսափի տակ բուրդը կհանձնեն պետությանը: Մարդիկ պետք է մեղադրական ճառեր կարդան, իսկ ես՝ դատավորս, պետք է անմարդկային դատավճիռ գրեմ և ստորագրեմ: Այդ անմեղ ծերուկին ես արդարացնում եմ:

Դատավճռում գրված էր. «Նկատի ունենալով, որ գործում չկա թշնամական մտադրություն ընդդեմ իշխանության, որ մեղադրյալն աշխատավոր գյուղացի է, նրա ոչխարները խուզված են, և բուրդը պահեստ է հանձնվել տիրոջ բացակայությամբ, որը համարվում է պետական պաշտոնի չարաշահում և անօրեն քայլ: Այն հանգամանքը, որ գյուղացուն ահ են տվել թե կբանտարկեն, եթե մի ժամում բուրդը չհանձնի պետությանը, դատարանը որոշում է արդարացնել մեղադրյալին»:

Կառքով գալիս եմք Ախալքալաք: Ճանապարհին դատախազը ինձ հետ չի խոսում, շատ տխուր է, կարծես թե իր տունը հրդեհը լափել է, կամ թե իր կինը լքել է իրեն: Նոր էի շորերս հանել, երբ իմաց տվին, որ կուսշրջկոմում կանչում են ինձ:

Գնում եմ շրջանային կոմիտե: Բյուրոյի նիստ է, քննարկվելու է շունը խուզող գյուղացու գործը: Դատախազը շատ գունավոր կերպով նկարագրեց դատաքննությունը և իմ ոչ կոմունիստական մոտեցումն

այդ չափն անցած լուրջ գործի հանդեպ: Ես երկրորդ մեղադրյալն եմ կուսակցության դատի առաջ: Իմ ելույթում ես անմիջապես կանգ եմ առնում դատախազի վրա, որը քրեական գործ չի հարուցել այն երեսառած հարկահավաքների դեմ, որոնք գյուղացու 15 ոչխարը տարել են պահեստի դուռը, խուզել և բուրդը հանձնել են պահեստ՝ գյուղացու բացակայությամբ: Ինչքա՞ն բուրդ է եղել, ինչպե՞ս է կշռել և պահեստ ընդունել պահեստապետը, աստված գիտի: Գյուղացին, որ բուրդ ճարելու համար իր թույլ ոտքերով, ալեհեր մորուքով լեռներն է թափառել, ավելի շատ է հանցագործ, քան թե նրա ոչխարները խուզող երեսառածները: Դատախազը լավ կլիներ, որ դրա մասին մտածեր, ոչ թե գար շրջկոմ, դատավորին մեղադրեր: Այն անմեղ գյուղացուն՝ ալեհեր մորուքով, ես անգոր գտնվեցի բանտ ուղարկել: Իմ կարծիքով, ովքեր այդ գյուղացու դեմ քրեական գործ են հարուցել, շրջանային կուսկոմիտեին էլ թյուրիմացության մեջ են գցել, խաբել:

Իմ ելույթից հետո բյուրոյի անդամները ջանք չէին խնայում մեղադրել ինձ, որ ես արդարացրել եմ գյուղացուն: Շրջկոմի քարտուղարն իր ելույթում հայտարարեց, որ իմ կայացրած դատավճիռը անհրաժեշտ է չեղյալ համարել, նորից ցուցադրական դատ կազմակերպել և բանտարկել շունը խուզող գյուղացուն: Դատավճիռը վտանգավոր է նրանով, որ գյուղացիությանը ոտքի է հանում քննող տեղական իշխանության, ընդդեմ սովետական հարկային քաղաքականության: Քարտուղարը առաջարկում է դատավորին անել խիստ նկատողություն, անցկացնելով նրա անձնական գործի մեջ:

Քանի որ դատախազը լուռ էր, ես ստիպված էի հայտարարել, որ բյուրոն լիազորված չէ դատավճիռը չեղյալ համարել և շուն խուզող գյուղացուն ձերբակալել: Դատավճիռը կարող է չեղյալ համարել միայն գերագույն դատարանը:

Պետքավարչության պետ մեզրել Չոլոկիան ինձ նախատում է նրա համար, որ ազատելով «պրովոկատորին» բանտարկությունից, դրանով երես եմ տվել մյուս գյուղացիներին ու տապալել մթերման պլանները: Չոլոկիան դիմելով ինձ ասում է.

- Դու կոմունիստ ես: Պետք է լավ հասկանաս, որ կոմունիստը պարտավոր է նախ կոմունիստ լինել, հետո միայն հայ և հայտարար-

րեց, որ գյուղացուն կծերբակալի ոչ թե որպես քրեական հանցագործ, այլ որպես քաղաքական:

Կուսակցության քարտուղարը հավանություն տվեց նրա առաջարկությանը:

«Նախ կոմունիստ, հետո հայ» բառերը զանգակի նման ղողանջում էին ականջիս: Նախ կոմունիստ լինել նշանակում է, եթե կուսակցության շահերը պահանջում են, դու պետք է մոռանաս քո հայ լինելը, ոտնատակ տաս ազգիդ ու հայրենիքիդ շահերը: Մինչդեռ վրացի կոմունիստն ամեն տեղ և ամեն ժամանակ նախ վրացի է, հետո կոմունիստ: Այս բոլորից հետո ականջի տեղը չիմացող մի մեզրել ինձանից պահանջում է, որ ես նախ կոմունիստ լինեմ հետո հայ: Ինձ համար հայրենիքի շահերից բարձր ոչինչ չկա: Եթե լինի մի այնպիսի կուսակցություն, որը կծգտի ցաք ու ցրիվ եղած հայերին համախմբել, հայկական անջատված գավառները միացնել Հայաստանին, այսինքն, մի այնպիսի կուսակցություն, որի շահերը չեն հակասի իմ հայրենիքի շահերին, ես սիրով կմիանայի այդ կուսակցությանն՝ ինչ անուն էլ որ նա կրեր:

- Ձեր գործն է, հայտարարեցի ես: Գյուղացին անպաշտպան ծերունի է, վարվեցեք նրա հետ այնպես, ինչպես հաճելի է ձեզ: Եթե հարկերը հավաքելը կապված են անմեղ մարդկանց ձերբակալելու հետ, հեռացրեք աշխատանքից անթիվ հարկահավաքներին, մենք յուրաքանչյուր գյուղից մի քանի մարդ կծերբակալենք, մնացած գյուղացիները վախը սրտներում հարկերը կմուծեն: Փոխանակ դատապարտեք իսկական մեղավորներին, որոնք առանց գյուղացու ներկայության խուզել էին նրա ոչխարները, դատապարտում եք անմեղ մարդուն:

Քարտուղարը հարց է տալիս դատախազին.

- Ճի՞շտ է, որ ոչխարները խուզել են տիրոջ բացակայությամբ:

- Այո՛, ճիշտ է, - լինում է պատասխանը:

Ելույթ է ունենում շրջկոմի կազմակերպչական բաժնի վարիչը՝

Համբարյան Արմոն: Համբարյանի ելույթից հետո հարցը փակվում է: Պետք է խոստովանել, որ Կոմ. կուսակցության մեջ այն ժամանակ դեռ կային խելացի, գործից հասկացող մարդիկ:

Տանը ծնողներս և կինս նկատեցին իմ ներքին հուզմունքը: Հայրս հասկացավ իմ հուզմունքի պատճառը և խորհուրդ տվեց չհակադրվել կուսակցությանը, այլ ապես աշխատանքից կազատեն, կծերբակալեն ու կաքսորեն: Քաղաքում լուրեր են տարածվել այն մասին, որ դու ինքնակամ որոշումներ ես կայացնում, բանտարկում ես կոմունիստներին: Ասում են, որ Կորիս գյուղի չորս կոմունիստների ես բանտարկել, Վարևանի և Արագովայի կոլխոզի նախագահներին դատապարտել ես տասնական տարվա բանտարկության, Ելույթ ես ունեցել միլիցիայի և պետքադվարչության հիմնարկների դեմ, թե նրանք գազանաբար են վարվում բանտարկյալների հետ և ապացուցել ես փաստերով: Դու որ ընկնես պետքադվարչության աշխատողների ձեռքը, վայ թեզ:

- Ինձնից պահանջում են թողնել քրիստոնեական մոտեցումը և ընդունել կոմունիստական, մարդկային խղճից հեռու, անմարդկային օրենքները: Վաղ թե ուշ սրանք բոլորիս ձերբակալելու են, ավելի լավ է հպարտ ապրել, քան ծնկաչոք.- պատասխանում եմ հայրիկիս:

Չանցած մի քանի ամիս Ախալքալաքի շրջանից ինձ տեղափոխեցին փոքր ու հետամնաց շրջան՝ Բոզդանովկա: Թեև Բոզդանովկա գնալը ինձ համար այնքան էլ հեշտ չէր, բայց դա չարիքի փոքրագույնն էր և ես մերժել չէի կարող: Բոզդանովկայում կուսակցության շրջանային կոմիտեի պաշտոնում աշխատում էր թիֆլիսցի հայ Դարախչև Վարդանը: Պետք է ասել, որ Թիֆլիսից հայկական շրջաններ ուղարկած հայերը ազգությամբ հայ էին, իսկ վարմունքով, գործով բոլորովին նման չէին հայի: Շրջանային գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնում աշխատում էր Սաթիսա գյուղի բնակիչ Մաթևոս Պրոյանը: Ներքին գործերի ժողկոմատի տեղական բաժանմունքի պետն էր Մամգարա գյուղի բնակիչ, կոմունիստ Համբարձում Բաղդասարյանը: Շրջանի այս երեք ղեկավարներն էլ իրենց կոպտությամբ, անգրագիտությամբ և հայատյացությամբ չէին գիշում մեկը մյուսին: Ահա այս խմբի հետ է, որ ինձ վիճակվեց աշխատել մինչև 1937 թ: Շատ անգամ իմ հարցը քննվեց բյուրոյում և պահանջում էին դիմում ներկայացնել աշխատանքից ազատվելու համար: Թեև ես ներկայացնում էի դիմում, բայց տարբեր պատճառներով հարցը ձգձգվում էր:

1930 թ. համատարած կոլեկտիվացումը թեև կուսակցության մեջ առաջացրեց ճեղքվածք, բայց դա այնքան էլ աչքի չէր ընկնում, քանի որ ստալինյան լուզունգի ներքո են կազմակերպվում կոլխոզները. «Ովքեր մեզ հետ չեն, մեր դեմ են, նմաններին մենք ոչնչացնում ենք»:

Ո՞վ կարող էր դեմ դուրս գալ ստալինյան անմարդկային լուզունգներին: Մինչ 1936 թ. կուս. շարքերում հնից մնացած հնին, այսինքն՝ լավին և մարդկայինին ընտելացած կոմունիստներն աշխատում էին առանց կաշառակերության և շորթման:

1936 թ. երկրի ներսում սկսվեցին ձերբակալությունները: 1937 թ. ձերբակալություններն արդեն զանգվածային բնույթ էին կրում: Բանտարկյալների թիվը 36 միլիոնից անցավ: «Պրավդա» թերթում հաճախակի գովում էին և նույնիսկ նրա՝ Եժովի բազուկը նկարում, տակն էլ գրում. « Երկաթյա նառկոմ»:

Ամբողջ աշխարհի առաջ խայտառակ լինելուց հետո ներքին գործերի մինիստր Եժովին զոհաբերեցին, հայտարարելով նրան ժողովրդի թշնամի: Որ իբր կուսակցությունն ու կառավարությունն այնտեղյակ են եղել այդ ձերբակալություններից և Եժովն ավանտյուրիստ է Ո՞վ է եղել իսկական ավանտյուրիստը Եժովը, թե՞ Ստալինը, որի անմիջական նախաձեռնությամբ են կատարվում այս ավազակությունները: Եթե Եժովի հրամանով էին ձերբակալել ու բանտարկել միլիոնավոր անմեղ մարդկանց, ապա Եժովին վտարելուց հետո նրանք պետք է ազատվեին, մինչդեռ մեկ մարդ անգամ աքսորից չազատվեց: Ստալինը Եժովի պաշտոնը հանձնեց Վրաստանի կոմունիստական կուսակցության քարտուղար՝ Բերիային:

Ինչ եղավ այդ «Երկաթյա նառկոմը», երբ նրան փոխարինեց մի ուրիշ տեռորիստ՝ ազգայնական մտքերով թունավորված, բարոյապես ընկած Բերիան: 36 միլիոն բանտարկյալներից նույնիսկ կեսը չեն վերադարձել իրենց ընտանիքների գիրկը: Կոմ. կուսակցության բոլոր առաջավոր, բանիմաց, զործից հասկացող խելացի մարդիկ բոլորն էլ բանտարկվեցին և գնդակահարվեցին: Այդքան շատ գրագետ կոմունիստներին փոխարինեցին չեկիստները, միլիցիայի աշխատողները և իրենց ենթակա լրտեսները: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այդ առաջ քաշված հակաժողովրդական տարրերը մնա-

ցին թիկունքում: Թիկունքում այդ երեսառած ստալինյան հրոսակների համար կինն էլ էր առատ, գինին էլ: Պատերազմը վերջացավ: Երկրի ներսում իշխանության գլուխ մնացին ստալինյան հրոսակները, որոնց պաշտոններ տալու ժամանակ Ստալինը հայտարարեց. «Համարձակ առաջ քաշել երիտասարդությանը»: Այսօր, որ կաշառակերությունը, շորթունը և գողությունն իժի նման փաթաթվել են դժբախտ ժողովրդի վիզը, մեղավորները «համարձակ կերպով առաջ քաշած» ստալինյան բազեներն են:

Կաշառակերությունը և շորթունը, անազնիվ ճանապարհով կոմունիստ իշխանավորների հարստանալը, նրանց շատերի միլիոնատեր դառնալը ամեն հավատ դեպի Կոմունիստական կուսակցությունը կործանեց: Բանն այն է, որ երկրում գոյություն ունի միայն մի կուսակցություն, նրանից ազատվել անհնար է: Ապրելու համար հարկավոր է լարված աշխատել և օրը մթնեցնել լռելով, իսկ լավ ապրելու համար հարկավոր է գովել և ծափահարել կոմունիստ կաշառակերներին: Հի-նը, ազնիվն այլևս չկա:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈԳԴԱՆՈՎԿԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Գարելովկա և խանչալի գյուղերի գյուղացիների դատը*

1937 թ. գարնանն ամբողջ երկրում սկսվեցին ձերբակալությունները: Սև ավտոմեքենաները գիշեր ու ցերեկ շրջում էին ամենուրեք և հավաքում «կասկածելի» մարդկանց: Ձերբակալությունների թիվը հարյուրներով կամ հազարներով չէր հաշվվում, այլ միլիոններով: Ահը մարդկանց մեջ այն աստիճանի էր հասել, որ գիշերները շատ շատերը անկողին չէին մտնում, այլ նստում էին շորերով: Վախենում էին, թե հանկարծ սև մեքենան կգա ու անկողնուց կտանի՝ առանց հագուստի: Սովետական Միությունը զանազան պատրվակների տակ մեղադրելով մարդկանց (աջ թեքում, ծախ թեքում, սողացող ազգայնականներ, տեղական ազգայնականներ, կուլակներ, կուլակի պոչեր, կուլակի պաշտպաններ, դաշնակցականներ, մուսավաթիստներ և այլն, և այլն...) անխնա ձերբակալում էր: Սպիտակ ծովից Բալթիկ ծովն անցկացրած մեծ ջրանցքը միլիոնավոր անմեղ մարդկանց տաժանակիր աշխատանքով է կառուցված: Հազարավոր անմեղ մարդիկ են թաղվել հողակույտերի տակ: Ամբողջ Սիբիրը լեփ-լեցուն է տասնյակ միլիոնավոր արքայալուծներով, որոնց թվում մեծ տեղ են գրավում ընտանիքով արքայալուծները: Այնպես որ բոլոր տեղերն էլ լիքն էին սովետական բռնակալի համար ձրի աշխատողներով:

Այս ձերբակալություններից անմասն չմնացին Ախալքալաքի և Բոգդանովկայի հայկական շրջանները: Բանտարկյալների նկատմամբ անմարդավայել վերաբերմունքը ի՞նչ լեզու կամ ի՞նչ գրիչ կարող է պատմել: Բավական է հիշել, որ ձերբակալվածին ստիպում են հանձն առնել ներկայացրած մեղադրանքը, եթե չի ուզում բոքիկ ուտքով ման գալ մեխերով ծածկված տախտակների վրա, ժամերով մերկ կանգնել սառցարանում, մտրակի հարյուր հարված ընդունել, մեջքի վրա պառ-

* Պիտի լինի Գորելովկա (Гореловка, Горелое):

կած քրից ջուր լցնել ներս, ուժով հարաբերություն ունենալ քած շան հետ, առողջ ատամները հերթով քաշել, բեղ ու մորուքի մազերը մեկ-մեկ պոկոտել և էլի այնպիսի մարմնական տանջանքներ, որոնց անունները չի գրանցվում թեկուզ մեզնից հազար տարի առաջ: Ձերբակալվածների գույքն անմիջապես բռնագրավում էին ու բաժան-բաժան անում իրար մեջ: Ձերբակալվածների կանայք ու աղջիկներն իրենց ամուսիններին ու ծնողներին հաց չէին տանում: Հաց տանողներին մեղադրում էին «հակահեղափոխականին» օգնելու մեջ և ձերբակալում: Պետ. քաղվարչության շենքերը պոռնկանոց էին դարձել: Ինչքան անմեղ մարդիկ են ձերբակալվել միայն նրա համար, որ նրանք գեղեցիկ կին ունեն: Կինը, երբ հաց է տանում ամուսնուն, ընկնում է գազանների որջը, և վերջացավ: Ոչ մի կին չէր կարող հրաժարվել բարբարոսների անասնական ցանկությունը կատարելուց: Երկիրն արյուն էր լալիս: Այդ ժամանակներում ձերբակալել էին Գարեշուկա գյուղից 12 մարդ՝ 11 կին և մեկ տղամարդ: Սրանց մեղադրում էին այն բանի մեջ, որ Նոր տարվա օրը փողոցում երգել են մի շատ հին կրոնական երգ: Երգի մեջ, իմիջիայլոց, ասված է, որ հետագայում «սուտ Բրիստոս, սուտ մարգարեներ, սուտ քարոզիչներ են աշխարհ գալու, չհավատաք»:

Այս խմբի «փակ» դատական նիստն է Բոգդանովկայում: Դատական «փակ» նիստին ես ներկա եմ եղել՝ որպես շրջանային դատարանի նախագահ:

Երբ մեղադրյալներին դատարան բերեցին, նրանց հետ միասին եկան ներքին գործերի ժողկոմատի միլիցիայի բոլոր աշխատողները: Դատարանի մուտքը փակ էր ժողովրդի և մեղադրյալների բարեկամ-ազգականների համար: Բոլոր նրանք, ովքեր ծեծելով ջարդուփշուր են արել այդ խեղճ կանանց և նրանց հետ գազանաբարո վարմունք ցուցաբերել, ներկա էին դատին: «Դատավորը» թրիլիսցի մի հայ էր՝ Չուրաբով ազգանունով: Այս «դատավոր» կոչեցյալը չունեի իր սեփական խելքը և ղեկավարվում էր ուրիշի խելքով: Ամեն անգամ, երբ գալիս էր շրջան՝ քաղաքական մեղադրյալների գործերը քննելու, նախ և առաջ խորհրդակցում էր դահիճների հետ, հետո միայն սկսում գործի քննությունը: Այս անգամ էլ այս կույր գործիքը, որը կոչումով, դժբախ-

տարար, «դատավոր» էր, դահիճների հետ խորհրդակցելուց հետո սկսեց «դատական փակ նիստը»: «Դատավորը» կարդաց մեղադրական եզրակացությունը: Ըստ մեղադրական եզրակացության՝ բոլոր մեղադրյալներն իրենք իրենց ճանաչում են մեղավոր: Պետ. քաղվարչության պետ Սաբոն (ազգությամբ հույն), նստած տեղից խոժոռ հասցրով նայում էր մեղադրյալներին և կարծես ուզում էր վեր կենալ ու հում-հում ուտել խեղճ կանանց, իր հայացքով հասկացնում էր. «Վայ՛ ձեզ, եթե հանձն չառնեք ձեր հանցանքը: Դատից հետո ինձ մոտ կգաք, այն ժամանակ լավ եք հասկանում՝ ինչ օրը կընկնեք»:

Մեղադրական եզրակացությունն ընթերցելուց հետո դատավոր կոչեցյալը հերթականորեն հարցաքննությանն անցավ: Հարցնում էր ստաջին մեղադրյալին.

- Դուք ձեզ մեղավոր ճանաչու՞մ եք ներկայացրած մեղադրանքի մեջ:

- Ես ինձ մեղավոր ճանաչում եմ Աստծո ատյանի առաջ:

- Ես ձեզ հարցնում եմ ներկայացրած մեղադրանքի վերաբերյալ:

- Ես հանցագործ եմ Աստծո առաջ, ուրիշ ոչ մի հանցանք չեմ կատարել: Չկատարած հանցանքի համար խոսք լինել չի կարող:

- Նախնական քննության ժամանակ դուք ձեզ մեղավոր ճանաչել եք:

- Նույն ցուցմունքը ես տվել եմ այնտեղ: Սուտ է գրված, թե իբր ես հանձն եմ առել հանցանքը: Ի՞նչ հանցանք ես կարող էի հանձն առնել, քանի որ ոչ մի հանցանք պետության առաջ չեմ կատարել:

Սաբոն տեղից վեր է թռչում. «Սրիկա՛, դու չէի՞ր, որ հանձն առար հանցանքը, դու չէի՞ր, որ ասիր. «Ես եմ եղել ընկերներիս հետ միասին: Սպասի՛ր, հացդ կուտես»»: Դատավոր կոչեցյալը չի լռեցնում Սաբոյին, այլ, ընդհակառակը, լսում է նրա ելույթը, որը վագրի նման հարձակվում է անպաշտպան կնոջ վրա:

- Ի՞նչ կասեք այն մասին, որ բոլորդ միասին փողոցում երգ եք երգել:

- Այո՛, երգել ենք:

Դատավորը դիմում է քարտուղարին. «Արձանագրի՛ր, որ մեղադրյալը հանձն առավ հանցանքը»: Քարտուղարն արձանագրում է: Սաբոն, ուրախացած «դատավորի» գյուտարարությունից, քրքջում է.

Ձեր երգի մեջ, իմիջիայլոց, ասված է. «Յետագայում սուտ Քրիստոս, սուտ մարգարեներ, սուտ քարոզիչներ են աշխարհ գալու, չհավատաք՝ նրանց»:

- Այո՛, ճիշտ է, այդ երգը հորինած է շատ տարիներ առաջ, և երգել են մեր նախնիները: Ոչ ոք դրա համար նրանց չի պատժել և չի հավածել: Շատ իշխանություններ, պետություններ են փոփոխվել, և ոչ մեկը չի հետաքրքրվել այդ երգով, քանի որ նրանք իրենց չեն նայել որպես սուտ քարոզիչների կամ սուտ մարտիրոսների: Երգում խոսվում է սուտ քարոզիչների մասին, սուտ մարգարեների մասին, ի՞նչ գործ ունի սովետական իշխանությունն այս խնդրի մեջ: Երբ մեզ ձերբակալում եք մեր հին կրոնական երգը երգելու համար, դրանով ավելի ևս կասկածանքի մեջ եք գցում ժողովրդին, որ դուք եք այն սուտ մարգարեն, որ պիտի գա:

Սաբոն բարձրանում է տեղից և ուժեղ ձայնով գոռում մեղադրյալի վրա.

- Լռի՛ր, սրիկա՛, ու՞մ ես անվանում սուտ քարոզիչ, ես քո հոգին կհանեն:

«Դատավորը» լռեցնում է մեղադրյալին:

Հարցնում է երկրորդ մեղադրյալին: Երկրորդ մեղադրյալը խնդրում է «դատավորից»՝ եթե բաց դատական նիստ է, թույլ տա իրենց բոլոր բարեկամներին, որոնք սպասում են դրսում, գան դատարան, իսկ եթե փակ նիստ է, դուրս անել բոլոր ներկա գտնվողներին, բացի պահակ միլիցիոներներից:

- Այդ դատարանի գործն է:

- Ես վախենում եմ Սաբոյի և մյուսների ներկայությամբ ցուցմունք տալ:

- Ինչի՞ց ես վախենում:

- Նրանից եմ վախենում, որ դատից հետո գիշերը նրանք ծեծելով կսպանեն մեզ:

Սաբոն կատաղում է. «Հարկավոր է գնդակահարել դրան, այդ ու՞մ է զրպարտում»:

- Քեզ ներկայացրած մեղադրանքի մեջ դու քեզ մեղավոր ճանաչում ես:

- Նախ դուրս արեք դրանց, հետո միայն կարող եմ ասել: Ես ոչ մի հանցանք չեմ կատարել: Այս բոլորն Աստծո գործն է: Երբ մենք ուրացանք մեր հավատը, Աստված մեզ պատժեց:

- Չէ՞ որ մենք անաստվածներ ենք, ինչպե՞ս կարող էր Աստված ձեզ պատժել մեր միջոցով:

- Այո՛, անաստվածներ եք: Աստված մեզ պատժում է նրա համար, որ մենք ուրացանք մեր հավատը: Անհավատին պատժելու համար Աստված ուղարկել է հավատ չունեցողների, որպեսզի խիստ պատժի մեզ: Հավատացյալը խիղճ ունի, նա չի կարող մեզ պատժել այնպես, ինչպես կարող եք պատժել դուք, անաստվածներ:

Դատավորը լռեցնում է ու արձանագրում այն փաստը, որ մեղադրյալը երգել է: Հարցաքննվում է երրորդ մեղադրյալը:

- Դուք ձեզ մեղավոր ճանաչու՞մ եք այս գործում:

- Այո՛, մենք երգել ենք, եթե սուտ մարգարեն և սուտ քարոզիչները դուք եք և դրա համար էլ մեզ պատժում եք, որ այլևս չերգենք, ցրենք ձեր ձեռքում է, պատժեք, ինչպես կամենաք: Իսկ եթե դուք չեք այդ սուտ մարգարեն ու քարոզիչը, որը պիտի գա ըստ երգի, այն դեպքում թողեք մեզ որ գնանք:

Դատախազը, որը մինչ այդ լռել էր ու իր իրավունքները սահմանափակել Սաբոյի ելույթներով, հարցրեց մեղադրյալին.

- Ուրեմն դուք մեղադրում եք սովետական իշխանությանը և մեր կոմունիստական կուսակցությանը սուտ մարգարեության և սուտ քարոզչության մեջ:

- Մեր երգած երգը հորինված է մեր նախահայրերի օրոք: Մենք ոչ ոքի չենք մեղադրում: Եթե դուք սուտ քարոզիչներ չեք, մենք ոչինչ լուռ ենք դրա դեմ: Մենք չենք մեղադրում ձեզ, այլ դուք եք մեղադրում ձեզ, երբ երգելու համար մեզ մեղադրում եք: Դատավորն անցնում է մյուս մեղադրյալների հարցաքննությանը: Մեղադրյալները հրաժարվում են պատասխանել իրենց տրված հարցերին:

Դատախազի այն հարցին. «Ինչու՞ չեք ուզում պատասխանել դատական կազմի հարցերին», մեղադրյալներից մեկը պատասխանում է. «Դուք մեզ կանչել եք դատարան և ներս եք բողել բոլոր չեկիստներին, որոնք մեզ քննել են ու բազմիցս անգամ ծեծի ենթարկել: Ի՞նչ կարող ենք ասել դրանց ներկայությամբ, դուք էլ եք վախենում դրանցից և անպայման պատժելու եք մեզ: Նրանք չեն եկել մեզ հսկելու, այլ եկել են ձեզ հսկելու, որ գործին օրինավոր ընթացք չտաք և մեզ՝ անմեղներին, չազատեք»:

- Ի՞նչ է, դուք դատարանին էլ եք մեղադրում:

- Ի՞նչ դատարան, ի՞նչ բան: Այսպես էլ դատարան կլինի:

Մեղադրյալները հրաժարվում են այլևս պատասխանել հարցերին: Սաբոն մերկացրած ատրճանակը գոտին խրած, մեկ դատական կազմի վրա է խոժոռում իր վայրենի հայացքը՝ մեկ անպաշտպան մեղադրյալների: Ներկաների մեջ կան տարբեր տարիքի կանայք՝ ծեր, միջահասակ և երիտասարդ: Մի տղամարդը 80 տարեկան էր՝ արդեն կորացած մեջքով:

Դատական քննությունը այսպիսով վերջանում է: Դատախազն իր ելույթում ասում է: «Չանցանքը պետք է համարել ապացուցված: Դրանց կարծիքով սուտ քարոզիչներ և սուտ մարգարեները կոմունիստներն են: Դրանց ելույթը մեր պետական օրգան պետքադվարչության դեմ է, որ իբր թե իրենց ծեծել են, իրենց հանդեպ ցույց են տվել անմարդկային արարքներ, դարձյալ իրենց հնարածն է: Մեղադրյալները թեև անգրագետ գյուղացիներ են, բայց և այնպես բոլորն էլ հակահեղափոխականներ են: Բավական է միայն այն փաստը, որ 12 մարդ միասին փողոց են դուրս եկել և երգել: Ո՞վ է տվել նրանց խմբովի փողոց դուրս գալու և երգելու իրավունք: Պահանջում են բոլորի հանդեպ, որ հանցանքը համարեք ապացուցված և ենթարկեք դատական պատժի ոչ պակաս, քան 10-ական տարի յուրաքանչյուրին»:

Եզրափակիչ խոսք է տրվում մեղադրյալներին: Բոլորը միասին խոնարհում են գլուխները և Աստուծոց խնդրում ներողություն, որ իրենց անհավատության պատճառով Աստված զցել է կոմունիստների ճիրանների մեջ, որպեսզի կոմունիստները նրանց տանջեն: Դատարանից խնդրում են վարվել այնպես, ինչպես պահանջում են նստող

յեկիստները, թող նրանց ցանկությունը կատարվի: Որքան էլ անգուք ու անարդար է դրանց ցանկությունը, դարձյալ Աստուծոց է, որ այդպես է եղել:

Դատական կազմը հեռանում է՝ դատավճիռ կայացնելու համար: Դահլիճում մնում են մեղադրյալներն ու չեկիստները: Սաբոն, մեկ-մեկ նայելով կանանց, ասում է. «Դուք մեզ զրպարտեցիք, շատ լավ, դատը կվերջանա, դուք կգաք մեզ մոտ, այն ժամանակ ես կխոսեմ ձեզ հետ, յմոռանաք, որ գիշերը ինձ մոտ եք լինելու»:

Դեռ երկար Սաբո կոչեցյալ մարդ-զազանը խոսում էր ու փառաբանում ներքին գործերի ժողկոմատի աշալուրջ աշխատողներին: Զանգը տվեցին: Դատական կազմը ներս մտավ դահլիճ (դահլիճ ասածը մի գյուղացու գոմ էր, որը հատկացված էր դատարանին՝ որպես դատական շենք: Գյուղացուց գրավված այդ գոմում դատական նիստերն էին գնում): Դատավոր Ջուրաբովը հայտարարեց.

- Ձեզ պետք է, որ տրվեր դատական պատիժ՝ ըստ ձեր կատարած հանցանքի 25-ական տարի, քանի որ դուք անգրագետ ու տարիքավոր գեղջկուհիներ եք, դատարանը խղճաց ձեզ և տվեց 10-ական տարի բանտարկություն: Դատավճիռը վերջնական է:

Այս «դատավոր» կոչեցյալը Ախալքալաք և Բոգդանովկա շրջաններում նման դատավճիռներ շատ էր հայտարարել և հազարավոր անմեղ մարդկանց արքար ուղարկել: Այս անգամ էլ դահլիճը հայտարարեց իրեն վայել դատավճիռ, այս անգամ էլ նա՝ «դատավորը», կատարեց տեղական պետքադվարչության և կուսակցական շրջանային կոմիտեի արյունոտ ցանկությունը: Դատական քննությունը և դատավճիռը հաստատեցին այն փաստը, որ մեղադրյալների երգում նշված սուտ մարգարեները և սուտ քարոզիչները, որոնց մասին խոսում է երգի հեղինակը և ժամանակին նախագուշակել է այդ մասին, հենց ինքը՝ Կոմունիստական կուսակցությունն է, սովետական բռնակալությունը: Դատավճռի հայտարարելուց հետո «դատավոր» Ջուրաբովը, օրորելով իր հաստ գլուխը, Սաբոյի հետ միասին դուրս գնաց: Բոլոր անմեղ մեղավորները սկսեցին մի աղոթք մրմնջալ: Մի պառավ կին, ձեռքերը պարզելով վերև, աղաղակեց. «Փառքդ շատ լինի, ո՞վ տեր Աստված, ամեն մեկին իր արժանի պատիժն ես տալիս: Այս սուտ

քարոզիչների, անհավատների, կրոնի և մարդկության այս անհաշտ թշնամիներին ե՞րբ ես պատժելու: Դու ես ստեղծել, դու ես այրել այս հրդեհը, դու էլ հանգցրու: Այս մարդակեր բորենիներին տա՛ր, վանի՛ր մարդկության միջից, եթե ոչ, մարդկությունը, հավատը և գիտությունը շատ շուտով կկործանվեն: Ո՛վ ամենակարող Աստված, իմ մեղավոր բերանով քեզ եմ խնդրում, եթե մենք հանցավոր ենք քո առաջ, խնայի՛ր միլիոնավոր անմեղ մանուկներին, որոնք կործանվելու են կոմունիստների ձեռքով: Երկիրն արդեն համատարած բանտ ու ճամբար է դարձել: Փրկի՛ր ժողովրդին, նրանք քո ստեղծածն են»: Դեռ շարունակում էր իր աղոթքը և փառաբանում Աստծուն, երբ մի միլիցիոներ հրեց նրան՝ ասելով.

- Առաջ անցիր, բավական է փնթփնթաս, սատկում ես, քո հոգսը չես քաշում, դարձյալ Աստծո ոտքն ես ընկել: Եթե Աստված կա, հապա ու՞ր է նա, ինչու՞ քեզ չի օգնում:

- Աստված ամեն տեղ է: Նա ինձ պատժեց իմ կատարած հանցանքի համար, այն բանի պատճառով, որ ես մոռացա իմ սուրբ հավատը: Նույն Աստվածն ավելի խիստ կերպով կպատժի մեզ տանջող բարբարոսներին:

- Ձայնդ կտրի՛ր, քյավթա՛ն պառավ, մեռած ժամանակ էլ ուզում ես քացի տալ:

Բոլոր բանտարկյալներին տարան Սաբոյի սարքած բանտը, Սաբոյի իշխանության ներքո:

1938 թ. հուլիսի 30-ին Բոգդանովկայի շրջանի ոստիկանության բաժանմունքը ձերբակալեց Փոքր Խանչալի գյուղի բնակիչներ Յարություն Սերոբյանին, Բագրատ Վարդանյանին, Նազար Բոդյանին, Անտոն Սահտեսյանին, Գրիգոր Բոդյանին, Վարդան Վարդանյանին և Սպիրիդոն Վարդանյանին: Ներկայացվեց մեղադրանք, որ նրանք լիներով հակահեղափոխական դաշնակցական կուսակցության անդամներ դեռ 1930 թ. նպատակ են ունեցել հարձակում կատարել սահմանապահ զինվորների վրա, խլել նրանց զենքերը, որպեսզի երկրի ներսում ապստամբություն բարձրացնեն, պետական կարգերը տապալելու համար: Դատարանում հայտարարվեց, որ այս հակահեղափոխական խմբին գլխավորել է Մեծ Խանչալի գյուղի քահանա՝ Վարդա-

պետյան Սահակը, որը բարեբախտաբար մահացել էր և ազատել իր ծեր ու տանջված մարմինը կոմունիստական տանջարանը զցելուց:

Դատավոր Ջուրաբովը հասկանում էր, որ խանչալեցիների գործը սարքած է ու զուրկ իրականությունից, բայց ինքն էլ էր վախենում անմեղ մարդկանց ազատելուց: Եթե նրանց ազատեր, կարող է ինքը դատապարտվեր նրանց փոխարեն: Գործը տեղափոխվեց գերագույն դատարան:

1938 թ. դեկտեմբերի մեկին Վրաստանի գերագույն դատարանի կոլեգիան քննեց գրպարտությանը հորինած այս գործը: Յենվելով անհիմն ցուցմունքների վրա, բոլոր մեղադրյալներին դատապարտեց տասական տարի ազատազրկման: Դատական նիստի ժամանակ բոլոր մեղադրյալները տանջված և այլանդակված տեսք ունեին: Մեղադրական աթոռին էին նստած յոթ անգրագետ ու կիսագրագետ հայ գյուղացիներ: Վկաները խոսում էին այն մասին, որ նրանք գործել են գերմանական Ֆաշիզմի ու ճապոնական իմպերիալիզմի ցուցմունքներով: Ոչ մի վկա օրինակ չէր բերում, թե ինչ ցուցմունքների մասին է խոսքը, կամ այդ ցուցմունքներն այս խանչալեցի անգրագետ գյուղացիներն ինչպես են ստացել: Մոսկվան հետագայում չեղյալ է համարում դատավճիռը և նորից կատարվում է վերաքննություն: Խեղճ մարդկանց այնքան էին ծեծել, տանջել և ստիպել էին խոստովանել, որ իրենք հանցագործ են: Գործը ուղարկեցին գերագույն դատարան՝ եռյակ դատարանին հանձնելու համար (գերագույն դատարաններին կից կազմված էին եռյակ դատարաններ, որոնք ընդունած գործերը քննում էին՝ համաձայն գործում եղած փաստերի, առանց մեղադրյալների ու վկաների ներկայության և կայացնում դատավճիռ):

Ոչ ոք, և ոչ էլ իրենք՝ մեղադրյալները, չիմացան, թե ինչպիսի դատավճիռ է հանված: Բանտարկության օրից անցել է տասներկու տարի, բայց ոչ ոք չի վերադարձել, քանի որ երկար տառապանքներ ու մարմնական սոսկալի տանջանքներ կրելուց հետո շատերը մահացել են:

Սովետական երկրում միլիոնավոր մարդիկ կան, որոնք դատապարտված են, բայց ոչ ոք չէր իմանում, թե ինչպիսի պատիժ է տրված նրանց: Ազգական-բարեկամների հարցումներին պատասխանում են.

«Ձեր մարդը կենդանի է, բայց իրավունք չունի նամակ գրելու: Ժամանակը լրանալուց հետո կվերադառնա»: Շատ բանտարկյալներ կան, որոնց բանտարկության օրից արդեն անցել է 15-20 տարի, բայց ոչ մի լուր չկա: Այդպիսիների ժամանակը կարող է լրանալ իրենց մահանալուց կամ սովետական բարբարոսությանը վերջ լինելուց հետո: Բոլոր կոմունիստներին ստիպում էին, որ իրենց գյուղերում մերկացնեն մարդկանց: Մերկացնել ասելով պետք է հասկանալ՝ մատնել անմեղ գյուղացիներին և բանվորներին: Նրանք, ովքեր շատ էին մատնում և մատնությունը դարձրել էին իրենց համար արհեստ, գովաբանվում էին կուսակցության և ներքին գործերի ժողկոմատի աշխատողների կողմից: Այն կոմունիստները, որոնք հեռու էին պահում իրենց զրպարտություն և մատնություն անելուց, այդպիսիների հանդեպ հալածանք էր տարվում, և շատ շատերին էլ ձերբակալեցին ու արքայազնացին: Եթե մի գյուղից մի քանի գյուղացիների բանտարկում էին, ապա հարևան գյուղի կոմունիստներին կանչում և ահ ու սարսափ էին տալիս. «Այդ ինչպե՞ս է ձեր հարևան գյուղից շատ հակահեղափոխականներ են ձերբակալվել, իսկ ձեր գյուղում դուք քարոշ եք գալիս դաշնակցականների պոչից: Դուք ի՞նչ կոմունիստներ եք, որ չեք կարող մերկացնել գյուղի հակահեղափոխականներին: Ո՞վ կարող էր առարկել կամ ասել, թե հարևան գյուղից ձերբակալվել են անմեղ ու ազնիվ աշխատավոր գյուղացիներ: Բերանդ բաց անելն ու ձերբակալվելը մեկ կլինեք: Այստեղից սկսվում էր զրպարտությունն անմեղ գյուղացիների վրա: Երբ չկար, հարկավոր էր մատնել ուրիշներին՝ սեփական կյանքը փրկելու համար: Շատ քչերը եղան, որոնք ոչ մի մարդու չմատնեցին: Այդպիսիները կամ արքայազնացին, կամ հեռացվեցին աշխատանքից ու ինձ նման տանջանքի ու աղբատության գիրկն ընկան: Իրավունք չունես բողոքելու և ոչ էլ նախատելու, քանի որ սովետական արդարադատությունն այդպիսին է, և եթե ահն ու սարսափը չլինեն, ո՞ր ժողովուրդն իր վզի վրա կկրի կոմունիստների դրած ծանր լուծը: Ամեն գյուղ, ամեն շրջան, ամեն քաղաք բանտ է, ուր էլ որ շուռ գաս, քո առաջ ծառանում է սովետական բանտը: Գյուղում կոլխոզային տանջարանն է, որտեղ գյուղացիներին անխնա ծեծում են և աշխատեցնում: Քաղաքում գործարան բանտն է, որտեղ բանվորներին են

աշխատեցնում գրեթե անվճար: Գլուխդ թեքեցիր կամ մի արդարացի խոսք ասացիր, Ձուրաբովի նման մի դատավորի ճիրանների մեջ կքնկնես ու կկործանվես: Կա՞ մի գյուղացի, որի վրա դատ կազմակերպած չլինեն պետական հարկերի վերաբերյալ: Եթե որևէ մի անձնավորություն պատահականորեն դուրս է մնացել դատվելուց, այդպիսիներին սովետական քաղաքացի չեն անվանում: Խոսելիս գյուղացիներն իրար հարցնում էին. «Դու սովետական քաղաքացի դարձե՞լ ես»: Այսինքն՝ դատի տակ ընկե՞լ ես և դատվե՞լ ես: Մի երկրում, ուր ո՛չ քաղավոր կա, ո՛չ էլ Աստված, բարբարոսությունից ավելի ի՞նչ կարող է լինել: Եթե երկրում միայն մի կուսակցություն գոյություն ունի, և ամեն մի գաղափար ընդդեմ իշխող կուսակցության ճնշվում է բանտերի և արքայազնների միջոցով, բացի խայտառակությունից, ճորտությունից, արքայից, ահ ու սարսափից ուրիշ ի՞նչ կարող է լինել: Սովետական երկիրը համատարած ճամբար է և բանտ: Այստեղ չի կարելի խոսք ասել արդարադատության մասին: Դինգ տարի, տասը տարի բանտարկությունը ուրախալի բան է ժողովրդի համար: Լավ են հասկանում, որ բոլորին անմեղ տեղն են պատժում, դարձյալ ուրախանում են, երբ դատարանը հինգ տարով է դատապարտում: Դատարանի պատժելու առթիվ ժողովուրդը երգ էր հորինել, որի մեջ, իմիջիայլուց, ասում էր. «Դինգ տարին բարի լույս է: Տասը տարին աչքի լույս է, տասնհինգ տարին էլի հույս է, քսան տարին մի քիչ ուշ է, քսանհինգ տարին, դատավոր ջան, չափից դուրս է»: 20-25 տարին այնքան սովորական ու ընդհանրական է դարձել, որ 5-10 տարին ուրախություն է, և ուն որ 5-10 տարով են դատապարտում, աչքալույս են տալիս: Էլ չեն հարցնում, որ կենդանի մարդը բոլորովին անմեղ տեղը 10 տարով Սիրիի է գնալու, քանի որ նման շատ անմեղներ 15-25 տարով են արքայազնացնում: 15-25 տարի արքայազնների թիվը մի քանի միլիոնի էր հասնում:

Վարդապետյան Վահագնի դատավարությունը

Փոքր Գոմդուրայի բնակիչ Վարդապետյան Վահագնին 1937 թ. սեպտեմբեր վերցնում են կալանքի տակ՝ կապելով նրան Դուլալիս գյուղի

ուսուցիչ Շիրակունի հորենի հետ: Իբր թե հորենը դաշնակցական է, իսկ Վարդապետյանը նրա մոտ ընկերն է, նա էլ, անշուշտ, դաշնակցական կլինի, և մեղադրում են, որ Ջանգեզուրի կռիվներին Վարդապետյանը դաշնակցականների բանակում է եղել որպես հրամանատար և կոմունիստների է սպանել:

Շիրակունի հորենը կարսեցի էր, բնակվում էր Ղուլալիս գյուղում, ուսուցիչ էր, բանիմաց և հայրենասեր մարդ: Հային արգելված էր սիրել իր հայրենիքը, իսկ խելացի մարդը չէր կարող խաղաղ ապրել:

Հալածանքը և անմարդկային վերաբերմունքը քիչ թե շատ կարդացած մարդկանց վերաբերյալ անխուսափելի էին: Շիրակունի հորենին և մի քանի ուրիշ ղուլալիսցիների 1937 թ. ձերբակալեցին և բռնություն էլ գնդակահարեցին:

Ներքին գործերի մինիստրության աշխատակիցները, որոնց «ստալինյան բազե» տիտղոսն էին տվել, մշակել և գործադրում էին անմարդկային այնպիսի միջոցառումներ, որ մեղադրյալները բռնություն էլ իրենց չկատարած հանցանքները հանձն էին առնում:

Վարդապետյանը երկու տարի բանտում անցկացրեց: Ապա Ախալքալաքում նշանակվեց գործի դատավարությունը: Վարդապետյանի գործի պաշտպանությունը ինձ վրա էի վերցրել:

Վրաստանի գերագույն դատարանի անդամ Պապայանը սկսում է դատավարությունը: Բաց դատ է, ներկա են բոլոր հրավիրվածները: Մեղադրող վկաներն են Մովսեսյան Պետրոսը, Կարակաշյան Մարտիրոսը, Ջուռնաջյան Գրիգորը, դաղեջցի Ալեքսանը, որը գյուղխորհրդի նախագահն էր Գոնդուրայում և ուրիշները:

Վարդապետյանը ոչ՝ մի բանի մեջ իրեն մեղավոր չի ճանաչում և իր դեմ հարուցած մեղադրանքները համարում է զրպարտություն:

Դատախազն առաջարկում է դատական քննությունը սկսել վկաներից, քանի որ մեղադրյալն իրեն չի ճանաչում մեղավոր: Գործում եղած վկաների ցուցմունքներից ելնելով՝ դատախազը վստահ էր, որ Վարդապետյանի դեմ հարուցած մեղադրանքները հաստատվելու են վկաների ցուցմունքներով: Քննում են առաջին վկա Մովսեսյան Պետրոսին: Մովսեսյանը զեկուցում է, որ Վարդապետյանի հավատարիմ ընկերն էր ակտիվ դաշնակցական Շիրակունի հորենը, և միասին էին

գործում՝ սովետական կարգերը տապալելու համար: Վարդապետյանը քահանայի տղա է, նա ուսուցիչ է և միևնույն ժամանակ դաշնակցական հրամանատար: 1920թ. Ջանգեզուրի կռիվներին Վարդապետյանը՝ որպես դաշնակցական հրամանատար, սպանել է կոմունիստների: Վարդապետյանը ժողովրդի թշնամի է:

Վկայի հերյուրանքներն ինչպես դատական կազմի, այնպես էլ դատախազի կողմից ընդունվեցին որպես անաչառ ցուցմունք, և ոչ՝ մի հարց չտվին վկա Մովսեսյանին: Իմ առաջին հարցը.

- Մեծ Գոնդուրայից Ջանգեզուրը երևո՞ւմ է:

- Ո՛չ, - ասում է վկան:

- Եթե չի երևում, ինչպե՞ս տեսար, որ Վարդապետյանը կոմունիստների է սպանում, և ովքե՞ր են այդ կոմունիստները:

- Ես լսել եմ,- պատասխանում է նա:

Վկայի նման ցուցմունքից հետո ես պահանջում եմ, որ վկան ցույց տա այն մարդուն, որից ինքը լսել է: Ականատեսին վկան չի ճանաչում: Մնացած բոլոր վկաները հրաժարվում են իրենց ցուցմունքներից՝ հայտարարելով, որ իրենք անձամբ ոչինչ չեն տեսել, այլ լսել են: Վարդապետյանը երկու տարի բանտ է նստել, դատախազը կաշվից դուրս է գալիս՝ ապացուցելու համար, որ երկու տարին նա անմեղ տեղի չի նստել, բավական է, որ Շիրակունի հորենի նման հակահեղափոխական մարդու հետ մտերմություն է ունեցել, և պահանջեց, որ Վարդապետյանին խիստ պատժեն:

Իմ պաշտպանական ելույթում ես պահանջեցի Վարդապետյանի դեմ զրպարտիչ միջոցներով լուրջ մեղադրանքներ հարուցելու համար՝ համաձայն Վրաստանի քրեական օրենսգրքի 58/10 և 58/11 հոդվածների բոլոր վկաներին՝ որպես հատուկ զրպարտիչների, վերցնել կալանքի տակ: Առանձին դատական որոշմամբ գործի քննությունը և մեղադրանքները ձևակերպելն ու դատական պատասխանատվության ենթարկելը հանձնարարել շրջանային դատախազին:

Դատախազը զրպարտիչներին իր պաշտպանության տակ է վերցնում: Դատական կազմը մեկուսանում է՝ դատավճիռ կայացնելու համար:

Դատավորը հայտարարում է դատավճիռը.

- Վարդապետյանին ճանաչել մեղավոր հակասովետական մարդկանց հետ առնչություն ունենալու մեջ և ենթարկել ազատագրկման երկու տարի ժամկետով: Ի նկատի ունենալով, որ երկու տարի նա բանտում է եղել և դատարանի կողմից որոշած պատժի չափը՝ երկու տարին, նա արդեն կրել է, անմիջապես ազատել կալանքից:

Անարդար դատավճռից մենք գոհ մնացինք, քանի որ կոկորդիլոսի բերանից կենդանի էինք դուրս պրծել: Կասկած չկա, որ դատախազը դժգոհ մնաց: Դատավարությունը վարեց դատավոր Պապայանը:

Ուչմանա գյուղից Ամիրխանյանների և մյուսների ձերբակալությունը

Ուչմանա գյուղից քարտաշ վարպետներ Ամիրխանյաններին և նրանց ընկերներին 1937 թ. ներքին գործերի մինիստրության Բոգդանովկայի շրջանային բաժանմունքը կալանքի տակ վերցրեց՝ որպես դաշնակցական կուսակցության անդամների:

Գյուղում անցկացնում են միջոցառումներ՝ պետական ներքին փոխառության պարտատոմսերը տարածելու համար:

Քարտաշ վարպետներն աշխատում էին Բոգդանովկայում պետական շինությունների վրա՝ թվով 20 մարդ: Գյուղի դպրոցի դիրեկտոր, Փոքր Գոնդուրայի բնակիչ Տոներյան էղիկարը և կոլխոզի նախագահ, Յեշտիա գյուղի բնակիչ Էգնատոսյան Վանոն ցուցակ են կազմում, թե քարտաշը քանի ռուբլի է մուծելու փոխառության պարտատոմսի համար: Ազգանունների դիմաց նշումներ կատարելուց, ստորագրել տալուց ու փողերը հավաքելուց հետո, Տոներյանը գրում է վերնագիրը. «Ցուցակ Ուչմանա գյուղի Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամների»:

Տոներյանը և Էգնատոսյանը ցուցակը ներկայացնում են ներքին գործերի բաժանմունքի պետ, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Սաբոյին:

Սաբոն ինքն է սկսում «դաշնակցականների» գործի քննությունը: Քարտաշներն իրենց նախնական քննության ժամանակ բացատ-

րում են, որ այդ ցուցակով Էգնատոսյանը և Տոներյանը իրենցից փող են հավաքել ներքին փոխառության պարտատոմսերի համար, որ պարտատոմսերը ստանալուց հետո յուրաքանչյուրը ստանալու էր իր մուծած փողի չափով պարտատոմս, որ իրենք դաշնակցականներ չեն, որ ցուցակն ամբողջովին կազմել է Տոներյանը՝ Էգնատոսյանի անմիջական մասնակցությամբ, որ իրենք այդ գումարները չեն մուծել որպես անդամակցական վճար, Սաբոյի աջ ականջից մտնում, ձախից դուրս է գալիս: Սաբոն անցնում է իր սիրած միջոցներին՝ խոշտանգումներին: Քարտաշ վարպետներից շատերը 60 տարին անցկացրած բանվորներ էին և չէին կարող դիմանալ Սաբոյի ձեռնարկած գազանային միջոցառումներին, անմարդկային խոշտանգումներին:

Տոներյանը և Էգնատոսյանը գովասանքի արժանացան, իսկ Սաբոն, որ շրջանի բոլոր հայ գյուղերից «դաշնակցականներ» էր հավաքել ու լցրել բանտերը, Վրաստանի կառավարության կողմից ստացավ շքանշան: Խելացի հայ մարդիկ արդեն պարզ հասկանում էին, որ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցն է որոշվում: Հասկանում էին, որ Ստալինը Շահ-Աբասից էլ զորեղ թշնամի է և ոչ մի ջանք չի խնայում այս Պայաստան կոչված քար ու ժայռը սովետական քարտեզից վերացնելու, այն Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու համար: Սաբոն էլ լավ էր հասկացել և պատահական չէր, որ նա կուսակցության պլենումի ամբիոնից հայտարարեց.

- Բոլոր հայերը դաշնակցականներ են, հարկավոր է նրանց ոչնչացնել:

Ո՞ր հերոսը կարող էր Սաբոյի դեմ դուրս գալ և նրան քննադատել:

Ուչմանայի քարտաշների հարազատների խնդրանքով ես բողոք գրեցի Մոսկվա՝ գերագույն դատարանի նախագահի անունով: Հայտնեցին, որ դատավճիռը նրանց վերաբերյալ բեկանված է, և գործը վերադարձված է վերաքննության:

Ի՞նչ վերաքննություն կարող էր տեղի ունենալ, երբ 20 բանտարկյալից միայն մեկն էր կենդանի: Ո՞ր դատարանն էր դատել նրանց, որին ինչքա՞ն պատժաչափ էր որոշված, ով որտե՞ղ էր մահացել և ե՞րբ, ոչ ոք այդ մասին տեղյակ չէր: Կարծիքներ էին, որ խոսվում

եր, ոմանք ասում էին, որ մի քանիսը քննության ժամանակ դաժանաբար ոճեծից են մահացել, իսկ մի քանիսը տարագրության ճանապարհին: Որովհետև երկրում սահմանադրություն չկար, օրենքներին փոխարինում էր սանձարձակությունը, երկրի մի ծայրից մյուսն իշխում էր բռնակալությունը, բառի լայն իմաստով: Ի՞նչ եղան երկու գլխավոր գրպարտիչները: Էզնատոսյան Վանոն մի քանի տարի կոլխոզի նախագահ մնալուց հետո մահացավ գյուղում, իսկ Տոներյան Էդիկարը 1941թ. զորակոչվեց բանակ և սպանվեց բանակում:

Թեև 1938թ. հունվարյան պլենումում համամիութենական Կոմ. կուսակցությունը հայտարարեց, որ երկրի ներսում շատ անարդարություններ և սխալներ են տեղի ունեցել, սակայն միայն խոսվեց: Անարդարության զոհերից շատերն արդեն չկային, դրանց թիվը միլիոններով էր հաշվվում, իսկ մնացած շատ միլիոններ այնպես էլ մնացին աշխատանքային ճամբարներում և ոչնչացան:

Ժամանակն ապացուցեց, որ եթե մի մեծ պետության գործերը կառավարում է միայն մի կուսակցություն, երկրորդ կուսակցություն գոյություն չունի, չկա նույնիսկ ընդդիմություն, այդ երկրի ժողովուրդների կյանքը պետք է կործանված համարել: Երկրում գործող սահմանադրությունը կոչվում էր «Ստալինյան սահմանադրություն»: Երբ երկրի հիմնական օրենքը մի ճանաչված արյունոտ չարագործի անունն է կրում, այդ անունն ինքնին խոսում է օրենքի բացակայության մասին: Ինչքան միլիոններ ուչմանեցիների նման անմեղ զոհ դարձան «Ստալինյան սահմանադրությանը»:

1932 թ. օգոստոսի 7-ի օրենքը՝ գրված Ստալինի արյունոտ ձեռքերով:

Արյունոտ ձեռքերով և արյունով գրված օրենքում ասված էր. «Պետական և հասարակական գույքի հափշտակման դեպքում՝ զնդակահարություն: Սեղմացուցիչ հանգամանքների դեպքում՝ ոչ պակաս 10 տարի»: Գործերի թիվն անհաշիվ էր: Սերմնացան կոլխոզիկն իրավունք չունեի իր ցանած ցորենը կախելիս մի կիլոգրամ ցորեն իր

տուն տանել: Կոլխոզային գյուղացին ծայրաստիճան աղքատ էր և կարիքից ստիպված՝ նա մեկ կամ երկու կիլոգրամ հացահատիկ իր ցանած, մշակած բերքից եթե ցանկանար տուն տանել՝ առանց մտածելու, որ դա սովետական օրենքով համարվում է հասարակական գույքի հափշտակում և դրա համար կարող են իրեն ենթարկել զնդակահարության, չէր տանի:

Յոզագործ մարդն ինչ աստիճանի պետք է հասած լինի, որ գրպանով կամ վարտիքով մեկ կամ երկու կիլոգրամ հացահատիկ գողանա, այն էլ քրտինքով վաստակած հացահատիկից: Այս ձևով, այսպես կոչված հափշտակումների գործերը, շրջանային դատարաններին չէին տալիս: Քանի որ օրենքով նախատեսվում էր զնդակահարություն, դրա համար էլ տալիս էին գերագույն դատարան:

Ախալքալաքի շրջանում, որտեղ ես աշխատում էի որպես շրջանային դատարանի նախագահ, Վրաստանի գերագույն դատարանը հաճախ էր նշանակում դատական նիստեր:

Քանի որ անմեղ զոհերի դեմ դատական նիստերում որպես պետական մեղադրող ելույթ էր ունենում դատախազը այդ պատճառով էլ, թեկուզ որպես ձևական կողմ, դատապաշտպանի մասնակցությունն անհրաժեշտ էր:

Ախալքալաքի դատապաշտպաններից Սեծատունյան Խորենին կանչել էին ներքին գործերի շրջանային բաժանմունք և լուրջ կերպով զգուշացրել նրան այն բանի համար, որ նա դատական մի նիստում հայտարարել էր, որ կոլխոզիկի ընտանիքում մի ամբողջ տարի միս չեն կերել, և երեխաների թախանձագին խնդրանքից ելնելով՝ հայրը մի հավ է տարել կոլխոզի հավանոցից: Դատապաշտպանը սխալմամբ ճշմարտությունն էր ասել, որը չէր կարելի: Ինչքան անգամ, որ գերագույն դատարանը դատական նիստեր էր նշանակում մեր շրջանում, մեր դատապաշտպանները պահվում էին, որպեսզի այսպես կոչված «մեղադրյալների» պաշտպանություններն իրենց վզին չփաթաթեն: Դատական նիստերում արձանագրությունների մեջ նշվում էր, որ մեղադրյալը կամովին հրաժարվում է դատապաշտպան ունենալուց:

Առանց դատապաշտպանի մասնակցության գործերը քննվում էին դատական կարգով: Բոլոր դեպքերում էլ, որպես մեղմացուցիչ

հանգամանք, նշվում էր մեղադրյալի տարիքը, նրա ընտանիքի շնչերի քանակը, առաջին դատավճուրքունը, սոցիալական ծագումը: Համաձայն օգոստոսի 7-ի որոշման՝ կոլխոզի կալից երկու կամ երեք կիլոգրամ հացահատիկ կամ համայնացրած հավերից մի հավ հափշտակելու համար ենթարկել ազատագրկման տասը տարի ժամկետով, անձնական գույքի գրավումով՝ չտարածելով հանցագործի վրա որևիցև ամնիստիա (համաներում): Դատավճիռը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Սովետական բանտերն արդեն տնքում էին բոլորովին անմեղ բանվորներով և գյուղացիներով: Աշխարհին հայտնի է, որ 1930 թ. համատարած կոլխոզային շարժումն անցկացվել է բոլոր ժողովուրդների կամքին և ցանկությանը հակառակ, զենքի ուժի ներքո, բանտի ու տարագրության միջոցով: Ստալինն ամբիոնից հայտարարեց.

– Ովքեր մեզ հետ չեն՝ մեր դեմ են, այդպիսիներին մենք ոչնչացնում ենք:

Կոլխոզների կառուցումը սովետական ժողովուրդներից 50 միլիոն մարդկային զոհեր է տարել:

Լենինը խաբելով կործանեց, իսկ Ստալինը խաբվածներին բռնի ուժով էր կործանում: Աշխատավոր մարդիկ, հատկապես հողի մշակը, ենթարկվում էին բացարձակ ճորտացման: Անասունների համայնացման ժամանակ գյուղացիները մորթում էին իրենց հղի կամ նոր ծնած կովերը և ոչխարները, որպեսզի չհամայնացնեն: Աշխատավոր գյուղացու համար ծնած կովը կամ ոչխարն իր երեխայից էլ թանկ էր, բայց քանի որ գոմից քաշում տանում էին, նա մորթում էր՝ արցունքն աչքերին: Ռուսական անծայրածիր Սիբիրը վերածվել էր համատարած ճամբարի: Տարագիր աշխատավոր գյուղացիների թիվը միլիոններով էր հաշվվում: Ամենուրեք իշխում էր ահն ու սարսափը: Ստալինյան «բազենները» վխտում էին ամեն տեղ: Որդուն հոր դեմ էին հանում, հորը՝ որդու, հատուկ դպրոցներ բաց արին՝ երիտասարդությունը փչացնելու համար:

Այդ դպրոցներում սովորեցնում էին պայքարի տարբեր միջոցներ՝ այսպես կոչված կուլակների, ուռճացածների և նրանց համախոհների դեմ պայքարը սրելու և որպես դասակարգ նրանց ոչնչացնելու

լու համար: Սովետական կարգերը նրա թշնամիներից պաշտպանելու համար տարբեր ձևերով պայքարի միջոցներ էին սովորեցնում, որոնց մեջ առաջնակարգ տեղ էր գրավում մատնությունը և զրպարտությունը, առանց այն էլ հալածանքի ու տառապանքի ենթարկված հողի մշակի դեմ: Ամեն տեսակի միջոցառում անցկացվում էր ուժի միջոցով, դրա համար էլ օգոստոսի 7-ի ստալինյան օրենքն անհրաժեշտություն էր՝ ժողովրդի հանդեպ բոլոր տեսակի բարբարոսությունները պահելու համար:

Եթե օրենքների խստությունը չլիներ, օգոստոսի 7-ի անմարդկային, արյունով գրված օրենքները լույս չտեսնեին, թեկուզ մի չնչին ազատություն լիներ, անհնար կլիներ պահել զենքի, ահ ու սարսափի միջոցով ստեղծված տնտեսական, այսպես կոչված սոցիալիստական ձևերը: Այս նոր, արյունով ներկված թատերաբեմը մարդկությունը տեսնում էր, լավ էլ հասկանում էր անտեր ու անպաշտպան ժողովուրդների վիճակը, զգում էր, որ միլիոններ են զոհ գնում սոցիալիզմի կառուցման գործին, սակայն անտարբեր էր: Անտարբեր էլ մնացին միայն նրա համար, որ երկրի ներսում դժգոհությունը կոմունիստական կարգերի դեմ մեծանա, ուժեղանա:

Ի վերջո հասկացան, որ տասնյակ միլիոնավոր դժգոհները, երբ ճորտացման աստիճանի են հասցրած, մի անզորություն են զինված ճորտատիրոջ մոտ: Հասկացան, բայց արդեն ուշ էր, արդեն ճորտատերն իր ճորտերին ձեռքից բաց չի թողնում, ճորտերին իրենց ձեռքերի մեջ պահելու համար ունեն ատոմ: Հասկացան, որ երկիրը նման է համատարած ճամբարի, իսկ սովետական ճորտը բոլորովին անզոր է փշրելու ճամբարի պատնեշները, որոնք լայն են քան Չինական պատը և բարձր՝ քան Բաբելոնի աշտարակը: Այս ճորտը բոլորովին նման չէ իրենից առաջ գոյություն ունեցած ճորտերին: Այն ճորտը վերակացուների հսկողության ներքո աշխատում էր իր տիրոջ համար: Այս ճորտը, բացի լարված աշխատանքից, պարտական է գովելու, մեծարելու, փառաբանելու և ծափահարելու իրեն ստրկացնողներին: Չմեծարելը, չծափահարելը դժգոհության նշան է համարվում, այդպիսի ճորտերը պատժի են ենթարկվում: Ժողովրդի կողմից կարծիքներ հայտնելը խստիվ արգելված է: Համարձակները միշտ էլ ենթարկվել

են ոչնչացման, քանի որ երկրում իշխում է միայն մի քաղաքական խումբ և այս ավագակախմբին դժվար է մերկացնելը: Երկրում անչափ տարածված է լրտեսությունը: Բոլոր գիտնականները, գրողները, բարձր պաշտոնյաները համոզված են, որ իրենց հետևում են: Բոլորն էլ վախենում են, բոլորն էլ զգույշ են:

Սովետական օրենքների խստությունից բոլոր, այսպես կոչված բանվորները և հողից զրկված հողի մշակները սարսափում են: Ելք չկա: Միակ ելքը լարված վիճակում աշխատելն է և անխոս ընդունելը տիրոջ կողմից պարգած հացի փշրանքները: Դատավորներից շատերը հարկադրված կիրառում էին այդ անօրեն օրենքները: Շատ դատավորներ աշխատանքից հրաժարվում էին, ոմանք էլ չկատարելով սովետական օրենքները՝ իրենց բոլոր խստությամբ, բանտ էին ընկնում որպես անհարազատ, անհավատարիմ տարր: Ո՞ր ազնիվ մարդը կարող էր ստորագրել 10 տարի ազատազրկման կամ գնդակահարման դատավճիռը, երբ դատվող զոհը ընտանիքում թողնում է մի տուն լիքը մերկ ու սոված մանուկներ: Երբ մեղադրական աթոռին նստած դժբախտ մեղադրյալը մի խուրձ խոտ է տարել կոլխոզի կալից՝ իր հնձած խոտից, կամ 2-3 կգ գարի կամ ցորեն է տարել իր ցանած, հնձած արտի բերքից:

Ո՞ր դատավորը չէր հասկանում, որ այսպիսի գործեր, նման հանցագործություններ անցյալում չեն եղել և չէին էլ կարող լինել: Ժողովրդից ձրի վերցրած ցորենի մի փութը պետությունը վաճառում է հարյուր ռուբլով: Այս անառակությունը հանցանք չի համարվում, իսկ եթե մի խեղճ մարդ մի տուփ լուծկի վաճառի, կամ տասը հատ ձու, տասը տարի բանտարկություն կտան: Կալից մի խուրձ խոտ տանելը կամ 3-4 կգ հացահատիկ և 10 տարի բանտարկություն ստանալը չարիք է, որը ծնունդ առավ, այսպես կոչված, սոցիալիստական նոր տիպի տնտեսություններ ստեղծելիս: Միայն 1948 թ. ամբողջ երկրից միլիոնավոր կոլխոզնիկներ արքորվեցին Սիբիր՝ պարտադիր կարգով աշխատանք կատարելուց խուսափելու համար: Տարվա ընթացքում կոլխոզնիկը պարտադիր կատարելու էր 120 աշխօր: Երեք օր աշխատելու դեպքում միայն՝ կոլխոզնիկը կվաստակի մեկ աշխօր: Կոլխոզնիկներին արքորելով՝ մի կողմից ահ ու սարսափ էին տարածում,

մյուս կողմից էլ՝ արքորվածները Սիբիրում նույն պարտադիր աշխատանքն էին կատարում: Սոցիալիզմն այնքան զոհեր խլեց մարդկությունից, որքան զոհեր չէր տվել աշխարհը մի քանի դարում:

Մատնությունների ուժեղացումը երկրում

Կուսակցության և կառավարության վարած քաղաքականությունը պատճառ դարձավ մատնությունների տարածմանը: Շատերն, անգամ իրենց կամքից անկախ, դարձան մատնիչներ: Մատնությունը հայրենիքի հանդեպ՝ բոլոր հանցանքներից ծանրագույնն է:

Ինչպես ամբողջ երկրում, այդպես էլ մեզ մոտ, մատնություններն ու զրպարտությունները թիվ ու սահման չունեին:

1926 թիվն է. ես աշխատում եմ Գոնդուրայում որպես կուսակցության բեմական կոմիտեի քարտուղար: Մեր գավառից երեք կոմունիստների՝ ինձ, Մկոյան Յակոբին և Աղայան Եղիշեին, երեք անսով ուղարկեցին Թբիլիսի՝ կուսակցականների համար կադրերի վերապատրաստման կուրսեր անցնելու: Ծալկայի շրջանից էլ կար մի հայ տղա: Ինձ հանձնարարվեց, որ նրանց համար քաղաքական գրականություն ընթերցեմ ու բացատրեմ: Դասընթացներն ավարտվելուց հետո անցանք մեր աշխատանքին: Տաս օր էի աշխատել, երբ ինձ շտապ կաչեցին գավառական կոմիտե: Գավառական կոմիտեի քարտուղար Սաշա Նազարովը հանձնարարում է աշխատակիցներ Պետրոսյանին և Յրաչյա Գալստյանին, որ ինձ հարցաքննեն: Պետրոսյանն իր առանձնասենյակում դիմում է ինձ.

- Կուսակցությունը ձեզ ուղարկել է Թբիլիսի՝ սովորելու՞ և համար, թե՞ գաղտնի տրոցկիստական ժողովների հաճախելու:

Գաղտնիքն ինձ համար պարզվեց: Աղայանը մեր պարապմունքներին չէր մասնակցել ու ինձ և Մկոյանին զրպարտել էր:

1926 թ. ժամանակի ամենածանր մեղադրանքն էր, պատժի չափը միայն գնդակահարությունն էր, եթե զրպարտությունը նույն ձևով երկրորդ մարդը հաստատեր: Ներս է մտնում զրպարտիչ Աղայանը: Իմ հարցին, թե ես և Մկոյանը տրոցկիստական ժողովների մասնակցե՞լ

ենք, պատասխանը լինում է՝ այո: Իմ երկրորդ հարցին՝ քեզ ո՞վ էր հանձնարարել, որ այդպես հետապնդել ես մեր քայլերը:

- Ոչ ոք: Ես իմ նախաձեռնությամբ եմ հետևել ձեզ,- պատասխանեց նա:

Իմ վերջին հարցին. «Ո՞րն է այն շենքը, որտեղ տեղի էին ունենում մեր գաղտնի ժողովները»: Պատասխանը մեկն էր, որ ինքը շենքի տեղը չգիտի: Չարքը պարզ էր, գրպարտիչը մերկացված էր: Իմ պահանջը՝ Աղայանին կուսակցությունից վտարելու և նրա դեմ դատական գործ հարուցելու վերաբերյալ, կուսկոմիտեն թողեց անհետևանք: Սատնիչներն օգտվում էին ներքին գործերի բաժանմունքների աշխատողների հովանավորությունից և անձեռնմխելի էին համարվում:

Մկոյան Չակոբը 1937 թ. աշխատում էր Բոգդանովկայի շրջանում որպես շրջանային գործադիր կոմիտեի նախագահ: Աղայանի և մեկ ուրիշի գրպարտությամբ Մկոյանը ձերբակալվում է որպես տրոցկիստ և գնդակահարվում:

1928 թ.: Աշխատում եմ Կարգախ գյուղում, որպես թեմական կոմիտեի նախագահ: Կարգախը գտնվում է Թուրքիայի սահմանի վրա: Իմ աշխատասենյակ է մտնում մի զինվորական և հայտնում, որ սահմանապահ ղեկավարությունն ինձ կանչում է: Մի քանի օր առաջ ձմեռային վերարկու էի գնել կարգախցի պլանջոնց Սարգսից: Մտնում եմ սահմանապահների ղեկավարի աշխատասենյակը: Երեք սպաներով մոտենում են ինձ և ուշի-ուշով, դիտում իմ հագի ձմեռային վերարկուն, առանց խոսք անգամ ասելու ինձ հետ են ուղղարկում:

Կոմենդանտից պահանջեցի, որ բացատրի ինձ անհանգստացնելու պատճառը:

Մեզ հաղորդել էին,--պատասխանում է նա, որ ձեր հագի վերարկուն դուք գնել եք Պլանջյանից, իսկ Պլանջյանը այն բերել է Թուրքիայից: Մեր ստուգումից պարզվեց, որ ձեր հագի վերարկուն ռուսական է: Իսկ ով է մատնիչը, նա չասաց:

Այս անախորժ դեպքի մասին ես գրույց ունեցա վերարկուն ինձ վաճառողի հետ: Նա պատմեց, որ իրեն էլ են կանչել և ինքը հայտնել է, որ ինքը Թուրքիայում չի եղել, որ վերարկուն գնել է Ախալքալաքում, իր վրա կարճ է եղել և իր արժեքով տվել է գործկոմի նախագահին:

Նրան չեն հավատացել և վերարկուն զննելուց հետո միայն համոզվել են, որ Ղոխոյան Սրապի տեղեկությունը ճիշտ չէ:

Մի կիրակի օր Ախալքալաքի շուկայի հրապարակում 10-12 կոմունիստներ զրուցում էին մեր գավառի աշխարհագրական դիրքի, լեռների, հարուստ արոտավայրերի մասին: Օգտվելով առիթից՝ հարցրեցի. Ինչո՞ւ հայկական շատ քաղաքների, լճերի և ավանների անուններ սկսվում են կամ վերջանում «վան» մասնիկով՝ Վան, Վանանդ, Կաղզվան, Իջևան, Ավան, Նախիջևան, Սևան, Թափարվան և այլն: Ինձ չէր հետաքրքրում, թե ինչու են սկսվում կամ վերջանում «վան» մասնիկով, այլ ուզում էի հասկացնել, որ Ախալքալաքի գավառը պատմական Չայաստանի հյուսիսային գավառներից մեկն է, որ Աբուլ-Սամսար լեռնաշղթան, թագուհի զուլալ Թափարվան լճով մտնում է Չայկական լեռնաշխարհի մեջ: Բոլորն էլ նայում են ինձ: Ծանոթ լինելով իմ համարձակությանը՝ ձայն չեն հանում: Ուզունյան Շավարշը, իր ելույթանը հատուկ, հայտարարում է.

- Այս մարդը ինչու է Թափարվանը խառնում հայկական լճերի հետ: Թափարվանը Վրաստան է, այն վրացական լիճ է: Մազերս փշաքաղվեցին: Դիմելով նրան ասացի. եթե չխոսեիր, ոչ մեկը քո հիմար լինելը չէր իմանա: Ուզունյանը դժգոհ հայացք գցելով մեզ վրա՝ հեռացավ: Նա դժգոհ էր, որ կանգնածներից ոչ մեկը չկրկնեց նրա ասածները:

Ղուլալիս գյուղում, որպես դպրոցի դիրեկտոր, աշխատում էր Շիրակունի հորենը: Խորենը կարսեցի էր: Մոտիկից ճանաչում էի. խելացի, կարդացած, խոհեմ, ազնիվ ու մարդասեր էր: Ղուլալիսում, որպես կոլխոզի նախագահ, աշխատում էր մամգարեցի Վարդանյան Արեքը: Նա միայն իր ազգանունը գրել գիտեր: Վերջինս կազմակերպում է գյուղի խանութի կողոպուտը և գողությունը բարդում «ղաշնակցական» Շիրակունու վրա: Ո՛չ Խորենը կա, ո՛չ էլ մյուս ձերբակալված ղուլալիսցիները: Ոմանք գնդակահարվել են, ոմանք էլ, ծեծին ու տանջանքներին չդիմանալով, մահացել են հարցաքննությունների ժամանակ, իսկ մատնիչները գովասանքների ու կրծքանշանների են արժանացել: Շիրակունին խելացի մարդ էր: Ոչ մի խելացի հայ մարդ այդ ժամանակ խորհրդային կառավարության հանդեպ թշմական քայլ

չէր անի: Ո՞ր խելացի հայը չէր հասկանում, կամ չի հասկանում, որ հակասովետական քայլը հայ մարդու կողմից կարող է պատճառ դառնալ ամբողջ հայության կործանմանը:

Կուլիկան գյուղում Ուզունյան Շավարշը և Երեմյան Աղասին այն աստիճանի ահ ու սարսափ տարածեցին իրենց գյուղում, որ շատ գյուղացիներ, վախենալով ձերբակալությունից, 1930 թ. գարնանը թողած իրենց տունն ու ընտանիքը, անգն փախան՝ ապաստան գտնելու ճուրարների անտառներում: Այս անփորձ «ավազակները» գիշերը անտառի եզրին կրակ են վառում, որ տաքանան: Գիշերով կրակի լույսի վրա կրակելը հեշտ է: Ալաստան գյուղի կոմունիստները գիշերով կրակ են բաց անում, որի հետևանքով սպանվում է Այվազյան ազգանունով մի կուլիկամցի: Ճանաչողներն ասում էին, որ Այվազյանն ունի յոթ երեխա, որոնք բացարձակ սոված են: Կենդանի մնացած «գոհերը» թողնում են ճուրարների անտառը՝ որպես ապաստան, ու հեռանում են: Ո՞ւր գնացին, ի՞նչ եղան, որտե՞ղ անհայտ ու անթաղ գերեզման դարձան: Ո՛չ ոք չգիտի:

1930 թվականն է. Սուլդա գյուղում աշխատում են որպես գյուղխորհրդի նախագահ: Առավոտ վաղ իմ գրասենյակ է մտնում դեպուտատ Կիրակոսյան Սարգիսը և հայտնում.

- Ընկեր նախագահ, եկել են թարմ և լուրջ նորություն հաղորդեմ (գիտեմ, որ նրա լուրջ նորությունը մատնությունն է լինելու): Էլբակենց Զարությունի եզը սատկել է: Միսը վաճառել է անասնաբույժի թույլտվությամբ, իսկ եզան կաշին ծող-ծող է արել և վաճառել գյուղացիներին, մինչդեռ նա պարտավոր էր այն հանձնել պետությանը: Զարկավոր է խիստ միջոցների դիմել, եթե ոչ, ուրիշներն էլ կարող են հետևել նրա օրինակին:

- Զարցնում եմ.

- Քեզ հայտնի՞ է, որ կաշի չլինելու հետևանքով գյուղացիները բորիկ են:

- Այո՛, բորիկ են, բայց կաշին ծախելու իրավունք չունեն, պետք է հանձնեն պետությանը:

- Դու ցանկանում ես, որ քո հարևանները ոտաբորիկ՞ գնան դաշտային աշխատանքի:

- Մենք պարտավոր ենք պետության շահերը պաշտպանել:

- Ձեր կարծիքով մենք պարտավոր չե՞նք մեր ժողովրդի կարիքները հոգալու:

- Որ պարտավոր ենք, ի՞նչ անենք...

- Այն պետք է անենք, որ ականջներս չպետք է սրենք, աչքերս յոնք ու ամեն մի չնչին գործի համար մեր գյուղացիների դեմ քրեական գործ հարուցենք: Էլբակյան Զարությունը մի զույգ եզ ուներ և ուրիշ ոչինչ: Մսի և կաշվի գնով իր եզան համար ընկեր կզնի, միթե վատ կլինի: Ինչքան անախորժ և տգեղ բան էր, որ միրաշխանցի քրդի ձեռքից երեք փութ գարին խլեցիք և հանձնեցիք պետությանը: Քուրդը երեխայի նման լաց էր լինում և աղերսում, որ երեք փութ գարին վերադարձնեք, որ իր երեխաները սոված են (Սարգիսն անտեղյակ էր, որ իմ հրամանով գիշերով քրդի երեք փութ գարին վերադարձված էր ու նրան ապահով ճանապարհ դրած):

Սուլդա գյուղում եղած ժամանակս Սարգիսը այլևս ինձ մոտ չէր գալիս, «նորություններ» չէր բերում: Գյուղում աշխատելը շատ դժվար էր: Զամատարած կոլեկտիվացումը, գյուղացու կամքին հակառակ, քայքայել, աղքատության գիրկն էր գցել բոլոր գյուղացիներին: Զարկե՛ր, հարկե՛ր, անվերջ հարկեր. հավեր չունի, ծու և բմբուլ են պահանջում, ոչխար չունի՝ բուրդ ու մորթի, մի կովից՝ 400 լիտր կաթ, միս և այլն: Երկու եզ, երկու կով և մի քանի ոչխար ունեցող գյուղացու ունեցածը ձեռքից խլում են, իրեն «կուլակ» հայտարարում և ընտանիքով աքսորում:

1936 թ. Ախալքալաքից Յորդանյան Աղաբեկին, Անտոնյան Վաղինակին և մի դիլիսկեցու ուղարկում են Սուրամ՝ վերապատրաստման դասընթացների: Խոսակցություն է գնում, որ Աղասի Խանջյանը Թրիլիսիում ինքնասպանություն է գործել:

Անտոնյան Վաղինակը (Գոման գյուղից էր) ասում է. «Զայաստանի կոմ. կուսակցության կենտկոմի քարտուղարը տեղ չգտավ, եկավ Թրիլիսիո՞ւմ ինքնասպան եղավ. նրան սպանել են»:

Սուրամից Ախալքալաք գալուց հետո Յորդանյանը և դիլիսկեցին (անուն - ազգանունը մոռացել են) Անտոնյանի կարծիքը հայտնում են շրջանային գործադիր կոմիտեի կուսկազմակերպության քար-

տուղար Պողոսյան Շահենին: Շահենն անմիջապես հայտնում է կուս-
շրջանային կոմիտեի քարտուղարին: Անտոնյանը ձերբակալվում է և
գնդակահարվում:

Տարիներ անց Յորդանյանը, ծեծված, ցեխոտված, դեմքին ար-
յան հետքեր, եկավ ինձ մոտ, խնդրեց, որ դիմում գրեմ, քանի որ Ան-
տոնյանի տղան իրեն ծեծ ու ջարդ է տվել: Իմ հարցին, թե ինչո՞ւ է ծե-
ծել Անտոնյանի տղան, պատասխանում է, որ Անտոնյանի դատավա-
րությանը ինքը վկա է եղել:

- Յորդանյան, - ասացի ես, - գնա՛ քո մոր գերեզմանին: Նա, որ
քեզ նման տղա է ծնել, կարող է ինքն էլ օգնության գալ քեզ:

Յորդանյանը գնաց և այլևս չերևաց իմ աչքին:

Մի անգամ փողոցում կանգնած մի խումբ կոմունիստներ խո-
սում էին օրենքները: Նրանց մոտով անցնելիս՝ ինձ որպես դատավո-
րի, կանգնեցրին: Նրանցից մեկը խմբի անունից հարցրեց.

- Օրենքը մեր երկրում ավելի շատ ո՞ւմ շահերն է պաշտպանում.

- Այդ մասին կարդացեք Ա. Իսահակյանի Աբու Լալա Մահարին և
կիմանաք, թե ում է պաշտպանում օրենքը, - պատասխանեցի ես:

Խմբի մեջ կանգնած մի կոմունիստ՝ Կարգախ գյուղից, Կարա-
պետյան Կարդանը աշխատում է բոլորի ուշադրությունը սևեռել իմ
տված պատասխանի վրա և ցանկանում է այդ մասին հայտնել ոստի-
կանությանը: Մյուսները, ինձ լավ ճանաչելով, հրաժարվում են վկա-
յություն տալ:

Մի ուրիշ անգամ Ախալքալաքի քաղաքային այգում նստած
կարդում եմ էմիլ Դիլլոնի «Եղբայրական օգնություն հայերին» գիրքը:
Երեք հոգի մոտեցան և նստեցին իմ կողքին: Ջրույցի ժամանակ խոսք
բացվեց այն մասին, որ Կարտիկան և Բավրա գյուղերի գյուղացիները
քաղաք են թափվել և զբաղվում են մուրացկանությամբ: Մեկը կարծիք
էր հայտնում, որ հողը վատ են մշակում, մյուսը՝ թե ծույլ են, չեն աշ-
խատում: Իմ կողքին նստած քաղաքի բնակիչ Ղևանյան Արշակին
հարցրեցի, - մինչև սովետական իշխանության հաստատումը, այդ
գյուղերի բնակիչները այդ աստիճանի աղքատ է՞ին.

- Ո՛չ, - պատասխանում է Ղևանյանը: Պատճառը, ասում են շատ
պարզ է: Եթե բոլոր գյուղերն այդքան մոտ լինեին քաղաքին, բոլոր

գյուղացիներն էլ դրանց նման՝ հացի համար քաղաք էին թափվելու:
Այն հացը, որ մենք ուտում ենք քաղաքում, այդ մուրացիկների վաս-
տակած հացն է:

Այս խոսակցության հաջորդ օրն ինձ կանչեցին Կոմունիստա-
կան կուսակցության շրջանային կոմիտե: Կոմիտեի քարտուղար Գե-
լաշվիլու առաջին հարցը եղավ.

- Երեկ ի՞նչ գիրք էիր կարդում այգում: Համառոտ պատմեցի, որ
հեղինակը նկարագրում է 1896-1902 թթ. Տաճկահայաստանի հինգ վի-
լայերների հայերի կրած տանջանքները, կոտորածները և այլն:

- Դուք երկու անգամ մեղադրվել եք ազգային խնդիրներով
զբաղվելու մեջ: Երկու անգամ ձեր հարցը քննարկվել է կուսկոմի-
տեում: Երևում է, որ ձեռնարկած միջոցները ձեր հանդեպ մեղմ են
եղել: Ի՞նչ խոսակցություն է եղել այգում գյուղացիների աղքատու-
թյան և մուրացկանության մասին:

Ճշմարտությունն ասելն ու բանտ գնալը մեկ էր լինելու: Ժխտե-
ցի, որ նման խոսակցություն տեղի չի ունեցել, որ զրպարտում են՝ կեց-
ցն ստանալու համար:

Այդ դեպքից քիչ ժամանակ էր անցել, երբ ոստիկանության աշ-
խատողներից մեկն ինձ հայտնեց, որ որոշել են ինձ ձերբակալել, լավ
կլինի հեռանա՞մ շրջանից: Ստիպված եղա թողնել Ախալքալաքը և ըն-
տանիքով հեռանալ Արևելյան Վրաստան: Հայկական շրջաններ չէի
կարող գնալ, քանի որ հսկողությունն ավելի մեծ կլիներ, և ես թաքն-
վեցի Կախեթիայում:

Հայ կոմունիստներից ոմանք ժամանակին տեսնելով ազգի վի-
ճակը՝ պահանջ դրեցին, որ հայկական հարցը Անդրկովկասում պետք
է լուծում ստանա: Առաջին անգամ այս հարցը բարձրացրեց ազնիվ
հայրենասեր Ալ. Մյասնիկյանը: Մախառածեն և Մյասնիկյանը հայկա-
կան հարցի շուրջ լուրջ ընդհարումներ էին ունենում: Մոսկվայի հրա-
հանգով Մախարածեն և Բերիան կազմակերպեցին ինքնաթիռի հրդե-
հումը, որով Մյասնիկյանը թռչում էր Գագրա: Հայ հայրենասերների

Խոսքը 1925 թ. ավիաթարի մասին է, որն ամենայն հավանականությամբ, կազ-
մակերպվել էր վրաց բոլշևիկների կողմից:

դեն Վրաստանում գործում էր պետական տերոր: Երբ Տրոցկուն հարցրել էին ինքնաթիռի վթարի մասին նա պատասխանել էր.

-Այդ հարցը տվեք վրացի ուկլոնիստներին, որովհետև նրանք լավ տեղյակ են թե ինչու այրվեց ինքնաթիռը:

Հետագայում Հայաստանի մեջ չմտնող հայկական գավառների հայերի վիճակն ավելի վատացավ:

1936 թ. Ստալինի խորհրդով Թբիլիսիում հրավիրվում է խորհրդակցություն Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական ղեկավարների մասնակցությամբ: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանը Թբիլիսիում հարց բարձրացրեց Հայաստանին հայկական գավառների միացման վերաբերյալ: Միաժամանակ պահանջեց, որ Անդրկովկասի բյուջեն անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև բաժանվի արդարացիորեն: Վրաստանի կոմունիստական կուսակցությունն առանց ժամանակ կորցնելու, Խանջյանի առաջադրած խնդիրների մասին հաղորդում է Ստալինին: Նույն գիշերը Թբիլիսիում սպանվում է Աղասի Խանջյանը: Խանջյանի անմեղ արյունը չհագեցրեց Բերիային և նրա շուրջը հավաքված բորենիների ծարավը: Խանջյանի սպանությանը քաղաքական բնույթ տրվեց և հայտարարվեց, որ Խանջյանը հակահեղափոխական է, որ Պարսկաստանի սահմանագլխին նա հանդիպում է ունեցել Փարիզից եկած Չոբանյանի հետ և միասին ծրագրել են Հայաստանի անջատման խարցը Ռուսաստանից: Խանջյանը, զգալով, որ ինքը մերկացվելու է, ինքնքսպան է լինում: Այս զրպարտիչ հայտարարությունն արվեց առանց տատանվելու, քանի որ ոչ ոք չէր կարող բողոքել այս անիրավության դեմ: Թեև իշխանությունն արգելել էր, որ ժողովուրդը մասնակցի Խանջյանի հուղարկավորությանը, բայց արհամարելով ամեն մի արգելք, ժողովուրդը Խանջյանի թաղումը վերածեց համազգային սգի:

Այդ ժամանակ Վրաստանի ֆինանսների նախարարի տեղակալը Ախալքալաքի շրջանի Կարգախ գյուղի բնակիչ Աբրահամյան Գրիգորն էր, որին անձամբ ճանաչում էի: Հարգանքի արժանի ազնիվ հայ մարդ էր: Կարգախ գյուղից մարդիկ են հյուր լինում Թբիլիսիում՝ Աբրահամյանի տանը: Խոսք է բացվում Խանջյանի «ինքնասպանու-

յան» մասին: Աբրահամյան Գրիգորը կարծիք է հայտնում, որ Խանջյանը չէր կարող ինքնասպանություն կատարած լինել, նրան սպանել են: Թբիլիսիից գյուղ վերադառնալուց հետո հյուրերը Աբրահամյանի կարծիքը հայտնում են գյուղացիներին: Այս մասին իմանում է Կարգախ գյուղի բնակիչ Դոխտյան Սրապը, որն առանց ժամանակ կորցնելու՝ նամակ է գրում Բերիային: Թբիլիսիում Աբրահամյան Գրիգորը ծերրակալվում է և զնդակահարվում:

Խանջյանի սպանությունը թանկ նստեց հայ մտավորականության վրա: Հազարավոր անտոնյաններ և արբահամյաններ անմեղ զոհ դարձան. ոմանք՝ իրենց անհատական կարծիքը հայտնելով, ոմանք՝ ցավակցական հեռագրեր տալով, ոմանք էլ նրա հուղարկավորությանը մասնակցելու պատճառով: Մտնիչներն ու զրպարտիչներն ամենախոշոր չարիքները ստեղծեցին անմեղ մարդկանց գլխին: Ինչքան մանուկներ որբացրին, ինչքան ընտանիքներ հիմքից քանդեցին: Հազարավոր ազնիվ ու անմեղ խելացի հայեր չկան, իսկ մատնիչները, զրպարտիչները կան, աշխատում են և հարստանում: Այս ավազակների հանդեպ անշուշտ հասարակական արդար դատաստան է հարկավոր:

ԵՂՔՈՐՍ՝ ՀԱԿՈՔԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԻԿԻՍ ՄԱՅՐ

1937 թ. ապրիլ ամսի սկզբներին ներքին գործերի մինիստրության Ախալքալաքի բաժանմունքի աշխատողների միջոցով եղբայրս՝ Հակոբը, ձերբակալվում է Բորժոմ քաղաքում, որտեղ նա աշխատում էր: Բորժոմից նրան անմիջապես տեղափոխում են Ախալքալաք, որտեղ նրա գործի քննությունն էր գնում:

Եղբորս մեղադրում էին, որ նա Խանդո, Ազարվեթ, Օրջա և այլ գյուղերում դաշնակցական կուսակցական կազմակերպություններ է հիմնել, իսկ Խանդո գյուղի կազմակերպությանը, որտեղից 80 մարդ բանտարկվել էր, զինել էր:

Ախալքալաքում եղբայրս աշխատում էր որպես պաշտ-ավիաքիմի շրջանային կազմակերպության նախագահ:

Խուզարկությունների ժամանակ մի խանդոցու տնից «Գեկո» հրացան են հայտնաբերում: Ում մոտ որ «Գեկո» հրացանն են հայտնաբերել, նա եղել է Խանդո գյուղի պաշտ-ավիաքիմի Խանդոյի բաժանմունքի նախագահը: Հրացանը նրան տվել է եղբայրս: Դրանից լավ «իրեղեն ապացույց» ի՞նչը կարող է լինել ստալինյան հրոսակների համար: Էլբակյան Հակոբը զինել է Խանդոյի դաշնակցականներին մի «Գեկո» հրացանով, որպեսզի տապալեն սովետական կարգերը:

Ազարվեթ գյուղում բնակվում էին երկու եղբայրներ՝ Սերգո և Եղիշե Աղայանները, որոնց գործը մարդկանց զրպարտելն էր: Միգուցե եղբայրս պաշտոնական գործով եղել է Ազարվեթում և հանդիպում է ունեցել Աղայանների համար մի անհավատարիմ մարդու հետ ու մատնվե՞լ: Հայկական շրջաններում Ախալքալաքի և Բոգդանովկայի գյուղերում ամենուրեք տեղի ունեցան ձերբակալություններ: Երևի որևիցե մի գյուղում ձերբակալություններ տեղի չունենային, այդ գյուղի կոմունիստներին նախատում էին, դատապարտում, որ վատ են աշխատում, աչալուրջ չեն, դաշնակցականներին քողարկում են...: Բանն այնտեղ էին հասցնում, որ մարդիկ ստիպված էին լինում զրպարտել բոլորովին անմեղ մարդկանց և անմեղ զոհեր տալ:

Մատնիչները, զրպարտիչները չէին երևում, քանի որ բաց դատեր չէին լինում: Բավական էր, որ որևիցե մի մատնիչի ձեռքով

«դաշնակցականների» ցուցակը ընկներ ներքին գործերի բաժանմունք: «Դաշնակցականները» վերցվում էին կալանքի տակ: Այնքան էին ծեծում, խոշտանգումների ենթարկում, որ շատերը, չդիմանալով խոշտանգումներին, մահանում էին, իսկ կենդանի մնացողներն իրենց փրկությունը գտնում էին իրենք իրենց զրպարտելու մեջ, «դաշնակցական» դառնալու մեջ և, իհարկե, որպես այդպիսին՝ գնդակահարվելու մեջ, միայն թե անմարդկային խոշտանգումներից ազատվեն:

Երկիրն ահ ու սարսափի մեջ էր: Մարդիկ գիշերներն իրենց հագի շորերը լրիվ չէին հանում՝ վախենալով, որ գիշերը Ստալինի բազեները կտանեն, գոնե շոր ունենան հագած:

Այնքան շատ էր ձերբակալվածների թիվը, որ ժողովուրդը շվարած վիճակի մեջ էր: Ում որ ձերբակալում էին, հայտարարում էին որպես ժողովրդի թշնամի, իսկ ժողովուրդը չէր իմանում՝ ու՞ր գնա, որտե՞ղ բաքցնի գլուխը: Երկու մարդ փողոցում իրար հետ չէին կանգնում, չէին խոսում, որպեսզի կասկածանքի մեջ չընկնեն:

Եթե ընտանիքում մեկին ձերբակալում էին, նրա բոլոր հարավատներն ընկնում էին կասկածելի մարդկանց ցուցակում և վերցվում ևսկողության տակ:

Իմ եղբոր՝ Հակոբի ձերբակալությունը մեզ վրա շատ թանկ է նստել: Ես աշխատում էի որպես շրջանային դատարանի նախագահ, իսկ մյուս եղբայրս՝ Վահագնը, որպես Ախալքալաքի հայկական մանկավարժական ուսումնարանի տնօրեն:

Հալածանքը նրա դեմ այնտեղ հասցրին, որ աշխատանքից ազատեցին՝ պատճառաբանելով, որ մանկավարժական ուսումնարանում հայոց պատմություն է դասավանդել:

Նրան նախ ուղարկեցին հայ կաթոլիկական Տուրցխ գյուղի դպրոցի տնօրեն: Տուրցխի, Բարալեթի և Դիլիսկայի դպրոցներում աշխատելուց հետո տեսավ, որ վերականգնվելն անհնար է, ընտանիքով տեղափոխվեց Հայաստան:

Իմ դեմ հալածանքը հասավ այնտեղ, որ Բոգդանովկայի շրջանի ներքին գործերի բաժանմունքի պետ Սաբոյի նախաձեռնությամբ, նրա անմիջական հրամանով, իմ հարցը քննության դրվեց Բոգդանովկայի շրջանի կուսակցական կոմիտեում:

Բյուրոյի նիստում Սաբոն զեկուցում է.

- Մեր դատավորը Դաշնակ կուսակցության ներկայացուցիչն է Կոմ. կուսակցության մեջ: Շրջանում մենք հայտնաբերել ենք երեսուկ հակահեղափոխական դաշնակցական կազմակերպություններ, դատավորը խուսափել է մեր օրգանների աշխատողներին որևէ բանում օգնել: Մեր ներքին գործերի բաժանմունքի աշխատողներին ատում է Թուրքերին և ռուս դուխաբոցներին խիստ պատժում է, իսկ հայերին ոչ: Մենք նրա ամեն մի քայլը հետապնդել ենք. նա կաշառք չի վերցնում, հայերին պաշտպանում է, ինչպես կարող է պաշտպանել դաշնակցականը: Իր հակահեղափոխական դաշնակցական եղբոր ընտանիքին նյութական օգնություն է ցույց տալիս, խուսափում է մեզ հետ անձնական կապեր ունենալուց և այլն:

Սաբոյից հետո ելույթ է ունենում շրջկոմի երկրորդ քարտուղար Մեծ Խանչալի գյուղի բնակիչ Չինոյան Մադատը: Նա պաշտպանում է Սաբոյին: Դատախազ Մալխասյան Շավարշն ուզում էր ելույթ ունենալ, բայց ստալինյան բազեին հակաճառել անհնար է:

Բյուրոն որոշում է կայացնում. «Յոփիաննես Մկրտչյանին վտարել կուսակցությունից և ենթարկել պատասխանատվության»: Այդքանը բավական էր, որ Սաբոն ինձ վերցնեի կալանքի տակ ու առաջին գիշերը մեկուսարանում խեղդեի: Շատ տարածված էր. իրենք խեղդում էին և բժշկական արձանագրություն կազմում, որ իբր թե կալանավորն ինքնասպանություն է կատարել:

Մինչ կուսբյուրոն կսպառեր օրակարգի հարցերը, և Սաբոն դուրս կգար իր որսը հափշտակելու, ես արդեն Ախալքալաքի սավատնակայանում էի, որտեղից թռա Թբիլիսի: Թբիլիսիում մնացի այնքան ժամանակ, մինչև որ շրջանային կոմիտեի որոշումը եկավ Վրաստանի կոմկուսի կենտրոնական կոմիտե: Կենտկոմում իմ գրավոր բողոքների և բյուրոյում իմ տված բացատրությունից հետո շրջանային կոմիտեի բյուրոյի որոշումը փոխում են և վերադարձնում հետ՝ շրջան՝ վերանայելու համար:

Գործի վերանայումը ձգձգվում է: Այդ ժամանակ հայրս ծանր հիվանդ էր, ես գնում եմ գյուղ՝ հորս այցելելու: Սաբոն առաջ է քաշում իրենց լրտեսներից մեկին՝ որպես դատավոր, ինքը՝ Սաբոն, գնում է

Ախալքալաք, ահ ու սարսափի տակ կնոջիցս վերցնում է դատարանի կլոր կնիքը և հանձնում իր նշանակած նոր դատավորին: Սաբոյի կողմից իմ բնակարան ներկայանալը, ահ ու սարսափի տակ կնոջիցս կնիքի վերցնելը հանգեցրեց նրան, որ կինս գժվեց: Դա մի ահավոր հանցագործություն էր: Ի՞նչ կարող էիր անել, երբ երկրի սահմանադրությունը մի արյունոտ գանգստերի անունն էր կրում՝ «Ստալինյան Սահմանադրություն»: Եղբորս դատավարությունից հետո հայրս շատ քախճոտ էր դարձել: Միշտ տխուր էր, անժպիտ, նամանավանդ, երբ զգաց, որ ազատության մեջ եղած երկու տղաները՝ համարվում են անհավատարիմ տարրեր և ընկած են ստալինյան հրոսակախմբերի հսկողության ներքո: Յայրս մահացավ 1939 թ. մայիսի 9-ին, ծանր վշտից: Յայրս շատ հայասեր էր և նույնն [զգացումներն էլ – խմբ.] արմատացնում էր երեխաների մեջ:

1922 թ. եղբայրս՝ Յակոբը, գյուղում կոմսոմոլի քարտուղար էր: Մի օր տուն եկավ, հրացանը քաշ տվեց սյունից, հայրս կանչեց իր մոտ.

- Ի՞նչ են խոսում,- ասաց,- Աբաջոնց Արուֆին ձերբակալել են, մի՞շտ է:

- Այո՛,- եղավ պատասխանը:

- Իսկ ո՞վ է ձերբակալել, որտե՞ղ են նստեցրել և ինչո՞ւ:

Պատասխանը եղավ.

- Մենք՝ կոմսոմոլներս, Արուֆը կուլակ է, նա նստած է Մոսեսենց մարագում:

- Ուրեմն դուք՝ կոմսոմոլ եք դարձել, որ իմ ծննդավայրում մարդանջ երևալու, նրանց հետ զրույցի իրավունքից զրկե՞ք ինձ:

Տեղիցը վեր կացավ, մոտեցավ եղբորս ու ասաց.

- Այս այն թռչունն է, որն իր ձագին բնում բռնաբարելուց հետո է թռցնում: Դու ու՞մ ես ծառայում, - ասելն ու ուժեղ ապտակելը մեկ երավ:

Յայրս ինձ նման թույլ, անպետք չէր: Արտակարգ ուժի տեր էր: Եղբայրս ուշագնաց վայր ընկավ: Մայրս ներս եկավ, տեսավ եղբորս վիճակը, տեսավ, որ նրա քթից, բերանից արյուն էր գնում, անխոս ուշքի բերեց: Մայրս գիտեր, որ հայրս երեխաներին ապտակելուց կամ

ծեծելուց խուսափում էր, քանի որ նրա ուժեղ ապտակը կարող էր նույնիսկ մահացու լինել: Հայրս արգելեց մայրիկիս եղբորս երեսը լվանալ, ասաց.

- Գնա Մոսեսենց մարագի դուռը բաց արա, Արուֆին բաց բողմարագը փակիր, բանալին բեր ինձ:

Աղա տացուի հրամանն անմիջապես կատարվեց: Անցան շատ տարիներ, եղբայրս ծառայեց բանակում, լեյտենանտի կոչում ստացավ: Ինքը հայտնի կրակող էր (снайпер) [դիպուկահար – խմբ.]:

Երեսնական թվականներին հաճախ էին հայտարարում, որ գավառի մի վայրում զինված «ավազակներ» են երևացել: Ութն տարեկանս այդ «ավազակ» կոչեցյալները: «Կոլխուզ» շարժումից փախած, իրենց ընտանիքները թողած, սար ու ձոր ընկած հողի մշակներ: Այդ «ավազակների» հետևից գնում էին այն ժամանակ, երբ եղբորս իրենց հետ էին տանում: Ոչ մի տեղ ոչ մի ավազակախումբ չի հայտնաբերվել. Ի՞նչ իմանաս, թե իշխանությունից փախած այդ դժբախտ մարդիկ ո՞ր երկրամասում են մշակություն անում: Ինչքան հազարներ կորան՝ գոհ դառնալով սովետական կարգերի անմարդկային ռեժիմին, ստալինյան բռնությանը:

Խանդոցիների հետ կապված քննությունը վարում էր Ախալքալաքի շրջանային պետը՝ ներքին գործերի բաժանմունքից Պոզոնը:

Պոզոնն Ախալցխայի շրջանի հայ կաթուղիկներից էր, մի սարսափելի բռնակալ դահիճ: Քննությունները տևեցին չորս ամիս: Լուրեր տարածվեց, թե քննության ժամանակ Պոզոնը եղբորս ծեծի է ենթարկել, իսկ եղբայրս նրան խփել է աթոռով: Կասկածից դուրս է, որ նման վերաբերմունքից հետո զարհուրելի տանջանքների և խոշտանգումների պետք է որ ենթարկած լինեին նրան:

Մենք այդպես էլ չիմացանք, թե ի՞նչ եղավ կենդանի մարդը: Այն ժամանակվա ծեծ ու ջարդին տեղյակ են իրենց աշխատակիցներ Աստվածատուրյան Մամիկոնը, Ստեփանյան Կարոն, Թաթարյան Վաղարշակը, Բաղդասարյան Համբարձումը, Սիմավորյան Պողոսը, Վարդանով Համբոն և մի քանի վրացիներ: Նրանք գիտեին, թե ովքեր են մահացել բարբաբոսական ծեծից: Թեև այդ ժամանակ ես դատավոր էի աշխատում, բայց ոչ մի օգնություն չէի կարող ցույց տալ իմ եղբո-

րը: Երկրի նե րսում ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր չեկիստների ձեռքում: Շարժվել անհնար էր: Մարդկանց, ում որ ցանկանային, նախ և առաջ ձերբակալում էին, հետո նոր նրա վրա մեղադրական նյութեր հավաքում:

Ամենահեշտ բանը մարդուն մեղադրելն էր: Բավական էր ասել այն, որ կաղ խաչիկին և բլղուր խաչիկին կանչեն և հանձնարարություն տան:

- Բանտարկյալ Էլբակյան Հակոբի երեսին պետք է ասել, որ ձեր ներկայությամբ նա գովասանքի խոսքեր է ասել դաշնակցականների մասին, իսկ Ստալինին հայհոյել է:

Էլբակյանի երեսին զրպարտում են: Այսպես նախ ձերբակալում էին, հետո նոր մեղադրական նյութեր հավաքում:

Միլիոնավոր քաղաքական բանտարկյալներ ենթարկվել են գնդակահարման կամ տարագրման՝ առանց դատի: Երկրում գործում էին հազարավոր եռյակներ: Այդ եռյակները չեկիստների կողմից քննված գործերը ստանում էին և ելնելով գործում եղած նյութերից՝ (բռնությունների շնորհիվ ստացած նյութերը հարուստ էին) որոշում էին պատժի չափը (10 տարի, 15 տարի, 25 տարի կամ գնդակահարություն):

Երբ Ախալքալաքից բանտարկյալներին տեղափոխելու էին Ախալցխա, ես կանչեցի եղբորս կնոջ քեռուն՝ Մառանգոզյան Ստեփանին, նրան տվեցինք ուտելիք, շոր և փող, որ եղբորս տա: Մառանգոզյանը պատի վառարաններ էր կառուցում, խելոք, արհեստավոր մարդ էր: Երեկոյան Մառանգոզյանը եկավ տուն՝ իր հետ բերելով իր տարածները: Մառանգոզյանը պատմում է.

- Շատ ժողովուրդ էր հավաքվել, և շատ էլ բանտարկյալներ լցրին մեքենաները: Նախօրոք չէին հայտնել, թե ում են տանելու: Ոչ մի բանտարկյալի ոչ մի հարազատ չկարողացավ ճանաչել: Մեզ թվում էր՝ մեքենաներ բարձրացողները մարդիկ չեն, այլ խրտվիլակներ: Չեկիստների կողմից հսկողությունը շատ ուժեղ էր:

Մեքենաների գնալուց հետո հավաքվածները ցրվեցին՝ լաց ու կոծի ներքո:

Բաղդասարյան Համբարձունը մի բանտարկյալի օրորոցի երե-
խային հայիոյեց՝ ասելով.

- Դու մեր դեմ էիր աշխատում:

Հավաքվածների միջից մեկը ասաց, որ այդ բանտարկյալը կար-
գախցի Պլանցուց Եգորն էր:

1927-1928 թթ. ես աշխատում էի Կարգախում, թեմական գոր-
ծադիր կոմիտեի նախագահի պաշտոնում: Օրերից մի օր Բաղդասար-
յան Համբարձունից ստանում եմ նամակ, որտեղ նա գրում է. «Մեր
ներքին գործերի անվտանգության կոմիտեին կից հիմնված է գաղտնի
տրոցկիստական կազմակերպություն: Կազմակերպության մեջ մըտ-
նում են անվտանգության կոմիտեի բաժանմունքի բոլոր ղեկավար
աշխատողները: Քեզ լավ եմ ճանաչում Գոնդուրայից, որտեղ մենք
միասին էինք աշխատում: Մեր տրոցկիստական կազմակերպությունը
մենք ցանկանում ենք լայնացնել՝ ի հաշիվ շրջանի ակտիվ և գրագետ
կոմունիստների: Ես իմ կողմից երաշխավորել եմ, որ մեր կազմակեր-
պությունը քեզ ընդունի իր շարքերում՝ որպես տրոցկիստի: Սպասում
եմ պատասխանի»:

Այդ կեղտոտ ձեռքերով գրված նամակին դրական պատասխան
տալը, ձերբակալվելը և գնդակահարման ենթարկվելը արդեն պատ-
րաստ էր: Այդ օրգաններում աշխատողներն ինչքան շատ մարդ էին
ձերբակալում, մերկացնում, ինչպես իրենք էին ասում, այնքան շատ
գովասանքներ, կրօքանչաններ ու պարզևներ էին ստանում, նամանա-
վանդ, եթե հայտնաբերվածը տրոցկիստ էր, այսինքն՝ ստալինյան
գործելակերպի թշնամի: Մարդիկ շվար էին մնացել: Չէին իմանում
ինչ ձևով շարժվեն, որ որևէ թեքման մեջ չընկնեն: Թեքումների անուն-
ները շատ էին, զգուշանալը՝ անչափ դժվար: Մենք ավելի շատ էինք
զգուշանում, քանի որ մեր եղբոր ձերբակալությունից հետո մենք ար-
դեն համարվում էինք անհավատարիմ տարր: Մարդկային կյանքը ըն-
թանում էր նման ծանր իրադրության մեջ: Հայրս ամեն անգամ հարց-
նում էր.

- Ի՞նչ եղան եղբորդ գործերը: Նրան ու՞ր տարան, դատ եղե՞լ է,
թե՞ ոչ, ախր ինչո՞ւ նամակ չի գրում: Մայրիկիս անունից գրված իմ
շատ բողոքներից հետո մեզ պատասխանում են.

- Ձեր որդին՝ Էլբակյան Հակոբը, մահացել է բանտում:

Սուտ մարդիկ, սուտ պատասխան: Եղբայրս կամ գնդակահար-
ված է կամ մահացել է ծեծ ու ջարդոցներից, խոշտանգումներից:
Ստալինի մահից հետո միլիոնավոր բանտարկյալների հարազատներ
սպասում էին ինչ-որ փոփոխությունների դեպի լավը, մարդկայինը:
Իշխանության գլուխ անցավ Մալենկովը՝ Նրա առաջին քայլը եղավ
հնարավորություն տալ աշխատավոր գյուղացուն անասուններ պա-
հել՝ առանց սահմանափակման: Ժողովուրդները ուրախացան, նույ-
նիսկ երգեր հորինեցին: Հայ գյուղացին էլ իր հերթին երգեց.

«Տասը ոչխար, երկու կով,

Քեզի մեռնեմ՝ Մալենկով:»

Մալենկովի վերաբերմունքը համարվեց նահանջ դեպի կապի-
տալիզմ: Իշխանության գլուխ անցավ մի ուրիշ կոմունիստ՝ Խրուշչո-
վը: Աշխարհի առաջավոր և դեմոկրատ մարդկությունը զգվանքով էր
հիշում Ստալինի արարքները: Ամենուրեք, արտասահմանում, որտեղ
էր որ լինում էր Խրուշչովը, նրա երեսովն էին տալիս երկրում տիրող
դրությունը, անպատիժ մնացած ստալինյան այլանդակությունները:
Խրուշչովը ցանկացավ ցույց տալ, որ ինքը ժողովրդավարություն է
մտցնելու երկրի ներսում, թեթև կերպով քննադատեց Ստալինին:
Ստալինյան բազեները հավաքվեցին գիշատիչ անզղերի նման,
Խրուշչովին պաշտոնազուրկ արին: Իշխանության գլուխ անցավ
Բրեժնևը: Բրեժնևը քաղ. աշխատող էր, այսինքն՝ չեկիստ: Եթե Բրեժ-
նևը՝ որպես քաղ. աշխատող, Ստալինին չհարգեր, ապերախտ կլիներ:
Լա չգնաց Խրուշչովի հետևից: Ստալինին հետագա քննադատու-
թյուններից ազատ պահեց՝ արհամարիելով նույնիսկ ամբողջ աշխար-
հի առաջավոր մարդկանց կարծիքը, իսկ մենք էլ մնացինք անպա-
տասխան մեր եղբայրների ոչնչացման համար:

Խոսքը վաչեւելավ Մալենկովի մասին է:

ԿՈՍՏՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՔՐ ԱԶԳԵՐԸ

1915 թ. ապրիլ ամսին, երբ Արևմտյան Հայաստանի հայ ժողովրդին թուրքերը սրի էին քաշում և շատերին էլ սոված ու ծարավ քշում էին Դեր Ջորի անապատները, ռուսական բանակն այնտեղ էր Արևմտյան Հայաստանում: Ռուս «մարդասերները» տեղերից չէին շարժվում, և հայ կամավորական գնդերին էլ արգելում էին առաջ շարժվել, հարձակումներ կատարել տաճկական բանակների վրա: Ռուսական բանակը, հայ կամավորական խմբերի աջակցությամբ, ի վիճակի էր առաջ շարժվել, եթե ցանկանար կանխել հայկական եղեռնը: Մինչդեռ, հայ զինվորը ռուսական բանակում հերոսաբար կռվեց թուրքերի դեմ: Հայ զինվորը, որը ապրում էր թուրքիայում, հրաժարվեց կռվել թուրքիայի օգտին: Ռուսների արագ առաջ շարժվելու հույսով նրանք փախչում էին թուրքական բանակից: Իրենց հանդեպ հայերի հավատարմությանը ռուսները պատասխանում են հետևյալ հայտարարությամբ. «Հայերը ուրիշ էլք չունեն, ինչպես էլ որ վարվենք նրանց հետ, նրանք մեզանից չեն կարող հեռանալ: Հայերը ռուսահպատակ են և պարտավոր են ծառայել Ռուսաստանին»: Հայաստանը Ռուսաստանի համար ցամաքային ամենակարճ ճանապարհն է դեպի արաբական երկրներ: Հայաստան աշխարհը Ռուսաստանին պետք էր առանց հայերի:

Քանի-քանի պատերազմների է մասնակցել հայ ժողովուրդը հավատալով ցարական կառավարության այն խոստումներին, թե հաղթանակից հետո թուրքահայաստանը կմիացնենք Ռուսահայաստանին ու հայերին կտանք անկախություն: Անկախություն ռուսական կառավարությունից ոչ հավատալի է, ոչ էլ հիմք կա հավատալու: Հայկական հարցը սոսկ մի պատրվակ է, որ ռուս զինվորը առաջ շարժվի, գրավի թուրքահայաստանը մոտենա Միջերկրական ծովին ու Սուեզի ջրանցքին: Խուսափել արյունահեղությունից ու ձեռքից բաց թողնել խոշոր ռազմական նշանակություն ունեցող մի հանգույց՝ ինչպիսին է Սուեզի ջրանցքը՝ բացառվում էր: Հայաստան երկիրը անհրաժեշտ է ռուսներին իրենց աշխարհագրական դիրքը Սերժավոր

Արևելքում ապահովելու համար: Եթե առաջին աշխարհամարտում Ռուսաստանը հաղթեր, «լուծելու» էր հայկական հարցը և իրագործվելու էր ռուսների վաղեմի երազանքը: Հայաստանի տարածքը գրավելուց հետո, որն արդեն հայաթափված էր, հայկական հարցի ու անկախության մասին մտածելն անգամ բացառված էր:

Հայաստան երկիրը պետք է լցնեին ռուսներով: Պատահական չէ, որ Ախալքալաքի և Կարսի գավառներում մեծ թվով ռուսների բնակեցրին և նրանց հատկացրին խոշոր արտոտավայրեր ու մարգագետիններ: Ռուսներով լցնելու սկիզբն էր դրվում: Բեգ Նազարյանցը արդարացի էր, երբ հայտարարեց. «Հայեր, ռուսների Անդրկովկասում ամրանալը ձեր ձեռքում է: Միք թողնի, որ այդ բանը կատարվի: Ռուսները գալիս են ձեր ունեցած ազատությունը խլելու, ասածս կհաստատն ժամանակը»:

Այո, ռուսները խլեցին հայ ժողովրդի ազատությունը: Հայ ժողովուրդը չէր ցանկանում հայրենիքը հանձնել բոլշևիկներին: Պատերազմի և ազգամիջյան կռիվներից արյունաքամ եղած մի բուռ հայությունը կռվում էր իր ազգային անկախության համար, կռվում էր կյանքի համար, իսկ կոմունիստական բանակները կռվում էին երկրորդ նվաճելու, փոքր ազգերին ստրկացնելու, ոչնչացնելու համար: Այն հարցերը, որոնք իրենց լուծումը չկարողացան ստանալ մենշևիկների և մուսաֆաթականների ձեռքերով, որոնք զենքի ուժով ուզում էին Հայաստանը անդամահատել, իրենց լուծումը ստացան խորհրդային իշխանության կողմից: Հայ ժողովրդի միակ պաշտպանը՝ Ռաշտակցական կուսակցությունը ուժով հեռացված է Հայաստանից: Հայ ժողովրդին պատժեցին ռուս բոլշևիկներին դիմադրելու համար: Լեռնային Ղարաբաղը, Գանձակը և Նախիջևանը անջատեցին Հայաստանից և տվեցին Ադրբեջանին: Ախալքալաքը, Ծալկան և Բոլնիս-Խաչենը միացրեցին Վրաստանին: Հայաստանի մի մասն էլ, մինչև նրանի, անցավ թուրքիային: Կարսը մինչև 1918 թ. մտնում էր Արևելյան Հայաստանի մեջ և համարվում էր ռուսական երկիր: Կարսի երկրամասը ամբողջը գաղթականներ էին: Կրեմլից եզիպտոս կամ Լիբանան շատ հեռու է, իսկ Կարսը շատ մոտ է: Ինչո՞ւ արար գաղթականին հեռվից տեսնում են ռուս «մարդասերները», իսկ հայ գաղթական

նին ավելի մոտիկից չեն տեսնում: Ինչպես երևում է, Կրեմլի համար մի բուռ, դեռ ազատ շունչ չբաշած հրեաներին վիրավորանք հասցնելը և գենքերով սպառնալը շատ հեշտ է, արաբների համակրանքը շահելը շատ օգտավետ, իսկ Թուրքիային վիրավորանք հասցնելը և նրան սպառնալը՝ շատ դժվար: Անտեր ու անպաշտպան հայի պատճառով թուրք հարևանի հետ հարաբերությունը սրել միտք չունի: Ե՞րբ է եղել, որ «մարդասեր», «ինտերնացիոնալիստ» ռուս ղեկավարությունը բերան բաց անի և մի քանի միլիոն հայ գաղթականների հարցը շոշափի, նրանց օգտին մի բառ, գոնե մի բառ ասի:

Հրեաներն իրենց պապերի հայրենիքից 14 հազար քառակուսի կիլոմետր տարածության վրա պետություն են կազմել: Ժամանակին արաբները հրեաներին խիստ կերպով հալածել են, կոտորել և տեղահան արել, որի հետևանքով էլ 25 միլիոն հրեաներ հայերի նման ցար ու ցրիվ են եղել ամբողջ աշխարհով մեկ: Ո՞վ չի ցանկանում, որ իր տունը պապերի, այսինքն՝ իր հայրենիքում լինի, որ իր նոր տունը կառուցվի իր պապի հին տան հիմքերի վրա: Բոլորն էլ ցանկանում են, որ այդպես լինի: Ես էլ եմ ուզում, որ այդպես լինի, եթե իմ առաջ արգելքներ չստեղծեն: Օտարությունը դրախտի մեջ էլ որ լինի, դարձյալ հայրենիքը քաղցր է: Այսօրվա իսրայելական փոքրիկ պետությունը ձգտում է, որ Սփյուռքում ցաք ու ցրիվ եղած հայրենակիցներին հավաքի հայրենի հողի վրա: Արաբական երկրները չեն ցանկանում ճանաչել Իսրայելը որպես հրեական պետություն և ձգտում են հասնել այն բանին, որ այդ փոքրիկ, հայրենի հարկի տակ հավաքված ժողովուրդն էլ ցաք ու ցրիվ լինի: Հրեա ժողովուրդը շատ տաղանդավոր ժողովուրդ է, շատ հարուստ և ունեն հայրենասեր շատ հարուստներ: Արաբական ճնշումներին դիմադրելու համար հրեաներին ոչինչ չէր մնում, բացի զինվելուց, և զինվեցին: Իրենց պապերի հայրենիքից Պաղեստինից, որոշ տարածություն գրավեցին:

Արաբները պահանջում են, որ Իսրայելը հեռանա իր գրաված հողամասերից, որպեսզի արաբ գաղթականները վերադառնան իրենց տները: Այս հողի վրա սուր պայքար է գնում հրեաների և արաբների միջև: Սովետական կառավարությունը արաբական երկրներում իր շահն ունի:

Արաբական և աֆրիկյան շատ երկրներում կոմունիստական ազիտացիան և ոսկյա սարեր խոստանալն իրենց արդյունքն են տալիս:

Ելնելով իր պետական շահերից, Կրեմլը կաշվից դուրս է գալիս՝ արաբ գաղթականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու համար, ելնելով «մարդասիրական» կոմունիստական ինտերնացիոնալ հասկացությունից: Իսկ իրենց երկրում ռուսական շովինիզմը խեղդում է փոքր ժողովուրդներին: Բացի ռուսական շովինիզմից, մեզ լիայերիս խեղդում է , հալածանքի, ասի ու սարսափի մեջ է պահում վրացական ու ադրբեջանական նացիոնալիզմը: Այս երկու ժողովուրդների մեջ եղբայրական միությունը, ի վնաս հայ ժողովրդի, միշտ էլ եղել է և այսօր էլ գոյություն ունի:

Կոմունիստները ռուսներին համոզում են, թե հայերը վատ են տրամադրված դեպի սովետական իշխանությունը, դեպի ռուս ժողովուրդը և նրանց օգտագործում են իրենց մութ գործերը կյանքում իրականացնելու համար: Բոլորն էլ լավ են իմանում, որ հայ մարդն սպառություն է սիրում: Հային ճորտացնելը շատ դժվար է: Բոլշևիկներն էլ լավ գիտեն հայի բնավորությունը: Հայն այդ համառությունը մատանգել է իր ազնիվ պապերից և այն կորցնելու համար է, որ ռուս բոլշևիկներն ամեն մի հայի համար Հայաստանում երկու զինվոր են պահում: Հայի ազատասիրությունն է պատճառը, որ հայ ժողովրդի լավագույն զավակներն աքսորվում են կամ գնդակահարվում: Մենք, հայերս, վերջ չենք տալու մեր բնավորությանը, միշտ ձգտելու ենք դեպի ազատությունը, իսկ փոքր ազգերի անկախությանն ու ազատությանը թշնամի բոլշևիկները՝ խեղդելու և հալածելու են մեզ:

Հայկական հարցը ամենից հեշտ լուծեցին ռուս բոլշևիկները: Երանք հայկական հարցը և դրանով հետաքրքրվող բոլոր հայերին արտրեցին Սիբիրի խորքերը:

Սովետական Հայաստանն ունի ոչ լրիվ 30 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Այն կիսով չափ ծածկված է քարակույտերով:

Ինչպես ասացի, Արևելյան ու Արևմտյան Հայաստանից գաղթած հայերն ապրում են Սովետական Հայաստանում: Ո՞ւր կարող էին գնալ գաղթական վանեցին, մշեցին, ալաշկերտցին, կարինցին և այլ վայրերի կենդանի մնացած հայկական բեկորները: Դարձյալ Հայաստան:

Երեք միլիոնից ավելի հայեր են հավաքված Հայաստանի դռերի վրա, ծորերի և կիրճերի մեջ: Ախալքալաքի, Ախալցխայի և Ծալկայի գավառների 300 հազար հայեր ձգտում են անջատվել Վրաստանից: Լեոնային Ղարաբաղը և Նախիջևանի հողն անգամ չալիս է, արցունք է թափում, օտարի ծիերի սմբակների տակ է տրորվում: Փրկություն չկա, ելք չկա, պաշտպան չկա: Ռուս «մարդասերը»՝ փոքր ժողովուրդների «պաշտպանը», շատ լավ է իմանում հայի անելանելի վիճակը: Ինքն էլ մասնակից է այս դրության ստեղծմանը: Հայի ծանր վիճակը չեն տեսնում, իսկ շատ արաբական երկրների լավ են տեսնում, նրանց բոլորին էլ լավ գինում են՝ մի բուռ հրեաների ոչնչացնելու համար, քարտեզի վրայից 14 հազար քառակուսի կիլոմետր երկիր ունեցող Հրեաստանը վերացնելու համար: «Մարդասերն» էլ այս տեսակ է լինում:

Այսօր՝ մեր ապրած օրերում, ոչ մի կարգապահություն չկա: Երկրի ներսում բացարձակ անիշխանություն է: Կաշառակերությունը, կորզողությունը, խաբեբայությունը, թուլյի վրա ճնշում գործադրելը, բոլոր տեսակի աշխատավորների լարված աշխատեցնելը և կոպիտ շահագործելն անցել է ամեն սահման: Բանվորների աշխատանքի հավելյալ արժեքի կողոպտելը շահագործում չի համարվում: Կարմիր գծից դուրս բանվորն ամենուրեք տեր ու տնօրեն ունի, զորեղ պաշտպան, որի անունը պրոֆմիություն է, իսկ կարմիր գծից ներս սովետական գործարանատերն է, իսկ բանվորի տերն էլ, տնօրենն էլ պրոֆմիությունն է: Բանվորն անգոր է, նա ի վիճակի չի խոսք անգամ ասելու, որ իրեն չարաչար աշխատեցնում են՝ գրեթե առանց վարձատրելու:

Միջին ծառայողը ամսական ստանում է 3-4 հարյուր ռուբլի: Մի փութ ցորենն արժե 80 ռուբլի: Մինչև 150 ռուբլի ստացող բանվորների թիվը միլիոնների է հասնում: Իսկ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության քարտուղար Ժորժ Մարշեն հայտարարում է. «Սենթ սովետների հետ ենք, որովհետև այնտեղ անգործներ չկան»: Միթե 40-100 ռուբլի աշխատավարձ ստացողները, որոնց թիվը տասնյակ միլիոնների է հասնում, անգործներ չեն: Եթե մեկը ցուցակագրի անգործների, ցուցակ կազմողն էլ, ցուցակում նշված անգործ մարդիկ էլ

կծերակալվեն որպես քաղաքական հանցագործներ և կաքսորվեն Սիրիա:

Երկրի կառավարման ձևը միապետական ձևի վատթար տեսակն է: Մարդակեր Ստալինին երեսուն տարի աստվածացրին ու ծափահարեցին:

Ընտրություն, որպես այդպիսին, որպես սահմանադրական օրենք, գոյություն չունի: Ընտրող ժողովուրդը լավ է հասկացել, որ իրեն ծաղրանքի առարկա են դարձրել: Ընտրողների կեսից ավելին չի գնում քվեարկության: Ի՞նչ վնաս քվեարկությանը չմասնակցելուց, երբ քվեարկության արդյունքում հայտարարվում է, որ կոմունիստների և անկուսակցականների բոլոր հաղթանակել է 99,9%-ով: Ի՞նչ բլուկի մասին կարող է խոսք լինել, քանի որ երկրում միայն մի բլուկ կա, որի անունը կոմունիստական բլուկ է: Եթե հարյուր մարդ պետք է ընտրեն, ուրեմն քվեաթերթիկներում հարյուր մարդու անուն կա, ավել լինել չի կարող: Նրանք բոլորն էլ կուսակցության կողմից երաշխավորված անձնավորություններ են: Բավականին շատ հովիվներ, կթվորուհիներ, շարքային բանվոր-բանվորուհիներ են ընտրվում: Կոմ. կուսակցությունն այս ընտրյալներին գովում է ու փառաբանում որպես լավ աշխատողների, պետական պլանները կատարողների: Գլխավոր նպատակը մեկն է. ընտրված պատգամավորները որքան շատ հետամնաց լինեն, այնքան ուժեղ են ծափահարում ամբիոնից ճառող կոմունիստ ղեկավարին: Որտեղ բացակայում է օրենքը, այնտեղ թագավորում է բռնակալությունը: Բոլոր նրանք, ովքեր ապրել են Ստալինի թագավորության ժամանակ, գիտեն, թե ինչ բան է ճամբարը: Անծայրածիր երկիրը վերածվել էր համակենտրոնացված ճամբարի: Հիտլերյան ճամբարները նսեմանում են ստալինյան անթիվ ու անհամար ճամբարների մոտ: Հիտլերյան ճամբարներում ոչնչացրել են հիտլերյան Գերմանիայի դեմ կռվող զինվորների, իհարկե, ամենից շատ՝ կոմունիստների, իսկ այստեղ՝ ստալինյան ճամբարներում, ոչնչացրել են անմեղ մարդկանց: Նրանցից ոչ մեկը զենք չի վերցրել սովետական իշխանության դեմ: Տասնյակ անգեն ու անպաշտպան մարդկանց «հանցանքը» մեկն էր՝ խելացի մարդ լինելը: Քանի որ խելացի մարդիկ դեմ էին սոցիալիստական կարգերին, հարկավոր էր

նրանց ոչնչացնել, իսկ մնացած ժողովրդին՝ պահել ահ ու սարսափի մեջ: Ժողովուրդն այն աստիճան էր վախեցած, և այն չափով էր խլված նրանից դիմադրելու ունակությունը, որ անասնացել էր, ոչխարի նման վազում էր և այսօր էլ վազում է իրեն ստրկացնողի հետևից:

Տեղին է հիշել ամերիկացի գրող Տորոյի խոսքերը. «ճորտացման աստիճանի հասցրած ժողովուրդները ոչխարի նման վազում են իրենց մորթողների հետևից: Այն պետության մեջ ուր օրինականացված է և հովանավորվում է ստրկությունը, ազնիվ քաղաքացու պատշաճ վայրը բանտն է»:

Երկիրը ծայրաստիճան աղքատություն է ապրում: Հաց քիչ ունեն, մսեղենի, կաթնեղենի, բանջարեղենի, արդյունաբերական ապրանքների մեծ պակաս է զգացվում, մթերքի համար հերթեր են: Մեղավորը իմպերիալիստներն են համարվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների գլխավորությամբ: Չես կարող ասել, որ մենք և մեր պետական կառուցվածքը անպետք ենք, որ անհատի նախաձեռնությունը խլված է, որ անձնական նախաձեռնություն չկա, որ աշխատանքը չի վարձատրվում, որ մթերքի գողության չափն անցել է, և անչափ շատ մթերք է փչանում ու կորչում, որ իզուր ու անհիմն կերպով մեղադրում են սրան-նրան, ասելն անհնար է: Ընդհանրապես խոսելը, քննադատելու, պակաս սխալ կողմերն ի հայտ բերելն արգելված է: Ասում ենք, որ մեր ժողովուրդները շատ միաբան են և մի մարդու նման համախմբված են Կոմ. կուսակցության շուրջը: Ե՛րիշտ որ այդպես է: Խոսում են միայն կոմունիստ իշխանավորները և կոմունիստները: Նրանք ճիշտ են թե սխալ, քննադատել չի կարելի (ինչ եք կարծում հանցանքները տեսնել, նույնիսկ զգալ սեփական մաշկի վրա և լռեցյալ անցնել հանցագործի կողքով, հանցագործություն չէ՞ արդյոք): Ո՛րեմն ժողովուրդները կուսակցության հետ են, նրան հարգում են: Չխոսելը կամ խոսել չկարողանալն այդ է նշանակում: Պաղ ու միապաղաղ պրոպագանդա լսելուց ժողովուրդը զգվել է: Քաղաքական մեկնաբանների թիվն անհաշիվ է: Սովետական քաղաքացուն հնարավորություն չեն տալիս արտասահմանից մի բառ անգամ լսելու, կյանքից էլ է կտրված, աշխարհից էլ: Պետությունը սեփական ժողովրդի անունից խոսելով՝ ներկայացնում է, թե իբր ինքը վայելում է ժողովրդի մեծ

հարգանքը: Անհավատալի է: Եթե սեփական ժողովրդին հավատային, նրա նվիրվածությանը վստահ լինեին, նրան աշխարհից չէին մեկուսացնի, օդի մեջ արգելանոցներ չէին կառուցի, թույլ կտային, որ ազատ լսեն, իմանան՝ ինչ է կատարվում աշխարհում:

Ես հայ եմ: Իմ ազգի գրեթե կեսը ցաք ու ցրիվ է եկած Սփյուռքում: Ես ուզում եմ ամեն օր իմանալ՝ ինչ են անում իմ հայ եղբայրները, թեկուզ հեռվից մասնակից լինեմ նրանց հաջողություններին, ուրախություններին ու տխրություններին: Ինձ ո՞վ է մարդատեղ դնողը, կամ ո՞վ է իմ ցանկությունները հաշվի առնողը: Օդը կալանքի տակ է: «Քո հարազատը օտար աշխարհում ի՞նչ վիճակի մեջ է, մի՛ իմանա և իմանալն էլ մտքիցդ հանի՛ր»: Ահա այս և նման ձևով են հավատում սեփական ժողովրդին:

Կատուն, որ կատու է, եթե տիրոջից մածուն է գողանում, ուտում, խուսափում է տիրոջը հանդիպելուց: Հասկանում է, որ ինքը տիրոջը վնաս է տվել: Այս մեծ կատուն մածունն էլ է կերել, կովն էլ: Մի՞թե կատվի չափ խելք չունեն, որ հասկանան իրենց տիրոջը տված վնասի չափը: Մարդկանց գլուխները դարձրել են դատարկ շիշ: Ինչ հեղուկ որ իրենք ցանկանան, այն հեղուկն էլ լցնում են: Գլխի տիրոջը հարցնող չկա, թե ինչ է ինքը ուզում: Մարքսլենինյան թունավոր հեղուկի մեծ պաշար ունեն: Թող մարդը թունավորվի, փույթ չէ, միայն թե թունավոր հեղուկը շատ տարածվի, այդ հեղուկից շատ լցնեն դատարկ գլուխները: Եթե այսօր երկրում օրինական կարգապահությունը կործանված է, պատճառը մարքսլենինյան թունավոր հեղուկն է, որից մարդիկ չեն մեռնում, այլ մարմիններն ապրում են, իսկ ուղեղները թույնի ազդեցության տակ դառնում կատաղած կենդանու ուղեղ, և մարդը դուրս է գալիս մարդկային խաղաղ բնավորությունից: Մարդկային կերպարանքով, ոչ մարդկային ուղեղով ապրող մարդ-կենդանին ամեն կերպ ձգտում է ոչնչացնել այն ամեն լավը, ինչը հենց ինքն է ստեղծել մարդու համար դարերի ընթացքում:

Մարքսլենինյան գաղափարախոսությունը մտցնում են որպես նոր հավատ: Այս հավատը արյունով է ծնված ու արյունով ներկված: Պատական չէ, որ Մարքսիզմը և պանիսլամիզմը միմյանց հետ սերտ, եղբայրական դաշինքներով են կապված, իսկ քրիստոնեությունը իր

մարդասիրական, խաղաղասիրական փիլիսոփայությամբ հալածվում է: Կասկածից վեր է, որ մարքսիզմն իր թևերը լայն բաց է անելու այն տեղերում, որտեղ քրիստոնեության թևերը ջարդված կլինեն: Բազմիցս փորձեցին Մարքսիզմի թույնը սրսկել Եվրոպական ժողովուրդներին, բայց չկարողացան: Այս տեսակետից ամենահարմար ժողովուրդը ռուս ժողովուրդն էր:

Բոլշևիկները, դեռ իշխանության գլուխ չանցած, իրենց հույսը դրել էին զենքի վրա, եղբայրասպան ոճրագործության վրա: Եղբայրասպան պատերազմի միջոցով ձեռք բերածը հնարավոր է պահել կուպիտ ուժի միջոցով: Խաղաղ, ազնիվ ճանապարհով, ընտրական ճանապարհով նրանք չէին կարող իշխանության գլուխ անցնել: Բավական է ասել միայն, որ բոլշևիկները ճանաչված էին որպես անաստված: Ռուս մուժիկը անաստվածի օգտին երբեք չէր քվեարկի: 1917 թ. հոկտեմբերյան եղբայրասպան պատերազմն ամբողջ Ռուսաստանում չորս տարի տևելուց հետո, վերջացավ կոմունիստների հաղթանակով Կուսակցությունները ոչնչացնելուց հոտո ժողովրդին զրկեցին դիմադրելու բոլոր տեսակի միջոցներից: Բոլշևիկները սկսեցին հետապնդել մտավորականներին այդ թվում և կոմունիստ մտավորականներին, որոնց անմիջական ջանքերով և մասնակցությամբ ապահովվել էր հաղթանակը: Բոլոր այն կոմունիստ մտավորականները, որոնք ձգտում էին երկրի կառավարման գործում առաջ շարժվել դեմոկրատական հիմունքներով՝ բոլորն էլ գնդակահարվեցին: Երկրի մտավորականների ոչնչացումը, մի չլսված, չտեսնված սարսափելի եղեռն էր Մարդկանց հափշտակում էին տնից, փողոցից, աշխատանքի վայրից: Առևանգելուց հետո, ոչ ոք չէր իմանում և չէր էլ կարող իմանալ դժբախտ զոհի վիճակը: Երբ առևանգած միլիոնների վերաբերյալ լուր չէր հաղորդվում, ուրեմն՝ հունակերները կերել են նրանց: Կերել են տասնյակ միլիոններ՝ հասունացած, խելացի մարդկանցից: Հեղափոխությունը պատճառ դարձավ ռուս մտավորականության, ժողովրդի առաջավոր խավի կործանմանը: Ռուս ժողովրդի համար նոյեմբերի 7-ը ոչ թե ազատության և ուրախության օր է, այլ սգո օր: Եվրոպան փոխանակ խաչակրաց արշավանքի դուրս գալու եղբայրասպանների դեմ, ժամանակ էր տալիս կոմունիստների թագավորությանը: Այնքան

դատարկաբանությամբ զբաղվեցին, մինչև որ կոմունիստներն իրենց ժողովրդին ճիպտի առաջ խառնած, քշեցին ու լցրեցին կոլխոզ կոչված ճամբարները: Երկրի ներսում առաջացած ժողովուրդների ծով դժգոհությունն Արևմուտքը չցանկացավ օգտագործել: Այստեղ ևս կոմունիստներին հնարավորություն տվեցին ոչնչացնելու տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց: 1942 թ. «Պրավդա» թերթը սխալմամբ մի ճշմարտություն տպագրեց. «Հիտլերը գրաված ռուսական երկրամասերում կոլխոզները չվերացրեց, որովհետև տնտեսության կոլխոզային ձևը լայն հնարավորություն է ստեղծում ժողովրդին հնարավորինս աշխատեցնելու համար»:

Կոմունիստների կուսակցությունն ամեն ինչով նման է քաղաքական ավազակախմբի և ոչ թե կուսակցության: Նրանք երկրում սրի քաշեցին բոլոր կուսակցություններին, մինչդեռ Եվրոպայում կոմունիստներն անարգել մասնակցում են ընտրություններին, անցկացնում են համագումարներ, ունեն իրենց թերթերն ու ամսագրերը: Բավական է ասել, որ ամբողջ աշխարհում այնքան բանտարկյալներ չկան որքան սովետական երկրում: Պետությունն իր հավատարիմ մարդկանց դաստիարակում է իր ոգով: Մի մասը չկարողանալով հաշտվել այս ավազակային ձևի դաստիարակման հետ, չմտան ծառայության պետական հիմնարկներում: Այս ազնիվ մարդկանց, այդ թվում շատ կոմունիստների ոչնչացրեցին՝ ոմանց աքսորելով, ոմանց էլ սովամահ անելով: Սովետական բանտերը լեփ-լեցուն են դատավորներով: Սրանք այն դատավորներն են, որոնք իրենց մեջ պահել էին մարդասիրական ոգի և դեմոկրատական սկզբունքներ: Ինքս էլ որպես դատավոր զոհ եմ գնացել իմ դեմոկրատական հայացքներին:

Լենինի և Ստալինի կողմից մեզ հասցրած վերքերն օր-օրի ավելի են խորանում ու ծանր ցավ պատճառում մեզ: Ինչ աստիճանի դժբախտ ենք, որքան անպաշտպան ու վախեցած, որ չենք կարող գոնե ազատ տնքալ, ազատ լաց լինել: Մեր մարմնի վերքերը մեր սեփական ձեռքերով ծածկում ենք և աշխատում ենք ցույց տալ, որ վերքեր չունենք: Գոռում ենք, որ մեզ՝ հայերիս բնաջնջումից փրկեց Չոկտեմբերյան հեղափոխությունը: Ո՞ր հայը կարող է ասել, որ Չոկտեմբերյան հեղափոխությունը կործանում բերեց հայերիս, իսկ Թուրքիային՝

փրկեց կործանումից: Բանը նրանումն է, որ չես կարող ասել, թե ես չեմ ուզում քո կառուցած սոցիալիզմը, ոչ էլ կոմունիզմը: Քո իզմերից ես վախենում եմ, դրանք հեռու տար ինձանից: Ասելդ ու տարագրության ճանապարհը բռնելդ մեկ է լինելու: Ձիվանին գրել է. «Ձախորդ օրերը ձմռան նման կուզան ու կերթան»: Ինչպես երևում է Ձիվանին կոմունիստների մասին տեղեկություն չի ունեցել: Սրանց երեսներն անգլիական պադոչից էլ հաստ են ու պինդ: Եկան ու մնացին, գնալու էլ երբեք տրամադրություն չունեն: Վայն եկել է մեզ տարել: Նրանք իրենց բոլոր շարժումներով նման են փեթակի բռռերին: Չեն աշխատում, չեն ստեղծում, ուրիշին ուժով աշխատեցնում են և նրանց աշխատանքի հաշվին իրենք ցոփ կյանք են վարում: Աշնանը, երբ բերքը դրսից կտրվում է, մեղուներն իրենց ձրիակերներին սպանում են և դուրս թափում: Կոմունիստ բռռերը հարուստ փորձ ունեն, ի վիճակի են պաշտպանվելու:

Երկրում շատ տարածվեց անանուն նամակներ գրելը: Նամակների հեղինակները վախենում էին, որ դրա համար իրենց կպատժեն, աշխատանք չեն տա: Այդ պատճառով թաքցնում էին իրենց ով լինելը: Նրանք գրում էին կոլխոզի, նախագահի, կուսկազմակերպչի, պետական տնտեսության տնօրենի, դատավորի, դատախազի, կուս. շրջկոմի քարտուղարի, միլպետի, նրա օգնականի և ավելի բարձր կոմունիստ պաշտոնյաների հասցեներին: Գրում էին, որ պաշտոնյա կոմունիստները գող, կաշառակեր կամ կորգողներ են, կոպիտ են, անազնիվ ճանապարհով հարստանում են, անբարոյականությամբ են զբաղվում, ստախոս են և մատնիչ: Նամակները որոշ չափով ստուգվում էին: Անանուն նամակների թիվն արդեն միլիոններով էր հաշվվում, իսկ ստուգումներից պարզվում էր, որ նամակներում բերված փաստերը համապատասխանում են իրականությանը, և երբ համոզվեցին, որ անհատներ չեն գրողները, այլ ժողովուրդն է ոտքի ելել, անանուն նամակների միջոցով իրենց դժգոհություններն ու համոզումներն են հայտնում կոմունիստ պաշտոնյաների դեմ, համոզվեցին, որ կոմկուսակցության մեջ մաքուր մնացած տեղեր չկան, սեփական ժողովուրդն է իրենց խայտառակ անում, կոմունիստների կատարած բոլոր տեսակի անազնվությունները ձգտում են հրապարակ հանել, կոմկուսակցու-

յունը հեշտությամբ իրեն ազատեց հրապարակավ խայտառակվելուց: Ինչպես սովորաբար վարչական ուժի միջոցով խեղդում են ժողովուրդների ծայնը, այս անգամ էլ հայտարարեցին անանուն նամակները համարել ոչ օրինավոր և նրանց վրա ոչ մի ուշադրություն չդարձնել: Իսկ և իսկ Արևմտյան Հայաստանում ստեղծված դրության նման մի իրադրություն է: Երբ թուրք կամ քուրդ ենիչերիները նեղացնում էին հայերին, կողոպտում նրանց, հայերը գանգատվում էին վալուն (նահանգապետ): Վալին գանգատվող հային ձերբակալում էր այն պատճառով, որ հայը «անմեղ» մահմեդականին «գրպարտել» է: Հետագայում հայից մեծ կաշառք վերցնելով՝ ազատում էր, իսկ «ազնիվ» մահմեդականը մնում էր անպատիժ:

«Քննադատություն» բառը բառարաններից հանեցին, փոխարենը մտցրեցին «ինքնաքննադատություն» բառը:

Ոչ ոք իրավունք չունեի կոմունիստին քննադատելու: Կոմունիստն այնքան «ազնիվ» մարդ էր, որ ինքն իրեն կարող էր քննադատել և ի հայտ բերել իր կատարած սխալները:

«Ազնիվ» կոմունիստին ազատեցին քննադատությունից և հնարավորություն տվեցին նրան ազատ կերպով կատարելու իր բոլոր ցանկությունները, որոնք ընդհանրապես ընդունակ են կատարել միայն կոմունիստները:

Ինքնաքննադատությունը ոչ թե իրեն չարդարացրեց, այլ հնարավորություն ստեղծեց հանցանքներ ծավալելու համար: Ռուսաստանը, որ ամեն ժամանակ կայուն օրենքների բացակայություն է ապրել, դա փաստ է: Կարգապահությունը եթե ուսներին դուր գար, անկարգության հետևից չէին վազի, Լենինի ստերին՝ հողը գյուղացուն, գործարանը բանվորին, չէին հավատա և ամբողջ չորս տարի իրենց երկրի ներսում եղբայրասպան պատերազմ չէին վարի: Ռուսներն էին, որ բոլշևիկների ազդեցության տակ ընկնելով՝ իրենց թագավորին գահից անելուց և պալատը կողոպտելուց հետո, իրենց թագավորի սողիկներին բռնաբարեցին: Լենինյան ստերը և չարագործությունները ուսները տարան: Իրենց երկրի առաջադիմական մտավորականներին ոչխարի նման մորթոտեցին: Ստալինի թագավորության ժամանակ տեղի ունեցած ամենաանմարդկային երևույթներն այնքան շատ

էին և այնքան զարհուրելի, որ աշխարհի մարդկությունը նման ոճրագործություններ չէր տեսել, չէր լսել: Ռուսները սիրով տարան: Բոլոր ժողովուրդներն էլ ձգտում են հեռանալ զինվորական ծառայությունից, իսկ ռուսը, ընդհակառակը, ջանք է թափում, որ բանակային դառնա ըստ իս՝ ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ այդպես երկարատև եղբայրական պատերազմի չէր գնա, ինչպես գնաց ռուսը 1917 թվականին: Ես դժբախտ եմ նրանով, որ ռուսների հակասահմանադրական, անմարդկային օրենքները հավասար չափով տարածվում են նաև մեզ վրա, և հույս էլ չկա ազատագրվելու:

Այսքան, որ անարդարություն կա, այնուամենայնիվ չի կարելի ասել, որ սովետների երկրում օրենք չկա: Եթե անհատը չի կարող պաշտպանել իր իրավունքները դարձյալ օրենքով է: Բոլոր տեսակի բռնություններն ու ճնշումներն, երկրի ներսում համատարած ճամբար ստեղծելը, միլիոնավոր մարդկանց աքսորելը, տասնյակ միլիոնավոր երեխաների որբացնելը, ճորտացման կարգեր ստեղծելն ու ամբացնելը պաշտպանվում են սովետական օրենքներով: Սովետների երկրում օրենքները պաշտպանում են միմիայն պետության շահերը:

Չայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հանճարեղ խոսքերը: «Օրենքով մարդկանց բռնաբարում են, իսկ իրավունքով լլկում, կեղեքում», - համապատասխանում է մեր ժամանակի ստեղծած օրենքներին:

Արևելյան Եվրոպան նվաճելուց հետո կոմունիստներն առաջինը պատժեցին հոգևորականներին, որպեսզի վերացնեն խոչընդոտն իրենց կրոնն արմատացնելու համար: Մեր օրերում, մեր աչքի առաջ Եվրոպական աշխարհամասում, զոհասեղանին է դրված մի ամբողջ ժողովուրդ՝ լեհ ժողովուրդը: Ի՞նչ արդյունքի հասան լեհերը, երբ ամբողջ ժողովուրդը մի մարդու նման ոտքի ելավ կոմունիստական անմարդկային իրավակարգի դեմ: Արյուն ու արցունք շահեցին: Երկրի խելացիների մի մասին սպանեցին, մի մասին էլ բանտերը լցրին: Երկրի տերերին ոչնչացնելուց հետո ամբողջ աշխատանքը կենտրոնացնելու են երիտասարդության վրա:

Երիտասարդությանը խաբելու ամենահեշտ միջոցը նրանց սպորտային կազմակերպությունների մեջ ներգրավելն է, սպորտային

տարբեր խաղերի մեջ ներքաշելը: Խորհուրդների երկրի հարուստ փորձը՝ երիտասարդներին քաղաքականությունից հեռու պահելու համար փաթաթելու են լեհ երիտասարդության վզին: Քանի-քանի անգամ հայ, բուլղար և այլ Եվրոպական ժողովուրդներ զոհասեղանին են բարձրացել Եվրոպայի աչքի առաջ: Եվրոպան միշտ էլ մնացել է անտարբեր: Անմեղ զոհերի արյան մեջ իրենց շահն են փնտրել, ոսկի են փախցրել կամ որոշ երկրամասերի տիրացել: Այսօր էլ Եվրոպան, թիակներն առած դատարկ տակառներն է խառնում՝ հայտարարելով, որ ինքը չի կարող խառնվել ուրիշ պետության ներքին գործերին:

Չեխ ու հունգար ժողովուրդները փորձեցին չընդունել նոր կրոնը, որը անհատի նախածեռնությունը, նրա ազատությունը, իր վաստակին տեր դառնալը լրիվ մեռցնում է: Ո՛չ հունգարները, ո՛չ էլ չեխերը չկարողացան ազատություն ձեռք բերել: Ազատության ձգտողները զոհ գնացին ռուսական զավթողականությանը: Յունգարիայի և Չեխոսլովակիայի առաջավոր, հայրենասեր զավակներին տանկերի տակ ճգմեցին: Այդ երկրների ժողովուրդների կամքին ու ցանկությանը հակառակ «սուրբ» հավատը հրով ու սրով փաթաթեցին ժողովրդի վզին: Իշխանության գլուխ կանգնեցրին մոսկովյան լրտեսներին և մարքսլենինյան նոր հավատը վերականգնեցին: Կոմունիստների համար նշանակություն չունի, որ իրենց քայլն ուրիշի ներքին գործերին խառնվել է նշանակում:

Բոլոր ազնիվ մարդիկ տեսնելով Չեխոսլովակիայի, Յունգարիայի, Աֆղանստանի, Լեհաստանի, Մերձավոր Արևելքի, Չնդկաչինի և այլ վայրերի դեպքերը՝ համոզվեցին, որ կոմունիզմը առաջ է շարժվում մարդկային դիակների վրայով: Ստալինը քարտեզին նայելիս մատներով գծում է՝ Դարդանել-Քոսֆոր ծովային նեղուցները, Լամանը, Ջիբլարթարը, անցնում է գնում մինչև Սինգապուր: Ստալինը շատ է սիրում Սինգապուր նավահանգիստը: Կոմունիզմի առաջընթացին դեմ չգնալ, նրան չկանգնեցնել, նշանակում է վտանգի տակ թողնել աշխարհի մարդկության կյանքը և կործանել քաղաքակրթությունը: Եվրոպան սովոր էր շագանակը կրակի միջից ուրիշի ձեռքով հանել, այսօր այլևս չի ստացվում: Կրակը բոլորի ձեռքերն էլ հավասար չափով է այրում: Այն դուրս հանելու համար Եվրոպական շատ քնքուշ

ծեռքեր պետք է այրվեն: Հապաղելը անխուսափելի կործանում է բերելու ամբողջ աշխարհին:

Օ՛, սարսափելի կառուցվածք պետական նոր կարգերի: Դու մարդկային ոսկորներով պարարտացրիր Ռուսաստանի անժայրածիլ Սիբիրը: Դու մարդկային տասնյակ միլիոնների զոհվելու պատճառ դարձար: Դու խլեցիր մարդկանցից ազատությունը և պատիվը: Դուր գերազանցեցիք մարդկությանը ծանոթ անցյալից բոլոր բարբարոսներին, մատնիչներին, մարդակերներին: Դուք հայտարարեցիք, որ բոլոր նրանք ովքեր դեմ են այս « սուրբ» հավատին, ենթակա են ոչնչացման:

Ինչքան մարդիկ ազատության հույսը սրտներին գերեզման են գնացել, առանց ազատության դողանքը լսելու: Սիրտս թրթռում է: Մի՞թե ես էլ նրանց նման, իմ ցանկությունը իրականություն չդառած, ազատությունը չտեսած գերեզման են գնալու: Աշխարհիս մարդկության մեջ շատ տոներ կան, բայց ոչ մեկն այնպիսի մեծ ու համաժողովրդական տոն չի կարող լինել որպիսին լինելու է կարմիր իմպերիալիզմի ճիրաններից ազատագրման օրը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՍԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՎԱՆՔՈՒՄ

1918 թ. մայիսին դաշնակցականները Հայաստանում անցան իշխանության գլուխ: Նրանց նպատակն էր ազատագրել հայ ժողովուրդի կորցրած հողերը: Ամեն կողմից գլուխ բարձրացրին մեր թշնամիները: Վրացի մենշևիկները ցանկանալով օգտվել հայ ժողովրդի ծանր վիճակից որոշեցին ընդլայնել իրենց սահմանները ի հաշիվ Հայաստանի: Մի կողմից վրացիները Ախալքալաքին, Ծալկային և Բուխու-խաչենին էին ձեռք երկարացնում. մյուս կողմից էլ ուզում էին տիրանալ Ալավերդու պղնձի հանքերին, այն մենշևիկյան Վրաստանին միացնելու համար: Նրանք մտածում էին, որ մի հարվածով կտիրանան այդ տարածքներին և որ հայերը ոչ մի դիմադրություն չեն կարող ցույց տալ: Սանահինի համար կռվում վրացական բանակը խայտառակ պարտություն կրեց և զրահագնացքը թողնելով հայերի ձեռքը անկազմակերպ փախավ: Սանահինի պարտությունից հետո «հետոս» մենշևիկները սկսեցին վրեժ լուծել անգեև ու անպաշտպան հայերից: Շատ շրջաններից հայեր էին գաղթել Վրաստան իրենց կյանքը «փրկելու» համար: Մենշևիկյան իշխանավորները ամենուրեք ձերբակալում էին գաղթական հայերին և ուղարկում Թիֆլիս: Հայ գաղթականներին անցկացնում էին քաղաքի փողոցներով՝ հայտարարելով, որ սրանք գերի են վերցված Սանահինի կռվում: Ինձ էլ ձերբակալեցին խաշուրիում և շատերի հետ միասին տեղափոխեցին Գորի: Վրացերեն լեզվի իմացության շնորհիվ փախանք և թաքնվեցինք մոտակա գյուղերում, մինչև դրությունը խաղաղվեց: Հայ մարդը իր հայրենիքի համար հրաշքներ էր գործում, բայց ինչ կարող էր անել իրեն շրջապատող բոլոր հարևանների դեմ, որոնց թվում ոչ մեկը բարեկամորեն չէր տրամադրված:

1918 թ. մայիսին թուրքերը արշավեցին մեր շրջան: Ծանր վիճակ ստեղծվեց շրջանի հայության համար: Շատերը թողնելով իրենց ունեցվածքը փախան Բակուրիանի կողմերը: Բնակչության մի մասն էլ զոհ գնաց թուրքական յաթաղանին: Նրանք կամ կոտորվեցին, կամ էլ ուժով, իրենց ունեցվածքով, քշվեցին Թուրքիա, իսկ կանանց առևանգեցին և տարան կնության: Սուլդա գյուղում այդպիսի ընտանիքներ

րից էին. Սեյրոյան Սկրտիչը, Սանոյի Մանուկն իր սիրած կնոջ հետ, համբարենց Ունանը: Վարդիկենց Մաթևոսը՝ անհետ կորավ, ապոյենց Արանը, թրապենց Սկոն, ազլոյենց Բագրատը, նազարենց Բարսեղի տղա Գրիգորը և Հարությունյան Ստեփանը՝ զազանաբար սպանվեցին: Ապոյենց Մարկոսը և մոսիկենց Մուկուչը, իրենց ոչխարի հոտով և ունեցվածքով քշվեցին Թուրքիա: Թախչյա գյուղում Տեր-Մխիթարենց ընտանիքը կոտորելուց հետո Սամսոնի կնոջը և Համոյի կնոջը՝ Նեկտարին, գերի տարան...

Այս պայմաններում անգամ, հայերը կարողանում էին կազմակերպել դիմադրություն՝ թուրքի սանձարձակությունը կանխելու համար. Մաջադյա գյուղում Սիմոնյան Աբեթը կարողացավ գաղթականներին ազատել թուրք առևանգողներից: Հերոսի մահով ընկան սուլդացի քաջորդիներ՝ Համոն և Գելոն, բարսեղենց Աթոն և շատ ուրիշներ: Պոտոզենց Աշոտի կինը՝ Սաթենիկը ընդդիմացավ թուրքին և սպանվեց ծծկեր երեխան կրծքին սեղմած: Իսոյենց Մակարը և կինը մահացան՝ չդիմանալով ծեծին:

1918 թ. նոյեմբերին գաղթողները վերադարձան իրենց տները արդեն քայքայված, աղքատացած վիճակում: Գաղթից առաջ մենք ունեինք երկու զույգ լծկան եզներ, չորս կով, երեսուն գլուխ ոչխար: Ինչպես մենք, այնդպես էլ վերադարձող գաղթականները, ապրեցինք զրկանքների մեջ: Մարդիկ իրնց ընտանիքներին զրկելու, աղքատության մեջ պահելու հաշվին մի քանի ոչխար և կով էին ձեռք բերում:

1918 թ. մեծ գաղթի վերքերը նոր էին ամոքվում, երբ 1921 թ. փետրվարին մեր գավառ ներխուժեցին Մուստաֆա Քեմալ փաշայի հրոսակախմբերը: Ձյունն այնքան շատ էր, որ միայն երիտասարդները կարողացան փախչել: Քեմալականները մնացին մինչև մարտ ամիսը:

Արդյոք իմացա՞վ էնիմը, որ «հեղափոխական» Քեմալ փաշան իրավունք է տվել իր հրոսակներին կոտորելու, կողոպտելու և առևանգելու սիրուն հարսներին ու աղջիկներին: Մարդկային ո՞ր խղճով Մուստաֆա զանգատերի հետ դաշինք կնքեց, դաշինքը անվանեցին «եղբայրական», որով Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի՝ 1877 թ. սահմանը: «Եղբայրական» դաշինքը Լենինի և Մուստաֆա Քեմալի միջև հայ ժողովրդի տունը հիմքից կործանեց, իսկ Թուրքիայի սահ-

մաններն ընդլայնվեցին: Կարսի նահանգը՝ Կարս, Արդահան, Կաղզվան, Սարիղամիշ քաղաքներով ու շատ ավաններով Լենինը հանձնեց Թուրքիային:

Ամբողջ աշխարհին է հայտնի, որ Լենինը իր ամբողջ կյանքում խաղաղասեր չի եղել: Մարդկությունը Լենինին ճանաչում է որպես պատերազմի հրծիգ, որպես եղբայրասպան պատերազմներ հրահրող, որպես ստախոս և խափեբա: Մինչև այսօր էլ սովետական ժողովուրդները չեն իմանում, թե ինչ ազգի ժառանգ է այդ ծպտյալ քուրմը: Եթե նա ռուս լիներ, նրա երակներում ռուսի արյուն հոսեր, իր անձնական փառքի համար չէր գնա եղբայրասպան պատերազմի:

1918 թ. Անդրկովկասյան սեյմը իրավունք չտվեց հայկական բանակին Կարսը պաշտպանել զենքի ուժով: Եթե բանը պատերազմական գործողության հասներ, Թուրքիան իր վերջին ուժերը կորցնելու էր Կարսի մոտ և արագ թափով նահանջելու էր: Մի կողմից մեր՝ Ահալուխյանի, խատիսյանի, Վրացյանի դիպլոմատիայից զուրկ միամիտ բնավորությունները, մյուս կողմից՝ մենչևիկյան Վրաստանի ու Ադրբեյջանի հայ ժողովրդի նկատմամբ բռնած խարդախ, խորը թշնամական դավաճանական դիրքը՝ հայ ժողովրդին մեծ չարիք բերեց: Թեև Կարսում հայ բուլշևիկները դեմ էին թուրքական բանակների դեմ զենք գործադրել, բայց Կարսի հայ հայրենասեր հրամանատարության տակ եղած ռազմական ուժը, Կարսի անմատչելի ամրությունները, բավական էին, թուրքական բանակները հիմնովին ջախջախելու համար: Վրաց մենչևիկների հայակործան քաղաքականությունը հաջողությամբ պսակվեց, «խաղաղության պայմանագիր» կնքեցին և Կարսը ստանց կրակոցների հանձնեցին թուրքերին:

Ամեն անգամ, երբ հարց է լինում Ախալքալաքի մասին, վրացիները մինչև կոկորդները բղավում են. «Ախալքալաքը Վրաստան է», իսկ երբ պետք է լինում «վրացական» գավառի ժողովրդին պաշտպանել, այն ժամանակ արդեն Վրաստան չէ և ժողովրդին թողնում են բախտի քմահաճույքին: Այդ ժամանակ լգավառը վրաց մենչևիկների ձեռքում էր: Առանց դիմադրության թուրքական բանակը մտավ գավառ և սկսեց կողոպտել քայքայված ու բզկտված ժողովրդին:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսների հայրենիքը պաշտպանելու համար զոհվեցին մոտ 350 հազար հայ երիտասարդներ: Ո՞րն էր մեր շահը: Այն, որ մեր հայրենիքը նվիրեցին բուրքին, այն, որ հայկական գավառները, որոնց յուրաքանչյուր մի թիվ հողի վրա մի քանի հայի արյուն է թափվել, տրվեց օտարին: Ղարաբաղն ու Նախիջևանը՝ Ադրբեջանին, իսկ Հայաստանի հյուսիսային գավառները՝ Ախալքալաքը, Ախալցխան և Ծալկան՝ մոտ 300 հազար հայերով, տրվեց Վրաստանին՝ որպես գաղութ:

Այսօր Ախալքալաքը դարձյալ Վրաստանի իշխանության տակ է: Հայաստան ասածը ոչ թե անկախ հանրապետություն է, այլ միայն աշխարհագրական հասկացողություն: Հայ ժողովուրդը հայկական շրջաններով բաժանված է Վրաստանի և Ադրբեջանի միջև: Երեսուն տարի է, որ հայը հազար ու մի տեսակ հալածանք ու զրկանք է կրում: Հարկերի անչափ ծանրությունից հայ մարդուն հասցրին մուրացկանության: Ամառը հայերը աշխատում են կոլխոզ կոչված ճամբարում, իսկ աշնանը, ստիպված են տեղափոխվել Վրաստանի զանազան շրջաններ աշխատանք կատարելու: Երբ սկսվում է զարմանացանք պետության կարգադրությամբ բոլորին քշում են կոլխոզները, որ գարնանացան կատարեն, պետության հողը մշակեն:

Վրացիները վաղուց էին երազում Ախալքալաքը դարձնել Վրաստանի համար անասնապահական շրջան և տալ կախեթցիներին ոչխարապահություն զարգացնելու համար: Գավառի ամենալավ արտավայրերը հատկացված է նրանց: Ժողովուրդը զրկված է ինքնորոշման իրավունքից: Խորհրդային Հայաստանին միանալու հարցն այս հայկական գավառների հայ մտավորականներից շատ զոհեր է խլել, շատերը հալածանքի տակ են: Ի՞նչ փույթ ռուսական ապերախտությանը, որ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը ծածկված են հայկական բերդերով, վանքերով, հայկական եկեղեցիներով, խաչքարերով ու անհամար հուշարձաններով:

Հայաստանի հյուսիսային գավառները նույնպես հարուստ են հայկական հուշարձաններով: Վրաստանի գիտությունների ակադեմիան 1960 թ. մի շարք պեղումներ կատարեց պատմական Ցուրտավ քաղաքում և բերդաքաղաք Ախալքալաքում: Հիմնովին համոզվեցին,

որ գետնի երեսին չէ, որ հայեր են ապրում, այլ գետնի տակն էլ լրիվ հայկական է: Պեղումների հետևանքով հայտնաբերվեցին հայկական բռնիքներ և խաչեր: Հայտնաբերվեց մի եկեղեցի, որի հարավային պատի տակ թաղված էին երեք քահանաներ: Դռան մոտի գերեզմանաքարի վրա պարզ մեսրոպյան տառերով փորագրված էր հանգուցյալի ով լինելը և տարեթիվը: Այս հայտնաբերումներից հետո հետագա պեղումները դադարեցրին: Վկաները, ինչպես տեսնում եք, անաչառ են: Ուրիշ վկաներ չեն պահանջվում ապացուցելու համար, թե ովքեր են ապրել այս հին քաղաքում՝ Գուգարաց աշխարհի մի մասում: Իզուր չէ, որ ոչ վաղ անցյալում վրացիները քանդում էին այն աղբյուրները, որոնց գմբեթների քարերին հայերեն հիշատակություններ էին փորագրված: Ալաթումանցի Պետրոսյան Թագուշը շինել է տալիս որդու հիշատակը հավերժացնող աղբյուր և աղբյուրի գմբեթի վրա հայերեն տառերով գրել է տալիս հուշագիրը: Նրան ստիպում են ջնջել մեսրոպյան տառերը:

Նույնը կատարվում է այսօր: Ոչնչացնում են հայկական հուշարձանները, վանքերը, հայկական մեծ գերեզմանատները քանդում, անտառների են վերածում:

Ելույթներից մեկում Խրուշչովը հայտարարեց. «Մենք չենք կարող ընկնել այն բանի հետևից, թե պատմականորեն ում է պատկանել այս կամ այն երկրամասը, մենք նայում ենք, թե ինչ ժողովուրդներ են ապրում տվյալ երկրամասում»: Խնդիրն էլ հենց նրանումն է, որ Ջավախքը պատմականորեն չի կարելի Վրաստան համարել, և բնակչության 94% էլ հայեր են: Երբ Դրիմը միացրին Ուկրաինային, և Միջին Ասիայի հանրապետությունների միջև տեղի ունեցավ սահմանների փոփոխություն, մենք սպասում էինք, որ այդ արդարության սահմանները մեզ էլ կհասնեն: Մեր հույսերը չարդարացան: Կենդանի հայ մարդը, ինչ կուսակցության էլ պատկանելիս լինի, տեսնելով պատմական Հայաստանն անխղճորեն անդամահատված մարմնի ամեն մի կտորը մի կողմ գցած, չի կարող և չպետք է մնա առանց հուզմունքների, առանց ծանր ապրումների:

Գետինն էլ է անդամահատված, մարդն էլ:

Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Ադրբեջանին միացնելով հայերի քանակը Ադրբեջանում կրկնապատկվեց, դարձավ 700 հազար: Նորից նույն հալածանքը, նույն ճնշումները, ինչ որ տեղի կր ունենում հայերիս նկատմամբ մեծ Թուրքիայում, կրկնվում էր փոքր Թուրքիայում:

600 հազար հայեր ապրում են Վրաստանում, որոնք չափն անցած անարգանքի, գրկանքների ու հալածանքի ենթարկվեցին: Հայր դիմադրելու ոչ մի հնարավորություն չուներ և չունի:

Ախալքալաքի գավառը՝ Ախալքալաք և Բոզդանովկա շրջաններով, Վրաստանի համար կթու կով է: Հանրապետության գյուղատնտեսական մթերքի առնվազն 30%-ը այս երկու շրջաններն են տալիս:

Ճորտատերը հիմար չէ, որ 125 հազար ճորտեր ձեռքից բաց թողնի: Պատահական չէ, որ սահմանադրության մեջ հատուկ հոդված մտցրին. «Մի հանրապետությունից մյուս հանրապետության որոշ տարածություն անցնելու դեպքում հանրապետության համաձայնությունը անհրաժեշտ է»: Գնա ու գլուխդ քարով տուր: Սահմանադրության վրա է հիմնվում Վրաստանը, երբ չի հրաժարվում այս շրջաններից: Որ Ջավախքի հայությունը ցանկանում է միանալ Հայաստանին, երկու խոսք լինել չի կարող: Այսպիսի լուրջ հարցերը հեշտ են լուծվում միայն այնտեղ, որտեղ դեռ չեն ճաշակել լեռնայան «ազգային հարցի» համը: Ցավն այն է, որ «լեռնայան» անունը կրող այս կուսակցությունը մարդկության առաջ փակեց և օր-օրի փակում է բոլոր դռները, իսկ մի դուռ լայն բաց է թողած: Այդ դուռը մթին աշխարհը տանող դուռն է, տարտարոսի դուռը: Տարտարոսի անունը իրենք «ուղղիս տուն» են անվանում: Այդ «ուղղիչ» տունը լեփ-լեցուն է երկրի անձեղ մարդկանցով: Մեկը գողություն չի արել կոմունիստ վերակացուի օգտին, մյուսը դիտողություն է արել վերակացուին նրա հիմար հրաձանների և անմարդկային վերաբերմունքի համար, երրորդը քաջություն է ունեցել քննադատելու իրեն ղեկավարող կոմունիստին: Այսպես, մեր երկրի «ազնիվ» մահմեդականներին չլսողներով, նրանց «հանրագուտ» հրամանները չկատարողներով, տիրոջ օգտին գողություն անելուց հրաժարվողներով տնքում են սովետական տարտարոսները: Ախալքալաքի գավառում կթվում են տասնյակ հազարավոր կովեր և

հարյուր հազարավոր ոչխարներ: Հայ ճորտերն այդքան շատ կովեր ու ոչխարներ պահում են, կերակրում, արածացնում, իսկ իրենք յուր ու պանրի երես չեն տեսնում: Իրավիճակը իսկական ճորտություն չէ՞ արդյոք: Կենդանի մարդուն աշխատացրու, այնքան վարձատիրիր, որ կարողանա իր գոյությունը պաշտպանել, ու որքան որ կյանք ունի, լարված աշխատանք կատարի տիրոջ համար: Օրինակ՝ ես չեմ կարող հասկանալ, թե որն է բուլշևիկյան հեղափոխության տված օգուտը: Գյուղացին կորցրեց իր ունեցած հողը: Աշխատում է պետության հողի վրա, սովետական կալվածատիրոջ վերակացուների խիստ հսկողության ներքո: Իր ցանած, հնձած, կալսած ցորենից եթե մեկ կգ տանի իր տան կարիքների համար, տասը տարի բանտարկություն է ստանում: Ես ո՛չ իր կամքի տերն է, ո՛չ էլ աշխատանքի: Կթվորուհի գեղջկուհին այլևս իր սեփական կովը չունի: Կթում է սովետական կովը և, իհարկե, նրա ոչխարը: Կթվորուհին միմիայն կթվորուհի է: Թարմ կաթը, թարմ մածունը գեղջկուհու տանից վաղուց են վերացել: Կինը կատարում է ամենածանր աշխատանքը: Մինչև խորհրդայնացումը ո՞վ թույլ կտար գեղջկուհուն գերանդիով հունձ անել, հացահատիկով լիքը պարկեր չալակել, սայլ բառնալ, բահով փորել և ուրիշ աշխատանքներ կատարել: Եթե մեկը թույլ տար, խոսակցության առարկա էր դառնում: Ինչի՞ց ազատ չէր կինը, կամ ինչի՞ց ազատագրվեց նա, երբ այսօր մեր աչքի առաջ տաժանակիր աշխատանք է կատարում իր տիրոջ՝ սովետական կալվածատիրոջ համար:

Ախալքալաքի գավառի Կարգախ գյուղը իր բարձր որակի ցորենով մի քանի Կարգախ էլ կարող էր իր հետ պահել: Այսօր կարգախցին սոված է, հարյուրավոր ընտանիքներ թափառական կյանք են վարում արևմտյան Վրաստանի տարբեր վայրերում: Սուլդան իր յուղով ու պանրով կարող էր մատակարարել մի ամբողջ շրջան: Մինչև կոլեկտիվացումը այս գյուղում կար 1400 կով, մոտ 7000 ոչխար: Այսօր Սուլդան ունի 80 կով: Կարձ ժամանակում ժողովրդին աղքատության հասցրեց կոլխոզը: Սամսար գյուղում սովամահությունը համատարած բնույթ է կրում: Մի գյուղացի կոլխոզի նախագահ Գալուստից պահանջում է, որ վերջինս միջոցներ ձեռնարկի: «Մարդիկ սովից մեռնում են յեթ մտածում այդ մասին, իսկ ֆերմայի գառների խնամքը մեծ հոգա-

տարության տակ եք վերցրել», - ասել է նա: Այս գյուղացուն, որպես քաղաքական հանցագործ ու զրպարտիչ, որ համարձակվել է ասել, թե սովից մարդիկ են մեռնում ձերբակալում են և աքսորում են Սիրիո: Այս չափ աղքատանալ և լուռ մնալ, կարող են միայն ճորտերը: Բարբարոսբար ճնշվում է յուրաքանչյուրը, եթե նա համարձակվի թեկուզ մի բառ ճիշտն ասի: Կարգախցի գելոյեցն Արշակին ու նրա եղբորը դատապարտեցին 16 տարվա բանտարկության, նրա համար, որ իր նրանց մոտ մի համրիչ է եղել, որը ունեցել է արտասահմանյան նշան: Գոման գյուղի չորս կոլխոզնիկուհի կարտոֆիլի արտում աշխատելիս, երկու-երեք կիլոգրամ կարտոֆիլ են հանում, տեղում եփում են և ուտում: Բոլորին դատի են տալիս: Դատական նիստում պարզվեց, որ չորսն էլ ծայրահեղ աղքատ են: Սովն է ստիպել նրանց դիմել այդ քայլին: Կարծես թե պաշտպանելու լրիվ հիմք կար, բայց դատապաշտպանը ի վիճակի չէր նրանց պաշտպանել: Չորս սովյալներն էլ դատապարտվեցին չորսական տարի բանտարկության:

Բոգդանովկա շրջանի Սաթխա գյուղի դպրոցի դասատուների նախաձեռնությամբ ընդհանուր դիմում էին գրել Կրեմլի իշխանավորների անունով՝ նկարագրելով շրջանի ժողովրդի ծանր վիճակը: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին պոկ գալ Վրաստանի հպատակությունից, ստորագրել էին դիմումը: Կասկածից դուրս է, որ բոլոր հայերի ցանկությունն է Չայաստանին միանալը: Կոմունիստ պաշտոնյաները դեմ են Չայաստանին միանալուն: Այդ շները վախենում են, որ իրենց ունեցած պաշտոնները ձեռքերից կզնան: Ընդհանուր դիմումի առթիվ հայտնում են Բոգդանովկա՝ կուսակցական կոմիտե: Արդեն շատ մարդկանց կողմից ստորագրված նամակը վերցվում է, իսկ այն դասատուները, որոնց նախաձեռնությամբ կազմվել էր դիմումը, խիստ պատժվում են:

Ախալքալաքում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ վրացի զինվորականներն ամեն տեսակի չարագործություն էին կատարում: Նրանց արարքները բոլոր դեպքերում էլ մնում էին անպատիժ: Մի վրացի հրամանատարի հարցնում են.

- Ինչո՞ւ գինեվաճառ Աստվածատուրյանին սպանեցիք և ո՞ր հանցանքի համար միլիցիոներին մեքենայի տակ ճզմեցիք:

Պատասխանը լինում է.

- Մենք մարդ չենք սպանել, հայ ենք սպանել:

Վրաստանի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ պաշտպանություն էր գտնում և հովանավորվում Կրեմլի կողմից, որտեղ նստած էր հայ ժողովրդի երդվյալ թշնամի Ստալինը: Օրվա լուզունգն էր. «Վրաստանը վրացիների համար»:

1949 թ. հունիսի 14-ը, հայ ազգի սգո օրերից մեկն է: Կազմակերպվել էր համատարած աքսոր: Աքսորվողների թվում վրացիներ չկային: Չայերը կազմում էին աքսորվողների 95 %, իսկ մնացածը թուրքեր, հույներ, ասորիներ և քրդեր էին: Ամեն անգամ, երբ ընդհանուր բնույթ է կրում աքսորը, վրացիները ծաղրում են. « Չայերը հարյուր հազարով քչանալու են»: Իսկապես որ 1949 թ. աքսորվում էին 100-120 հազար հայեր: Չայ ազգը ոչ մարմնական տեր ուներ, ոչ էլ հողեր: Նույնը կատարվեց 1950 թ. փետրվարին:

Թուրքերին Վրաստանից աքսորում էին նրա համար, որ Վրաստանում այլազգիների թիվը քչանար և թուրքական սահմանի մոտ թուրքերի գոյությունը համարում էին վտանգավոր:

Չույները աքսորվում էին միայն նրա համար, որ Չունաստանի ժողովուրդը չնդունեց կոմունիստական ծրագիրը, չապականվեց ռուսական կոմունիզմով: Դրա համար էլ Մոսկվան թշնամաբար տրամադրվեց Չունաստանի հանդեպ և վրեժ լուծեց իր երկրում ապրող անզեն ու աղքատ հույներից:

Քրդերին / եզդի / տեղափոխելու գլխավոր և միակ պատճառն այն էր, որ նրանք երկար ժամանակ ապրելով Վրաստանում, հաստատ մնացին իրենց ազգային սովորույթներին, փորձ չանելով մոտենալ վրացիներին, կամ ձուլվել նրանց հետ: Նրանք ավելի մոտ հարաբերությունների մեջ էին հայերի հետ և շատ դեպքերում իրենց անուն ազգանունը հայացնում էին: Այս բանը դուր չէր գալիս վրացիներին, որը և պատճառ դարձավ եզդի քրդերի հանդեպ ևս դիմել նման բարբարոս քայլի:

Չայերին աքսորելու հիմնական պատճառը հայ լինելու մեջ էր: Կուսակցության նպատակն էր՝ հայերի թիվը քչացնել Չայաստանում և հայաբնակ վայրերում, վերջնականապես Չայաստանը բաժանել

Վրաստանի և Ադրբեջանի միջև: Աքսորվողների մեջ քիչ չէին նաև հայրենադարձները: Արտասահմանում նրանց խաբել էին, թե Սովետական Ռուսաստանը ազատ և անկախ երկիր է, թե Ռուսաստանում մարդիկ ունևոր ու երջանիկ են: Ներգաղթելուց հետո համոզվեցին, որ իրականությունը այլ է: Ապրելու համար միջոց չկար: Նրանք չէին կարող ոչ առևտուր անել, ոչ արհեստով զբաղվել, ոչ ազատ խոսել և որ ամենակարևորն է, թույլ չէին տալիս վերադառնալ իրենց ապրած վայրերը: Այս ազատ խոսելու սովոր մարդկանց հայտարարեցին լրտեսներ, գրկեցին հայրենիքում ապրելու իրավունքից և արտրեցին Սիբիր: Անգամ զրպարտեցին նրանում, թե դաշնակցականները հրահանգ են տվել հայրենադարձ հայերին թունավորել Լենինականի ջրմուղը, որ ժողովուրդը կոտորվի: Ոչ մի հայ չի հավատում նման հերյուրանքին, նման անհիմն զրպարտությանը: Դաշնակցականները հայ ժողովրդի զավակներն են: Նրանք էին, որ հերոսաբար կռվեցին բոլշևիկների դեմ՝ հանուն հայրենիքի, հանուն ազատության ու անկախության: Թողե՛ք մեզ հանգիստ մեր հայրենակից դաշնակցականների հետ: Թող ձեր տանկերն ու զինվորները չտրորեն մեր հողը, թողե՛ք մեր անձնագիրը հայ զինվորը ստուգի: Թողե՛ք մեր հայրենիքի սահմանները հայ զինվորը պաշտպանի: Դուք, Ձեր բոլոր սահմաններով առաջ շարժվեցիք, նույնիսկ գեներլ ուժով, իսկ մեր սահմանից ետ նահանջեցիք: Կրեմլի դահլիճներից հաճախ է լսվում.«Թուրքիայի հետ մենք սահմանային վեճ չունենք»:

Ես ինքս ականատես եմ եղել 1949 թ. հունիսի 14-ին Թիֆլիսի կայարանում տեղի ունեցող ոճրագործությանը: Կայարանում անհամար ապրանքատար գնացքներ էին կանգնած: Վագոնները լցված էին արքար ուղարկվող ընտանիքներով: Վագոնների դռները փակված և ուժեղ իսկողության տակ էին վերցված: Ոչ ոք իրավունք չուներ մոտենալ վագոններին: Սարսափելի տեսարան էր. շոգից վագոններում խեղդվող երեխաների և ծնողների հուսահատ ճիչերը, սովից ու ծարավից տանջվողների աղերսանքները՝ մարդու սիրտ էր կտրատում: Ամենից զարհուրելին, դա հղիությունից ազատվող և երեխա վիժող կանանց ճիչն էր: Չայ կնոջ համար խորթ է օտար տղամարդու մոտ իրեն ոչ վայել կեցվածք ընդունելը, իսկ հիմա, օտար տղամարդկանց

մոտ նա երեխա է ծնում, քանի որ վագոնում տեղավորված էին մի քանի ընտանիքներ: Կայարանում հավաքված մարդիկ պատմում էին, թե ինչպիսի անմարդկային վերաբերմունք էին ցույց տվել բարբարոսները, երբ գիշերով ներխուժել էին արքարով մարդկանց տները. երիտասարդի դին տանը թողած, ծնողներին տնից ուժով հանել ու նստեցրել էին մեքենա: Չոր խնդրանքը, որ ժամանակ տան տղային հողին հանձնի, անպատասխան են թողել: Երկունքի մեջ գտնվող կանանց հնարավորություն և ժամանակ չեն տվել, որ նրանք ծննդաբերեն, նոր միայն նստեցնեն ավտոմեքենա՝ կայարան տեղափոխելու համար: Առանց ժամանակ կորցնելու, բարբարոսները նրանց ուժով վերցրել, գցել են մեքենաների մեջ ու տարել կայարան: Մնացածը պարզ է ու հասկանալի, թե ինչ կարող էր պատահել այդ խեղճ կանանց հետ....

Տեսածս՝ զարհուրելի տեսարանը և լսածս՝ անմարդկային պատմությունները ինձ մոռացնել էին տվել, որ ես փախուստի մեջ եմ և ինձ որոնում են: Երբ ուշքի եկա, անմիջապես հեռացա կայարանից, իսկ կայարանամերձ կամրջի վրայից հազարավոր մարդիկ դիտում էին այդ արյունոտ տեսարանը:

Պատմությունը շատ բարբարոս պետություններ է հիշում, որոնք կործանվել են իրենց իսկ դաժան վարմունքների համար, բայց նման բարբարոսություն՝ պատմության մեջ իր նմանակը չունի:

Չայ պաշտոնյա կոմունիստները տեսնում են հազար ու մի տեսակ եղեռնագործություն, որ կատարվում է հայ ժողովրդի հանդեպ, բայց առանց խղճի խայթի անամոթաբար ճառում են ժողովրդի անունից, որ կոմունիստական կուսակցությունը միակ կուսակցությունն է, որի քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք բերեց ազատություն, ապրում է խաղաղ, երջանիկ ու ունևոր կյանքով: Փորձիր ասել այս ավազակին, որ հայ ժողովուրդը դեռևս ոչ մի խաղաղություն չի տեսել, որ ամեն տարի հազարավոր հայեր են արքարում Սիբիր ու կորչում անհետ:

Ըստ Մախարաձեի պլանի՝ Ախալքալաքի գավառի հայերը պետք է տեղահանվեին և տեղաբաշխվեին փոքր խմբերով Վրաստանի գյուղերում, որպեսզի ծուլունը հեշտ լիներ, իսկ Ախալքալաքի գա-

վառի հսկայական տարածությամբ Ալայան լեռները թողնել Կախերի ոչխարապահներին՝ ոչխարապահությունը մեծ ծավալով զարգացնելու համար: Ախալքալաքի գավառում վրացիները շատ քիչ էին: Չավառի լեռնային և ոչ մատչելի կլիման վրացիներին չէր հրապուրում այնտեղ ապրելու համար: Այդ պատճառով էլ սլաքը դարձյալ ուղղեցին դեպի հայերը: Որպեսզի ոչխարապահները գավառում հենարան ունենային և լայն հնարավորություն՝ թե՛ ամռանը և թե՛ ձմռանը ոչխարները պահելու համար (Ախալքալաքի գավառն ունի նաև հարուստ ձմեռային արոտավայրեր), անհրաժեշտ էր, որ որոշ չափով բնակչություն մնա տեղում: Ահա այստեղ է, որ Վրաստանի կոմունիստական կառավարությունը կանգ առավ հայ կաթուղիկների վրա, հատկապես այն կաթուղիկ հայերի, որոնց մայրենի լեզուն [խոսակցական լեզու - Ա. Մ.] տաճկերենն է՝ Տաճկախոս կաթուղիկ գյուղերում շատ շուտ հենարան գտան: Ախալքալաքի գավառում մոտ 20 հազար հայ կաթուղիկներ են ապրում: Սրանք բավական էին վրացի ոչխարապահներին՝ իրենց հոտերը պաշտպանելու համար:

Ախալքալաքի շրջանի Կոմունիստական կուսակցության կոմիտեի քարտուղար Միխանաշվիլու նախաձեռնությամբ մեր շրջանի հայ կաթուղիկ գյուղերում ժողովներ անցկացրին, որ իբր հայ կաթուղիկները վրացական ծագում ունեն, նրանք սխալմամբ են կրում հայի անուն ազգանունը: Խոստանում են կաթուղիկներին տալ մեծ արտոնություն և բարձր պաշտոններ, եթե իրենց ազգանունները փոխեն և գրվեն վրացական ազգանուններով: Խուլզումո գյուղի Լևանյան ազգանունով մի ուսուցիչ, որը վրացական կրթություն էր ստացել, հայ երեխաներին, որոնք սովորում էին հայկական դպրոցներում, ցուցակագրում է և տեղափոխում վրացական դպրոց: Կարտիկամ և Բավրա գյուղերում գյուղացիները սկզբում արգելում են եկողներին ժողովներ անցկացնել՝ հայտարարելով, որ վրացի ազգը ոչ մի կապ չունի իրենց հետ և չի ունեցել իրենց պապերի հետ: Բայց Միխանաշվիլու հետևողական աշխատանքը իր արդյունքն էր տալիս. կաթուղիկ հայ գյուղերից շատ

* Այդ մասին տե՛ս Մելքոնյան Ա.

երիտասարդներ ուղարկվեցին պետության հաշվին սովորելու: Վրաստանի կառավարության և կուսակցության վարած քաղաքականության շնորհիվ Խուլզումո, Կարտիկամ և Բավրա գյուղերի բռնած դիրքն առաջ բերեց ատելություն հայ լուսավորչականների և հայ կաթուղիկների միջև:

Բավական է ասել, որ հայ կաթուղիկ գյուղերից հաճախ լսվում էր.
- Շուն կլինեմ, հայ չեմ լինի:

Կասկածից դուրս է, որ կաթուղիկ հայերի նման վարկաբեկիչ հայտարարությունները դուր չէին գալիս ոչ մի հայի [լուսավորչական]: Օրագիրն իրագործելուց հետո վրացիների տոկոսը Ախալքալաքի շրջանում որոշ չափով բարձրացավ:

Նույն սկզբունքով էին շարժվում Ախալցխայի գավառում: Ախալցխայի գավառի թուրքերին աքսորելուց հետո այդ գյուղերը բնակեցրին վրացիներով, իսկ հայերի վրա ծանր ճնշումներ գործադրեցին, որի պատճառով մի մասը թողեց, հեռացավ Չայաստան, կամ Ռուսաստան, իսկ մնացած մասն արդեն քիչ տոկոս է կազմում վրացիների համեմատ:

Այս հարցի վերաբերյալ իմ բողոքները Մոսկվա՝ կուսակցության կենտկոմ, մեծ իրարանցում էին առաջ բերել: Իմ բողոքների արդյունքը այն եղավ, որ հետագա ժողովներ անցկացնելը դադարեցրին: Վրաստանի կենտկոմն այս լուրջ խնդրի շարունակությունը հանձնարարեց կենտկոմի ամենահավատարիմ անձնավորությանը՝ շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար Թամարա Լազարաշվիլուն, որն ազգությամբ հույն է (Լազարիդի ազգանունը վերածել է Լազարաշվիլու): Նա հավատարիմ մնաց կենտկոմին և անբաժան ազգուրաց կաթուղիկ հայերից:

Վրացի կոմունիստները այնքան թշնամաբար են տրամադրված հայերի հանդեպ, որ բացեիբաց ձգտում են վրացի հասարակ ժողովրդին ևս տրամադրել հայ հասարակ ժողովրդի դեմ և կործանել այս երկու հարևան ազգերի փոխադարձ սերն ու հարգանքը, որոնք դարերի պատմություն ունեն և կապված են տնտեսական ու բարեկամական կապերով:

Վրաց ժողովրդի մեջ այն համոզմունքն էին արձատագնում, որ առանց հայերի տեղահանման մեծ Վրաստան ստեղծել անհնար է:

Վրացի գիտնական Ջանաշիան Ստալինի առաջարկությանը Անդրկովկասի ժողովուրդների պատմության գրքում մտքրեց այն կարծիքը, որ Արարատյան դաշտը վրաց ժողովրդի նախահայրերի հայրենիքն է եղել: Պատահական չէր, որ յոթերորդ դասարանի դասագրքերում մտքրին հետևյալ միտքը, թե Եփրատ և Տիգրիս գետերի հյուսիսային ակունքները Վրաստանի տարածքն է եղել: Այդ դեպքում ամբողջ Արևմտյան Հայաստանը, որի վրա ոչ մի վրացի չի ապրել և չէր ապրում, պետք է ճանաչվեր Վրաստան: Երբ ծրագիրը իրագործված կլիներ, Ստալինը ասելու էր թուրքիային.

- Ես սարն իմն է, Ես ծառն իմն է, ծառում փշակ կար, փշակում մի բույն. Ես ո՞վ է էկել տիրացել թաքուն: Այ դու թրքուկ, հիմար թրքուկ, ու չես ասի դու անամոթ, Կարս ու Կարին ձգես ինձ մոտ:

Ախալքալաքը տեղահան կլիներ, հայ կաթոլիկներին որպես հավատարիմ տարրի կթողներին տեղում, իսկ հայ լուսավորչականներին շաղ կտային 85 հազար քառակուսի կմ Վրաստանի երկրով մեկ, երբ վրա չհասներ Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Հայը բացի լավությունից վրացուն վատություն չի արել: Այս ապերախտները տիրացան հայի հարստությանը: Թիֆլիսը, Գորին, Թելավը, Սուրամը Ախալցխան հայ մարդու ձեռքերով են կառուցված 1891 թ. նյութերը ասածիս խոստում վկաներն են:

1891 թ. տվյալներով այդ քաղաքներում վրացի և ռուս ընտանիքների ու հայ ընտանիքների հարաբերությունը հետևյալն էր.

Թիֆլիսում`	417	և	2951
Գորիում`	121	և	331
Թելավիում`	74	և	236
Սիղնախում`	12	և	377

Հայերի հարստությունները, նրա կառուցած հրաշալի տները ուժով խլված են հայերից և հատկացված են վրացիներին: Հայը ծաղր ու ծանակի է ենթարկվում : Սի շարքային վրացու կողքով չես կարող անցնել: Իրեն արտոնյալ մարդ կարծող Ստալինի որդին քեզ ծաղրում է ասելով.

- Էռեվան գնա, Էռեվան:

Ո՞վ է հարցնողը, թե ժամանակին Թիֆլիսը հայկական քաղաք է եղել: Այն, ինչ որ հայկական է վերցնենք տանենք, Վրաստանի մայրաքաղաքը կանհետանա: Ժամանակը, երեկվա անճարին այսօր հանճար է դարձրել, երեկվա ծառան, այսօր հային ծառա է դարձրել: Եթե առյուծն է քեզ հոշոտում իրավունք չունես նեղանալու, քանի որ բնությունը այդ կենդանուն ստեղծել է հոշոտելու համար և մարդիկ նրան գիշատիչ անունն են տվել: Երբ նապաստակն է հարձակում կատարում քեզ վրա, մահու չափ ծանր է ու վիրավորական: Մենք հայերս, թեև քչացել ենք, թեև մեր մարմնի վրայով եղեռն է անցել, այնուամենայնիվ, իրենցից մենք մեծ ենք, այսօր էլ, ամեն ժամանակ էլ:

Տարեցտարի Ախալքալաքի հայկական դպրոցներում սովորողների թիվը նվազում է: Հայերը գերադասում են, որ երեխաները սովորեն ռուսական դպրոցներում, որովհետև ռուսական դպրոցի շրջանավարտը կարող է աշխատանք գտնել, հայկականի դեպքում` ոչ: Հայ երեխան զրկված էր և այսօր էլ զրկված է իր ժողովրդի պատմությունը ուսումնասիրելու իրավունքից, փոխարենը անցնում է վրաց ժողովրդի պատմություն:

Թելավի, Սուրամի, Բաթումի, Սուխումի, Բորժոմի և այլ հայաշատ քաղաքներում փակեցին բոլոր հայկական դպրոցները: Վրաստանում ապրող շատ հայեր վաղուց արդեն մոռացել էին մայրենի լեզուն և խոսում էին վրացերեն (Գորիի, Սիղնաղի, Թելավի գավառներ և այլուր): Վրացիների հալածանքը հայերի նկատմամբ այնտեղ հասավ, որ կտրուկ արգելեցին Թիֆլիսի հայերեն լեզվով ռադիո հաղորդումը: Ախալքալաքի ռադիոկայանից նույնպես արգելվեց հայերեն ռադիոհաղորդումները: Արդյունքում` քաղաքում եղած 600 ռադիոընդունիչներից 370 ռադիոընդունիչի տերեր հրաժարվեցին, որովհետև վրացերեն բոլորովին չէին հասկանում:

Հայաշատ գյուղերում գոյություն ունեցող հայկական եկեղեցի, և հայ քահանան բոլոր ծիսակատարությունները կատարում էր հայերեն լեզվով (պատարագ, պսակ, մկրտություն, ժամերգություն, արոթք): Վրացախոս հայը իմանում էր, որ ինքը հայ է, լուսավորչական: Իսկ այժմ ոչ մի գյուղում չկա հայկական եկեղեցի, հայկական բոլոր

դպրոցներն էլ փակեցին: Հայն այնքան է ենթարկված ու ենթարկվում հալածանքի, որ վրացախոս հայերը շատ դեպքերում իրենց հայ լինելը թաքցնում են:

Թբիլիսի քաղաքի Նախալովկա թաղամասի Մագիստրալ փողոցի № 32 տան բնակիչ Գևորգ Ավետիկովն ունի երկու տղա՝ Վասյան և Րաֆֆին: Որպեսզի կարողանա աշխատանք ճարել, մեծ տղան՝ Վասյան, փոխեց իր ազգանունը և վրացական ազգանունով կարողացավ աշխատել: Փոքր եղբայրը՝ Րաֆֆին, որը շատ ընդունակ տղա էր, միջնակարգ դպրոցը վերջացնելուց հետո չկարողացավ շարունակել ուսումը, որովհետև բարձրագույն դպրոցներում նրան չէին ընդունում: Հարցը պարզ էր. պետք էր վրացի դառնալ: Րաֆֆին փոխեց ազգույնունը և ընդունվեց համալսարան:

Վրաստանի բոլոր հայերին ազատում են աշխատանքից և տալիս են շարքային աշխատանք, այն էլ միայն այն դեպքում, եթե այդ շարքային ցածր աշխատանքը վրացին չի պաիհանջում:

Որպեսզի Վրաստանից Հայաստան գաղթած բազմահազար հայերը հնարավորություն չունենային ազատ կերպով կապվել իրենց հարազատների հետ, Հայաստանի և Ախալքալաքի միջև՝ Բոգդանովկայի շրջանում՝ Հայաստանի սահմանին մոտ, ստեղծեցին սահմանային գոտի: Այդ գոտին է սահմանը Հայաստանի և Վրաստանի միջև, ուրիշ սահման չկա: Վրաստանից Հայաստան գնացող հայերը ազատ անցնում են, այսպես կոչված, սահմանը, իսկ Հայաստանից եկող հայից ռուս զինվորը պահանջում է անձնագիր և անցագիր: Եթե Ախալքալաքի, Բոգդանովկայի կամ Ախալցխայի շրջանում հայ է մահանում, նրա հարազատները Հայաստանից ի վիճակի չեն լինում ներկայանալ հուղարկավորմանը, քանի որ անցագիր ստանալու համար առնվազն մեկ շաբաթ է հարկավոր:

Վրաստանի կառավարության այս անմարդկային, հակահայկական քաղաքականության դեմ բողոք գրեցի ՍՍԿԿ: Կենտկոմից եկավ մեկը՝ տեղում իմ բողոքը ստուգելու համար: Շրջանային կոմիտեի քարտուղարը՝ Մադոյան ազգանունով, հայտնեց եկողին, որ, իրոք, սահմանային այդ գոտին շատ դեպքերում առաջ է բերում դժգոհու-

յուն ժողովրդի մեջ: Տարիներն անցնում են, բայց վիճակը մնում է անփոփոխ:

1957 թ. Ախալքալաքի շրջանի դատախազ Դիասամիձեի և պետանվտանգության կոմիտեի նախագահ՝ Տալախաձեի առաջարկությամբ Վրաստանի արդարադատության նախագահի օգնականից դատավոր Մինասյանի անունով հեռագիր ստացվեց, որ ավագ քարտուղար Մկրտչյանին անմիջապես հեռացնել աշխատանքից: Դատավորը անգոր էր ինձ պաշտպանել: Այդ ժամանակ արդեն հրապարակի վրա էին Վրաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության հասցեին ուղղված իմ դիմում-բողոքները: 1939 թ. Սաբոյի առաջ քաշած մեղադրանքները դարձյալ ներկայացվեցին և ինձ գրկեցին դատարանում աշխատելու հնարավորությունից:

Վեց ամիս դատարանում աշխատելուց հետո նորից անցա անգործների շարքը: Շատերը, նույնիսկ շատ կոմունիստներ, ինձ խորհուրդ էին տալիս վերջ տալ բողոքներին: «Մի դժբախտացնի և սովի մի մատնի քո ընտանիքը». ասում էին նրանք: Անտարբեր լսում էի ու անցնում գնում: Շրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի մասին կուսակցության կենտկոմին գրած իմ դիմում-բողոքները մեծ մասամբ ուղարկվում էին Վրաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմ: Հալածանքն իմ նկատմամբ ավելի էր ուժեղանում: Որպես պատասխան քայլ՝ 1963 թ. իմ կուսակցական տոմսը ուղարկեցի Մոսկվա: Իմ նամակի մեջ գրված էր. «1925 թ. ես մտա կոմունիստական կուսակցության մեջ: Այն ժամանակ ես երիտասարդ էի, ոգևորություն՝ մեծ: Վրաստանում, որտեղ ես ապրում եմ, չկա կոմունիստական կուսակցություն, նրան փոխարինում է քաղաքական ավազակների մի խմբավորում: Ավազակների խմբում մնալ և նրանց՝ արյունով գրված հրամանները ես ի վիճակի չեմ կատարել: Ձեր տված տոմսը ետ ընդունեցեք»:

Անցնում է երկու ամիս: Իմ տոմսը Մոսկվայից ուղարկում են Թբիլիսի: Վրաստանի կենտկոմի երկրորդ քարտուղար Ստուրուան եկավ Ախալքալաք՝ ինձ հետ հանդիպելու: Ստուրուան սարսափազուրկ հայացքով դիմելով ինձ ասում է.

- Այս ինչ էս գրել. Политическая банда: Մի՞թե մեր կուսակցությունը ավազակների խումբ է, մի՞թե մենք ավազակներ ենք, մնան վիրա-

վորանք կուսակցության հասցեին մենք չենք կարող ներել, դրա համար քեզ դատի ենք տալու:

Ստուրուան երևի սպասում էր, թե ես իրենից ծնկաչոք ներողություն կխնդրեի (դեռ ավելի վաղ Ստուրուան ինձ կանչել էր Վրաստանի կենտկոմ, Մոսկվա ուղարկած իմ բողոքի հետ կապված, որ Վրաստանի կուսկոմիտեն մարդագողությամբ է զբաղված՝ հայ կաթոլիկներին վրացականացնելով): Ստուրուան իզուր էր սպասում, թե ես ներողություն կխնդրեմ: Հիմնավորելու համար, որ Վրաստանի կոմունիստական կուսակցությունը քաղաքական ավազակախումբ է, բերում եմ փաստեր՝ հայ կաթոլիկներին վերաբերող խնդիրը, Վրաստանի հայաշատ քաղաքներում հայկական դպրոցները լրիվ փակելու, հայ ժողովրդի վրա անասելի ճնշում գործադրելու, Խորհրդային Հայաստանի և Վրաստանի միջև սահմանային գոտի ստեղծելու և այլ շատ խնդիրների շուրջ արտահայտվելուց հետո ասում եմ՝ «Վրաստանում տեղի ունեցող անսահման անազնվությունները, հայ ժողովրդի վրա չլսված ճնշումները ինձ ստիպեցին մտածել մնա՞լ, թե՞ չմնալ Կոմունիստական կուսակցության մեջ: Ինքս ինձ համոզեցի, որ չմնալը պատվի գործ է»:

Իմ համարձակությունից Ստուրուան շվարել էր: Սի քանի անկապ հարցեր տալուց հետո ինձ առաջարկում է.

- Որպեսզի ուրիշները չհետևեն ձեր օրինակին, կուսակցական տոմսը հետ ընդունեք: Մենք ձեր բողոքներում առաջ քաշած խնդիրները կստուգենք ձեր մասնակցությամբ:

- Առաջարկում եմ ցրել Վրաստանի կոմունիստական կուսակցությունը, քանզի միսը որ հոտում է, աղն է ճարը, իսկ աղը հոտելիս ի՞նչն է ճարը:

Ստուրուան կուստոմսը հանձնում է շրջանային կոմիտեի քարտուղարին՝ ինձ վերադարձնելու համար:

Շրջանային կոմիտեից հեռանալուց հետո անվերջ մտածում էի՝ ընդունե՞լ կուստոմսը, թե՞ ոչ: Եկա այն եզրակացության, որ եթե չընդունեմ, մի այլ ճանապարհով ինձ ոչնչացնելու են, քանի որ ես գտնվում եմ ներքին գործերի Ախալքալաքի բաժանմունքի հսկողության ներքո: Կուստոմսի հետ ընդունելը համարեցի չարիքի փոքրագույնը:

Տարիներն անցնում են, կոմունիստ իշխանավորներն արագ հարստանում են: Ոչ մի ստուգում: Ուն պետք է ստուգեին, երբ բոլոր հանցագործները իրենք կոմունիստներն էին: Կուսակցական տոմսը զրպանումս, տասներեք տարի անգործ թափառեցի: Ինձ արգելված էր աշխատանքի անցնել, որպես անհավատարիմ անձնավորություն:

1961 թ. ապրիլին նամակ ուղարկեցի Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի քարտուղար Յակով Ջարությանին: Նամակում արտահայտվում էր ջավախահայության խնդրանքը. Հարց բարձրացնել Կոմունիստական կուսակցության առաջ՝ Ջավախքը Հայաստանին միացնելու համար: Նույն պահանջով նամակների հոսքը չէր դադարում Մոսկվա:

1981 թ. հունիսի 15-ին Ջավախքը Հայաստանին միացնելու հարցի խնդրով ինձ կանչեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե (հավանական է՝ պահանջը Մոսկվայից էր): Ինձ ընդունեց ընկեր Վարդանյանը: Երկար զրույցից հետո ես հասկացա, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պատրաստ չէ այդ հարցը բարձրացնելու և հայտարարեցի՝ թույլերը հայրենիք չունեն:

Հայի ներկան այսպիսին է, սիրելի՛ ընթերցող, իսկ թե ինչ կլինի վաղը, չեմ կարող պատկերացնել: Սի բան միայն լավ եմ ըմբռնում, որ բոլշևիզմն անբնական մի բան է, զենքի ուժով փաթաթված ժողովրդի վզին: Անբնական, ուժով ստեղծված իշխանությունն, անշուշտ, տապալվելու է: Բոլշևիզմի անկման հետ միասին շատ փոփոխություններ են տեղի ունենալու: Ստալինյաններն այլևս չեն թագավորելու: Կոմունիստների անկման հետ միասին անշուշտ, թեքվելու է վրացիների աստղը և կորցնելու է իր առաջվա փայլը: Հայի աստղը խավար է այսօր, քանզի կոմունիստական Ռուսաստանը սև քողով է ծածկել այն: Երբ ընկնեն կոմունիստները, հայկական աստղը ազատվելու է իրեն փաթաթված սև քողից ու փայլ է տալու: Եթե հայ ժողովուրդը բախտ ունեցավ ազատվելու ռուսական հպատակությունից, և եթե Հայաստանում իշխանության գլուխ անցնեն ազգի նվիրյալները, ինչ խոսք, հայ ժողովրդի աստղը կստանա ցանկացած փայլը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՅ

Համամիութենական Կոմունիստական կուսակցության քարտուղար
ընկ. Ն. Ս. Խրուշչովին

Կոմ. կուսակցության նախկին անդամ 1926 թ.
Սովետական Վրաստանի քաղաքացի Ախալքալաքի
բնակիչ Հովհաննես Բարսամի Մկրտչյանից

Դիմում

Ես ծնվել եմ Ախալքալաքի գավառի Սուլդա գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում 1899 թվականին:

Շրջանի բնակիչների վիճակն անասելի ծանրացավ, երբ 1918 թ. գաղթեցինք և ենթարկվեցինք կողոպտման, ինչպես թուրքերի, այնպես էլ վրացիների կողմից: 1921 թ. փետրվար ամսին քեմալական հրոսակախմբերը նոր արհավիրքի ենթարկեցին շրջանը:

Իմ տնտեսական ծանր վիճակն ուղեկցվում էր լարված աշխատանքով:

1909 թ. մինչև 1922 թ. ես կատարել եմ վարձու աշխատանք:

1922-1924 թթ. սովորել եմ կուսակցական և քաղուսավորչական դպրոցներում:

1925-1927 թթ. աշխատել եմ որպես գրադարան-ընթերցարանի վարիչ, իսկ 1927 թ. կեսերից մինչև 1928 թ. կեսերը՝ Կարգախ գյուղի Գործադիր կոմիտեի նախագահ:

1930-1931թթ. նախագահել եմ Ախալքալաքի շրջանի սոցալա-հովազրական գանձարկղը:

1931 թ. վերջերից նշանակվել եմ Ախալքալաքի շրջանի ժողովատարանի նախագահ:

1933 թ. տեղափոխվել եմ Բոգդանովկա նույն պաշտոնով, որտեղ աշխատել եմ մինչև 1939 թ. ապրիլ ամիսը:

1940-1943 թթ. աշխատել եմ որպես իրավաբանական կոնսուլտացիայի վարիչ:

Լինելով ժողովատարանի նախագահ՝ 1932 թ. գործ հարուցեցի միլիցիայի և Պետքաղվարչության աշխատողներ Լազարաշվիլի Քիրբեի, Գրիգորյանի և մյուսների հանդեպ՝ մեղադրյալներին տանջանքի ենթարկելու, վկաներին նույնպես ծեծելու և բանտարկելու համար:

Բոգդանովկայի շրջանում նույնպես սկսվեց սուր պայքար իմ և պետքաղվարչության աշխատողների միջև: Իմ դեմոկրատական հայացքները բոլորովին դուր չէին գալիս պետքաղվարչության բաժանմունքի պետ Սաբոյին, որն սկսեց ինձ հետևել և ենթարկեց խիստ հսկողության:

Ինչպես գիտենք, 1937-1938 թթ. ամենուրեք ձերբակալություններ էին, որոնք չափազանց մեծ ծավալ ստացան:

Պետքաղվարչության քննած գործերից մի շարք գործեր հանձնեցին ժողովատարան: Իմ նախագահությամբ քննվեցին այդ գործերը, և որովհետև բոլորովին անմեղ մարդկանց դեմ հարուցել էին սուտ և զրպարտիչ մեղադրանքներ, այդ իսկ պատճառով էլ դատարանն իմ նախագահությամբ բոլորին արդարացրեց և ազատեց բանտարկությունից: Իմ համարձակ վարմունքը բոլորովին դուր չէր գալիս Սաբոյին, այդ անիրավն ամբողջ շրջանը ահ ու սարսափի մեջ էր գցել, և նրան տեսնելիս մարդիկ թաքնվում էին՝ վախենալով, թե կարող է բանտարկել: Անգամ կոմունիստները նրան հանդիպելիս շեղվում էին ճանապարհից՝ վախենալով որ կարող է բանտ տանել կամ թե չէ որևիցե մեկի վերաբերյալ կարող է ստիպել սուտ ցուցմունք տալ:

Ամբողջ Բոգդանովկայի շրջանը տագնապ էր ապրում: Խոջաբեկի դպրոցը տրամադրված էր բանտարկյալների համար: Սաբոյի մարդիկ գիշերը գյուղերից անգրագետ գյուղացիներ էին բերում ու ձերբակալում: Շրջանի ղեկավար մարմինները տեղյակ էին այն բանին, որ այդ դժբախտ մարդկանց քննությունները անցկացվում էին սոսկալի ծեծով ու լլկանքներով: Գիտեին, որ շատ բանտարկյալներ են մահանում՝ այդ կտտանքներին չդիմանալով, բայց ի՞նչ կարող էին անել, բանի որ նման դրությունն ընդհանուր բնույթ էր կրում, նամանավանդ, որ Սաբոն շատ հայեր ձերբակալելու, տանջանքի ենթարկելու համար ստացավ կրծքանշան Վրաստանի ներքին գործերի մինիստրությունից: Բոգդանովկայի շրջանի Ուլձանա, Թորիա, Հեշտիա, Մեծ և Փոքր

Խանջալիներ, Սաթխա, Ղուլալիս, Գոնդուրա, Դիլիֆ, Օրոջալար, Գարելովկա, Առլովկա [Օռլովկա] և ուրիշ գյուղեր բազում մարդկային զոհեր տվին՝ այս բառի լայն իմաստով:

Մի անգամ Կուս. պլենումին Սաբոն հայտարարեց:

- Բոլոր հայերը դաշնակցականներ են, պետք է բոլորին ձերբակալել:

Այսպիսի սանձարձակ հայտարարությանը ոչ ոք չպատասխանեց:

Ես, գլխիցս ձեռք վերցրածի նման, դուրս եկա ու դատապարտուցի Սաբոյին՝ համարելով նրա նման ելույթը հայ ժողովրդի հանդեպ անհիմն ու զրպարտչական:

Պայքարն իմ դեմ ավելի սաստկացավ. Սաբոյի արբանյակներն արդեն վխտում էին շուրջս: 1939 թ. ապրիլի 26-ի ցերեկն ինձ կանչում են Կուս. շրջկոմ: Շրջկոմի բյուրոյի նիստին քննվում է իմ հարցը: Իմ աշխատանքի վերաբերյալ ոչ մի տեղից որակում չի կատարվել, և ես բոլորովին անտեղյակ էի, թե ինչ կապակցությամբ է դրված իմ հարցը բյուրոյի քննարկմանը: Բյուրոյի նիստը բաց է անում շրջկոմի քարտուղար Դանիելյան Յայկը (Դանիելյանն այնքան էր վախենում Սաբոյից, որքան ուռենու տերևը քամուց): Յարցը տրվում է ժամանակի հերոս ինկվիզիտոր Սաբոյին: Սաբոյի ելույթից միայն պարզվեց, որ բյուրոյի արտակարգ նիստ է, և Սաբոյի անմիջական պահանջով դրված է իմ հարցը: Քանի որ իմ հարցի վերաբերյալ նյութեր էր հավաքել ինքը Սաբոն, և իր նախաձեռնությամբ էլ իմ հարցը քննվում էր բյուրոյում, դրա համար էլ ինքը՝ այդ դահիճը, կարդաց հետևյալ մեղադրական զեկուցումը.

- Մեր դատավորը բոլորովին չի ցանկանում ճանաչել մեր իշխանության և կուսակցության պատժելու քաղաքականությունը: Տասրտարվա ընթացքում ոչ մի հայ չի ձերբակալվել, բացարձակ կերպով պայքար է տանում ներք. գործ. ժողկոմատի Բոգդանովկայի աշխատողների դեմ: Մեզ վարկաբեկելու, մեր պատիվը ժողովրդի առաջ գցելու համար բոլոր այն մեղադրյալները, որոնց գործերի վերաբերյալ քննությունը տարվել է ներք. գործ. ժողկոմատի բաժանմունք, դատարանի միջոցով արդարանում են: Յայերից, իհարկե, կաշառք չի

ստանում, մենք նրան հետևում ենք ամեն քայլափոխում, բայց որովհետև ինքը՝ դատավորը, սուր ազգայնական է, դրա համար էլ հայերին ազատում է: Մեր դատավորը Դաշնակ կուսակցության ներկայացուցիչն է կոմունիստական կուսակցության մեջ: Կապ է ունեցել իր հակահեղափոխական եղբոր հետ և այժմ էլ նրա ընտանիքին նյութական օգնություն է ցույց տալիս: Ու նման մեղադրանքների մի ամբողջ շարան...

Սաբոյի զրպարտիչ ելույթից հետո շրջկոմի երկրորդ քարտուղար Զինոյանը նույնպես մեղադրեց ինձ քրիստոնեական մոտեցում ունենալու մեջ: Տիրեց քար լռություն. ինձ չպատժելու համար ոչ ոք էական մի բան չկարողացավ անել: Սաբոն հայտարարեց.

- Քանի որ ասածս ճշմարտություն է, և մեր դատավորը մեզ՝ չեկիստներին, ատելու համար մեծ հեղինակություն է ձեռք բերել ամբողջ ժողովրդի մեջ, առաջարկում եմ դատավորին հեռացնել աշխատանքից, հեռացնել կուսակցությունից և ենթարկել պատասխանատվության:

Իմ արդարացի բողոքը Սաբոյի զրպարտիչ ելույթի դեմ ապարդյուն անցավ, քանի որ նրա ահից չէին կարող պաշտպանել ինձ, որքան էլ որ համոզված լինեիմ իմ անմեղության մեջ. սաբոններին տրված էր անսահման իրավունք:

Այս դեպքից 3-4 օր հետո ես գնում եմ Ախալքալաքի շրջանի Սուլդա գյուղը՝ հորս թաղմանը ներկա լինելու: Ընտանիքս ապրում էր Ախալքալաքում:

Իմ բացակայության ժամանակ արդարադատության (եթե կարելի էր այդպիսին համարել) մինիստրության կողմից գալիս է մի հրահանգի՝ ազգությամբ հայ (թեև հայերեն ոչ մի բառ դուրս չէր գալիս րեբանից) Ստեփանովա Ա-ն, Սաբոն և Ստեփանովան միասին ներկայանում են կնոջս և պահանջում նրանից դատարանի կնիքը: Կինս թեև չի ցանկանում առանց իմ թույլտվության նրանց հանձնել կնիքը, բայց Սաբոն իմ ընտանիքի մեջ էլ, իմ երեք հիվանդ երեխաների ներկայությամբ գործի է ղնում իրեն հատուկ չեկիստական բարբարոսություն և ստանալով կնիքը՝ հեռանում է իմ տնից:

Հետևյալ օրը կինս գժված էր: Նրան տեղափոխեցի Թբիլիսի՝ հոգեբուժարան, բայց քանի որ իմ աշխատանքի վայրում ինձ մնալ չէր կարելի, իմ կյանքը վտանգի մեջ էր, տեղափոխվեցի Ախալքալաք:

Թեև հետագայում ինձ հաջողվեց Կենտկոմի միջոցով փոխել բյուրոյի որոշումը, բայց հալածանքն իմ դեմ չդադարեց: Ախալքալաքում ևս նույն ապարատը սկսեց հալածանքի ենթարկել ինձ: Մի տարի անգործ մնալուց հետո, երբ արդեն Սաբոն հեռացել էր Բոգդանովկայից, ես տեղափոխվեցի Բոգդանովկա և աշխատեցի այնտեղ որպես իրավաբանական կոնսուլտացիայի վարիչ: 1943 թ. չկարողանալով ապրել ընտանիքից առանձին, տեղափոխվեցի նորից Ախալքալաք:

Ինձ ստիպեցին աշխատել կապի բաժանմունքի պետի օգնական: Ստիպված եղա համաձայնել: Աշխատեցի մեկ տարի: 1945 թ. ապրիլ ամսին հիվանդության պատճառով թողեցի աշխատանքը և, որովհետև խոսակցություն էր տարածվել ինձ մեկուսացնելու վերաբերյալ, ընտանիքով հեռացա Ախալքալաքից ու գնացի Արևելյան Վրաստանի Գուռչանիի շրջանը, որտեղ հիվանդությունս սաստկացավ, երկար ժամանակ պառկեցի անկողնում: Շատ կարճ ժամանակամիջոցում ես տնտեսապես քայքայվեցի, որովհետև մեծ ընտանիք ունեի և ոչ մի հնարավորություն չունեի որոշ գումար տնտեսելու: Ախալքալաքից հեռանալուց հետո իմ դեմ գործ են հարուցում, թե ծանրոցների փաստաթղթերը, այն է՝ փոխադրականները, N 7ա գրքում չեն անցկացրած:

Հետագայում, ինձ դատեցին սառը վերաբերմունքի մեջ և դատապարտեցին մեկ տարվա պայմանական բանտարկության:

Իմ բացակայության ժամանակ՝ 1948թ., իմ կուսակցական հարցը քննվում է այս անգամ Ախալքալաքի շրջկոմում, և ինձ հեռացնում են կուսակցության շարքերից՝ պատճառաբանելով այն հանգամանքը, որ ես երկար ժամանակ է՝ կտրված եմ եղել կուսակցական և քաղաքական կյանքից:

Անցել են երկար տարիներ, ես չեմ կարող դուրս գալ այս հանգույցից այն պարզ պատճառով միայն, որ անձնական գործիս մեջ խոթած են պետքադվարչության կողմից իմ դեմ հարուցած մեղադրանքները, որոնք հիմնականում կրում են ազգային բնույթ:

Հաշված պատերազմից հետո՝ 14 տարիներից միայն մեկ տարի եմ աշխատել, մնացածը՝ այն է՝ 13 տարին եղել եմ անգործ: Դեռ այն զլխից ես գոհ գնացի Սովետական Վրաստանում հայերի դեմ տարվող հակահայկական քաղաքականությանը: Իմ դեմ հարուցած մեղադրանքների մեջ մեծ տեղ է գրավում այն փաստը, որ Ախալքալաք և Բոգդանովկա շրջաններում պետքադվարչության բաժանմունքների աշխատողները շատ «հակահեղափոխական» գործեր են բաց արել, իսկ ես՝ որպես տեղական բնակիչ և պատասխանատու աշխատող, այդ բանում չեմ օգնել նրանց:

Կա՛մ պետք է մատնիչ-գրպրտիչ լինել, կա՛մ դատավոր: Երկուսը միասին անհնար է լինել: Ես չէի կարող մատնիչի կնիքը դրոշմել իմ ճակատին:

Ինձ ուզում էին ձերբակալել և ոչնչացնել միմիայն հայ լինելուս համար, ուրիշ ոչ մի պատճառ չկար և չէր կարող լինել: Ես հայ եմ, ապրել և աշխատել եմ Վրաստանում չունենալով վրացու ազգանուն, բացի դրանից, երբ ինձ հալածել են որպես հայի, ամեն կերպ աշխատել եմ իմ մարդկային իրավունքները պաշտպանել, նամանավանդ, որ ես պայքարի մեջ եմ եղել և այժմ էլ ազատ չեմ պետքադվարչության սանձարձակ աշխատակիցների հետապնդումներից:

Ասածս բավական է՝ ձեզ հասկացնելու համար, որ ես զոհ եմ գնացել տարվող լկտի քաղաքականության:

Խնդրում եմ իմ կուսակցական հարցը վերանայել կենտկոմին կից կուսվերահսկիչ հանձնաժողովի միջոցով և ինձ վերականգնել կուս շարքերում:

Հայ ժողովրդի դեմ լուրջ դավ էր սարքված, նրա լինել-չլինելու հարցն էր դրված Թբիլիսիի և Մոսկվայի կողմից: Մեր ազգի առաջավոր մարդիկ կա՛մ բանտում էին, կա՛մ գնդակահարվել էին: Բոլոր այն դատավորները, որոնք ցուցաբերեցին դեմոկրատական հայացքներ և մարդասիրություն, ամխնա ոչնչացվեցին: Իմ կենդանի մնալու համար անչափ գոհ եմ իմ բախտից: Դուք չեք կարող գտնել մի հայ մարդ, որը, մեր դարում ապրելով Վրաստանում, չի ենթարկվել հալածանքի: Այսպիսի սխալ բան վրացի կոմունիստ ղեկավարները չէին թույլ տա,

որ որևէ մարդու իրենց հալածանքի տեսադաշտից դուրս թողած լինեին: Ես էլ՝ որպես հայ, ենթարկվեցի և ենթարկվում եմ հալածանքի:

Ասածներս ապացուցելու համար, որ հայ ազգի դեմ մտածված ու հետևողական հալածանք է գնացել, հարկ եմ համարում բերել հետևյալ փաստերը:

Աշխատանք գտնելու համար Վրաստանում պետք է կանխիկ դրամ ունենաս՝ կաշառք տալու համար, եթե ինքդ վրացի չես:

Երբ դիմում ես հիմնարկության որևէ ղեկավարի՝ աշխատանքի վերաբերյալ, նախ հարցնում են ազգանունդ, որպեսզի իմանան ազգային պատկանելիությունը և ըստ այնմ էլ պատասխանեն: Վրաստանում ինչ որ ձևով ընդունում են օտար ազգերին, բայց հայերի հանդեպ՝ բնաջնջման քաղաքականություն են վարում:

Ինչպես կուսակցության կենտրոնական կոմիտեն, այնպես էլ կուսակցությունը, Արևելյան Վրաստանում, Գորվա գավառում և այլ շրջաններում հայ ժողովրդին վրացիների հետ ձուլելու քաղաքականություն էին վարում և չափազանց ծանր հալածանքների ենթարկեցին բոլոր այն հայերին, որոնք, չցանկանալով կորցնել իրենց կրոնն ու ազգությունը, դիմադրություն ցույց տվեցին վրացական սանձարծակությանը:

Ինչպես Կախեթիայում, այնպես էլ Գորվա գավառում, փակեցին բոլոր հայկական դպրոցները: Թբիլիսիում նույնպես կրճատվեց հայկական դպրոցների քանակը: Հայկական դպրոցներում հայ երեխան իր ազգի պատմությունը սովորելու հնարավորությունից զրկված է: Փոխարենը սովորում է վրաց ժողովրդի պատմությունը: Հայկական շրջաններում կտրուկ կերպով արգելված է հայերեն լեզվով ռադիոհաղորդումը:

Մի անգամ պատահմամբ հայերեն լեզվով հաղորդում կատարելու համար Ախալքալաքի շրջկոմի քարտուղար Միխանաշվիլին ռադիոհանգույցի հայ աշխատողներին կանչել է շրջանային կոմիտե, ահ ու սարսափ է տվել, թե մի անգամ էլ հայերեն հաղորդելու դեպքում անհապաղ կենթարկվեն բանտարկության:

Ամենուրեք հայերին հեռացրին պատասխանատու աշխատանքներ կատարելուց: Անգործների թիվը հայերի մեջ չափ ու սահման

անցավ: Պատերազմի տարիներին վրացական բանակները պահված էին թիկունքում: Մեզ մոտ շատ դեպքեր եղան բռնաբարության և սպանության: Հանցագործներն ամեն անգամ էլ մնում էին անպատիժ:

Երբ այս մասին բողոք էր լինում, ասում էին.

- Իրենք մարդ չեն սպանել: Հայ են սպանել կամ հայուհու բռնաբարել, դրա համար ի՞նչ պատասխանատվության մասին կարող է խոսք լինել:

Հայկական շրջաններում հարկերի ծանրության տակ ժողովուրդը տնքում էր, այս տեսակետից հասան այն բանին, որ ժողովուրդն ընկնելով ծայրաստիճան աղքատության մեջ՝ ստիպված էր լինում թողնել տունուտեղը և ընտանիքով գաղթել Վրաստանի զանազան շրջանները՝ արդյունաբերության մեջ էժան գներով աշխատելու կամ իրենց՝ վրացիների տներում մի փոքր հացով աշխատելու: Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններից աղքատության պատճառով ընտանիքով գաղթած հայ գյուղացիների թիվը տասնյակ հազարներով է հաշվվում:

Բացի նրանից, որ Վրաստանում ապրող հայերին ենթարկում էին վրացականացման, հայկական շրջաններում ապրող հայ կաթոլիկ գյուղերում բացարձակ ժողովներ էին անցկացնում, թե հայ կաթոլիկները վրացական ծագում ունեն և մեր շրջանի գյուղերում խոստանալով զանազան արտոնություններ, հասան այն բանին, որ խուլգունոյի հայ կաթոլիկ գյուղացիներն իրենց երեխաներին հանեցին հայկական դպրոցներից և ուղարկեցին վրացական դպրոցներ: Հակահայկական սլայքարը տարվում էր բացարձակ, և դրա համար վրացուն նեղացնող չկար, քանի որ հրամանը գրվում էր Մոսկվայում և կատարվում Թբիլիսիում: Հայ կաթոլիկներին վրացականացման ենթարկելու գլխավոր նպատակն այն էր, որ ի հաշիվ հայերի՝ վրացիների տոկոսը բարձրացնեն և այդպիսով խոչընդոտ հանդիսանան հայկական շրջաններին՝ Սովետական Հայաստանին միանալու իրենց ցանկությունը իրականացնելու գործում:

Իսկ որ հայկական շրջանները ցանկանում են պոկ գալ վրացական հպատակությունից, այդ մասին երկու կարծիք լինել չի կարող, սամանավանդ, որ վրացի առաջնորդները հայ ազգի վերաբերյալ բա-

ցարձակ բնաջնջման քաղաքականություն են վարում: Մի կողմից կոտորում էին, մի կողմից բանտարկում, մի կողմից էլ հարյուր հազարներով հայ ընտանիքներ քշում Սովետական Միության հեռավոր շրջանները: Մեր հայկական շրջանները պետք է անջատել Վրաստանից և միացնել Հայաստանին. այլ կերպ այս ժողովուրդը չի կարող ազատ շունչ քաշել:

Իհարկե, մի նամակով կամ նամակներով երբեք չի կարելի սպառնել այն բարբարոսությունների նկարագրությունը, որոնք տեղի են ունեցել Վրաստանում մեր՝ հայերիս հանդեպ:

Իմ հետագա նամակներում ես կաշխատեմ ձեզ իրազեկ անել ավելի շատ փաստերի:

Եթե իմ ներկայացրած փաստերից որևէ բանի մեջ կասկածում եք, խնդրում եմ, հատուկ հանձնաժողովների միջոցով ստուգման ենթարկեք: Թեկուզ ստուգման ենթարկեք Արևմտյան Վրաստանի թեյի պլանտացիաները, «Տանգո» սովխոզը և այլ պետական ձեռնարկություններ: Դուք այնտեղ կտեսնեք հազարավոր հայ ընտանիքներ ոչ մարդկային պայմանների մեջ, որոնց երեխաները մեծանում են անկիրթ ու անդաստիարակ, առանց դպրոց մտնելու:

Ձեր ձեռք առած միջոցների մասին խնդրում եմ իրազեկ դարձրեք ինձ:

Հ. Բ. Սկրտչյան
1/Х 1953 թիվ

Министру иностранных дел СССР тов. А. А. Громыко

*От члена КПСС с 1926 года
1899 года рождения, жителя
города Ахалкалаки Грузинской
ССР прож. по ул. Ленина 72
Мкртчяна Оганеса Барсамовича*

З А Я В Л Е Н И Е

Присылаю Вам копию моего заявления, адресованное редактору газеты “Правда” тов. М. В. Зимянину.

Из этого моего заявления Вы поймете, что с 1953 года я веду борьбу против Грузинских уклонистов с коммунистическим мандатом. Эти уклонисты имея поддержку со стороны вышестоящих органов, в республике смело вели политику апартеида, ассимиляции, дискриминации и всякие антипартийные, антигосударственные мероприятия.

Мои жалобы на антисоветские действия ЦК КП Грузии носили последовательный характер, в результате чего я подвергался гонению и преследованию со стороны руководителя бесчеловечной системы политики апартеида, проводимые работниками ЦК КП Грузии, и даже меня, заслуженного члена КПСС, лишили права получать персональную пенсию.

Я скажу откровенно, что в прошлом, ЦК КПСС даже после смерти культа личности слепо доверял руководству ЦК КП Грузии, где творилась всякая антисоветская деятельность.

О чем я писал с 1953 года и на что я жалуюсь?

В республике под руководством так называемого ЦК КП Грузии имело место гонение и преследование национального меньшинства, в особенности против армян. Я требовал и требую, присоединить два армянских района Ахалкалаки и Богдановка с Советской Арменией.

В этих двух районах проживают около 130 тыс. армян, около 2 тыс. грузин.

Самоопределение народов исходит из идеи Марксизма-Ленинизма, поэтому каждый случай когда на земном шаре народы получают возможность на самоопределение, мы радуемся и оказываем всякую помощь.

Если закон Марксизма-Ленинизма на нас армян не распространяется, я думаю, что не надо стесняться, а надо сказать прямо, что хотя Ленин говорил об этом, но в отношении армян не упомянул, поэтому армянам препятствуют присоединиться с армянами.

Вопрос о передачи от Казахстана братскому Узбекистану три миллиона шестьсот шестьдесят три тыс. гектаров полей и выпасов, обсуждаются на президиуме Верховного Совета СССР, а мои жалобы с 1953 года ЦК КПСС направляют в ЦК КП Грузинской ССР. Я нахожу в этом отношении подход ЦК КПСС неправильным, поскольку на мои серьезные требования относятся невнимательно, высмеивают рядового члена КПСС.

В последние годы между двумя республиками по инициативе ГрузССР создан так называемый пограничный пост.

Жители армянских районов Ахалкалаки и Богдановка своим паспортом могут проехать этот пункт, а армянам проживающим на территории Сов. Армении воспрещается проезжать пункт без пропуска. Население 2-х армянских районов с ГрузССР никакой связи не имеют. С ГрузССР имеем только государственную связь.

Дело доведено до того, что мы армяне лишены всякой возможности свободно общаться с армянами из Сов. Армении. Вся наша молодежь учится в высших учебных заведениях АрмССР, там и работают.

Фактически мы лишены возможности радоваться вместе с нашими родными и лишены возможности принимать участие на печаль.

Хотя этот вопрос был поставлен перед ЦК КП ГрузССР, но голос народа остается без какого-либо ответа, так как говорит народ, а не министр. Беда в том, что ЦК КПСС на наши жалобы не обращает внимание. Напиши на кого хочешь, все равно все жалобы направляют тому органу, на которого идет жалоба.

Почему я обращаюсь к редактору газеты "Правда" и лично к Вам. Мое желание об этой исторической несправедливости, что армянскому населению препятствуют самим определять свою судьбу и свободно, в торжественном порядке присоединяться с армянской республикой. Никому не секрет, что при руководстве культа личности и царствования Берия невозможно было критиковать антипартийное, антигосударственное руководство ЦК КП Грузии так как национализм, дискриминация, ассимиляция, апартеид, в особенности против армян, со стороны вышестоящих органов оценивалось положительно. То что было в прошлом в Социалистическом государстве, мы армяне подвергались со стороны грузинских уклонистов апартеиду, лучше не вспоминать. По-моему порочность руководства Сталина известна и Вам.

Вопрос присоединения двух армянских районов Ахалкалаки и Богдановки с Советской Арменией давным давно является зрелым вопросом.

Мое заявление адресованное на имя редактора газеты "Правда" было направлено в ЦК КП Грузии, как вообще поступает ЦК КПСС т. е. формальное отношение к обоснованным просьбам граждан. Представитель ЦК КП Грузии мне заявил: - "Вопрос присоединения двух армянских районов с Советской Арменией не ставит партия и правительство Грузинской ССР так и АрмССР не ставит". Необоснованный ответ. Этот вопрос должен ставить народ, который желает оторваться от одной республики и присоединиться к другой республике. Беда в том, что мы привыкли ожидать приказа сверху, а голос народа его интересы, удобства и желания попираются.

Почему ГрузССР упорно не отказывается от этих двух армянских районов и сознательно нарушает права человека, и закон о самоопределении народов, прямо попирают права армян в двух районах. Приезжайте, на этот вопрос отвечу вам наместе. Советские законы для всех одинаковы. Грузинская ССР не может быть исключением. По-моему прошли те времена, когда Молотов из трибуны заявил: "достаточно сказать, что Грузия дала нам Сталина", а другой подхватит еще крепче подхалимничая, шагнул дальше: "нет воздуха

без Сталина". Вопрос присоединения двух армянских районов к Советской Армении если нерешить положительно, это будет большим минусом для советского строя. Конечно кое-кто из руководителей партии и правительства ГрузССР будут обижаться, зато мы - армяне двух районов все обижены.

Жалобу на партию и правительство ГрузССР, все мои жалобы направляют обратно в Грузию.

“Вашего мертвеца хороните Вы сами”.

Город Ахалкалаки древний город, бывший уездный центр. Приезжайте, посмотрите, как выглядит этот так называемый город. Посмотрите никому ненужный пограничный пункт, который создает только неудобства. Посмотрите условия жизни армянского населения в двух армянских районах Ахалкалаки и Богдановка.

Вы, как Министр иностранных дел, часто выступаете на ответственных собраниях, из трибуны ООН и всегда критикуете политику апартеида, ассимиляции, дискриминации. Вы можете убедиться, что почему я в наши дни пишу о дискриминации, апартеиде и т.д.

Об этом следует лично встретиться и побеседовать с нами. Я Вам докажу, что дух культа личности и контрреволюционная идея Берия в республике пока что не похоронены. Почему, коммунисты руководители ГрузССР, нам армянам припятствуют присоединиться к нашими родными.

Мкртчян Оганес Б.
11.12.1975 г.

*Председателю
Конституционной комиссии
тов. Л. И. Брежневу*

К вам обращается член КПСС с 1926 года, 1899 года рождения, житель города Ахалкалаки Грузиинской ССР, прожив. по улице Ленина 72 Мкртчян Оганес Барсамович.

После советизации Грузии, населения двух армянских районов Ахалкалаки и Богдановки, отданных Грузии, где проживают более 110 тысяч армян, всегда ожидали, что им предоставят право на самоопределение и они присоединятся к Советской Армении, так как указанные два района, где армяне составляют не менее 93%, вплотную присоединены с территорией Советской Армении. В течение 60 лет стремления армянского населения не оправдались, историческая несправедливость остается в силе до сих пор, так как в прошлые долгие годы во главе руководства республики находились уклонисты-националисты. Не секрет, что при жизни культа личности и царствовании Берии, в республике открыто проводили политику дискриминации, ассимиляции, апартеида, в особенности в отношении армян.

Закон марксизма-ленинизма о самоопределении народов для нас коммунистов закон святой, закон совести.

С грузинской ССР населения двух армянских районов никакой связи не имеют. Учреждения имеют только официальную связь, а народ связан с Советской Арменией.

По моему пониманию, ст. 77 проекта новой Конституции, историческую несправедливость подкрепляет основным законом. Ст. 77 гласит – территория Советской республики не может быть изменена без её согласия. В течение 60 лет нам армянам не было предоставлено право на самоопределение. Наивностью будет думать, что коммунистическая Грузия откажется от этих двух армянских районов и согласится на основании права о самоопределении народов предоставить армянам право присоединиться с Арменией.

Не плохо будет для изучения положения армян в двух районах направить Московскую комиссию. На месте осмотреть тысячи армянских домов, закрытых снаружи, а сами жильцы переселены в Армянскую ССР на постоянное жительство. Осмотреть так называемый пограничный пункт далеко от границы своими глазами увидеть шлагбаум, который вызывает серьезное недовольствие, армянам из Советской Армении не разрешается проехать пункт без пропуска. Мы фактически лишены возможности вместе с нашими родными, проживающих в Арм. ССР, радоваться вместе и встречаться на печаль, когда это нужно. Пограничный пункт поставлен в середине двух республик.

По-моему два армянских района необходимо присоединить к Армении и навсегда освободиться от этого назревшего вопроса.

Я полагаю, что ст. 77 проекта Конституции необходимо дополнить словами:

„Желание или нежелание союзной республики о передачи другой союзной республике определенной территории не может препятствовать народом СССР об их сомоопределении.“

Обращаюсь к вам и прошу: мое предложение поставить на обсуждение комиссии.

Одновременно прошу организовать комиссию для проверки поставленных мною вопросов.

О принятых Вами мерах прошу меня уведомить.

/Мкртчян О.Б./
22/VIII. 1977 г.

Հարգելի ընկեր Մոլոտով!

Ցնծությամբ լսեցի՞նք կառավարության որոշումը հանրապետությունների իրավունքների ընդլայնման մասին:

Անկասկած այդ որոշումը բխում է մեր կուսակցության ազգային ճիշտ քաղաքականությունից: Այդպես է պահանջում ներկան, այդպես է պահանջում ժողովուրդների անկախությունը:

Ախալքալաքի գավառը (Ախալքալաք և Բոգդանովկա շրջանները) հայաբնակ գավառ է, որն ընկած է Հայաստանի և Վրաստանի միջև: Շրջանի տնտեսական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ է այն միացնել Խորհրդային Հայաստանին: Այդ է պահանջում շրջանի բնակչության 90%-ի շահը:

Ախալքալաքի գավառի մեջ էին մտնում Չիխաբուլո և Բուլունթա վրացական գյուղերը: Այս գյուղերի բնակիչները, չցանկանալով մնալ հայաբնակ գավառի կազմում, դիմում ներկայացրին Վրաստանի կենտգործկոմին և խնդրեցին, որ իրենց միացնեն Բորժոմի շրջանին: Չնայած նրան, որ այդ գյուղերի կապը Բորժոմի հետ, հատկապես ծնռան ամիսներին, անհնար էր, այնուամենայնիվ, կենտգործկոմը բավարարեց այդ գյուղերի պահանջը և միացրեց Բորժոմի շրջանին:

Խոսք չկա, որ Ախալքալաքի գավառը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջը վաղուց է շոշափվում, միայն թե պարզ չէ, թե՞ ինչու մինչև այսօր մեր ժողովրդի արդարացի ծայրը խեղդվում է:

Գավառի հայերը տնտեսական ու մշակութային կապերով կապված են Խորհրդային Հայաստանի հետ: Լուծելով այս խնդիրը՝ դուք ընդմիջտ կբավարարեք հայերիս ցանկությունը և կփրկեք 90 հազարից ավելի հայերի ներկայիս կացությունից:

Այս նամակը գրում եմ շատ մարդկանց թախանձանքով և չներժելով նրանց խնդրանքը՝ դիմում եմ Ձեզ:

Ս. Մանուկյան, գյուղ Բեժանո

1944թ. 13-ը փետրվարի

Ծանոթություն: Քանի որ 40-ականներին Հ. Մկրտչյանը հսկողության տակ էր, հետևաբար, նա գաղտնի էր կազմակերպում Ջավախքի ազգաբնակչության նամակների հոսքը ԽՄԿԿ ԿԿ:

Հարգելի Ձարուբյան*

Ձեզ անհանգստացնում է Ախալքալաք քաղաքի, Կիրով փողոցի թիվ 1 տան բնակիչ, 1926 թ. կուսակցական, 62 տարեկան՝ Յովհաննես Սկրտչյանը:

Ձեզ հայտնի պետք է լինի, որ նախկին Ախալքալաքի գավառը, այժմ՝ Ախալքալաք և Բոգդանովկա շրջանները, հայկական շրջաններ են, որտեղ ապրում են 110 հազար հայեր, իսկ վրացիները կազմում են շուրջ 3-4 %:

Մինչև 1955-1956 թթ. այս շրջանների հայ աշխատավորությունը ենթարկվել է բազմապիսի հալածանքների: Հայ մարդը հայերեն լեզվով ռադիոհաղորդում լսելու իրավունքից զրկված էր, ամենուրեք իշխում էր հարկային ապօրինի ճնշումը, հալածանքը հայերի հանդեպ անցել էր ամեն սահման, ոչնչացնում էին այն ամենը, ինչ հայկական էր...

Երկու հայկական շրջաններում ապրում են մոտ 20 հազար հայ կաթուղիկներ: Վրաստանի կառավարությունը ձգտում էր ի հաշիվ հայերի վրացիների թիվը ավելացնել և հասավ որոշակի հաջողությունների: Քաղաքում լույս է տեսնում շրջանային թերթ: Ես չեմ հիշում, որ անցյալում այս թերթի խմբագիրը վրացի լիներ: Բայց վերջին տարիներին ոչ միայն խմբագիրը, այլ աշխատողներից շատերը վրացիներ են և ազգաբնակչության 4%-ին թերթում ավելի շատ տեղ է տրված, քան մնացած 94%-ին: Սա կոպիտ ճնշում է մի բուսմարդկանց կողմից ամբողջ ազգաբնակչության հանդեպ: Մեր ողջ երիտասարդությունը կապված է Երևանի հետ, քանի որ թբիլիսիում հայկական բարձրագույն դպրոցը փակեցին և չթողեցին ոչ մի ապարեզ մեր երիտասարդության համար:

Աշնանը, երբ Սովետական Հայաստանը իր 40-ամյա տոնակատարությանն էր պատրաստվում, մեզ մոտ լուրեր տարածվեցին, թե

